

1535

ՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Յ. ԳԵԼԵՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Մ. Գ. ՆՂԻՐԵԿԱՑԻ

ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՈՒԽՏԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԱՐԱԿԱՆ Ա. ԵՒ Բ. ՏԱՐԻ

ԵՐԿՍԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԳՐԱՏԱՆ
Կ. ՆՂԻՐԵԿԱՑԻ
Կ. ՆՂԻՐԵԿԱՑԻ ԲԻՒ 25

2(075)
Է-40

ԳՐԱՏՈՒՆ
Յ. ԳԵԼԵՃԵԱՆ

Կ. ԳՈՒԻՍ
1913

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

03 AUG 2009

ՆՈՐ ՀԻՄՆԱԲԱԿՈՒԹԻՒՆ Յ. ԳԸԼԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

2 (075) էջ.
2 - 40

Handwritten red mark resembling the number 24.

ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՈՒԽՏԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



Printed in Turkey

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. ԵՒ Բ. ՏԱՐԻ

ԵՐԿՍԵՌ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



ՅՈՒՆԱՆՆԵՄ ԳԸԼԸՃԵԱՆ
ԳՐԱՏՈՒՆ
Կ. Պոլիս Զագագիլլար Թիւ 25
H. KILIDJIAN
LIBRAIRIE
COUR PLE, TOUKMANOULAR 25

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Յ. ԳԸԼԸՃԵԱՆ
1913

ՏԳՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
№ 151



444
40

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Printed in Turkey

Իբրև Յառաջաբան՝ կ'ուզենք երկու խօսք միայն ուղղել արժանայարգ ուսուցիչներուն՝ որոնք պատիւը պիտի ընեն ներկայ բաժնակիրքը գործածելու: — Պէտք չէ սահմանափակուին այն հրահանգներուն մէջ՝ զորս կցած ենք իւրաքանչիւր հատուածի, պարզապէս աշակերտներուն իմացականութիւնը արթուն պահելու և թէ՛ պատմուած նիւթերուն, թէ՛ անոնց յարակից ծանօթութեանց մասին գաղափար մը տալու համար: Սրբազան Պատմութիւնը, թէ՛ Հին Ուխտին և թէ՛ Նոր Ուխտին, թելադրիչ դասերու ամփոփոյք մըն է իր բոլոր մասերուն մէջ և ուսուցիչ մը միշտ կրնայ անոնց մէջ պարզուած գեղեցիկ օրինակներէն օգտուելով՝ բաբոյականի հիմնական սկզբունքներուն ընտելացնել աշակերտը, ոչ թէ լոկ վերացական գաղափար մը տալով անոնց մասին, այլ աշխատելով որ մշտակայ վարժութեան շնորհիւ բնաւորութիւն դառնան անոնք:

Մենք չուզեցինք ներկայ տարրական մասը ծանրաբեռնել մանրամասն ծանօթութիւններով, իւրաքանչիւր հատուածի մէջ ջանացինք պահել կարելի պարզութիւնը, նկատի առնելով տարիքն ու դարբացման աստիճանը այն աշակերտներուն որոնց ուղղուած է: Միջին դասընթացքը զոր պիտի հրատարակենք մօտ օրէն, պատրաստած ենք աւելի լայն ծրագրով: Եւ նոյն իսկ սահմանափակ դարբացման տէր ուսուցիչներու ձեռքին մէջ զայն օգտակար գործիք մը դարձնելու համար՝ իւրաքանչիւր հատուածի կցած ենք պատմական, աշխարհագրական, և առ հասարակ ամէն դժուարիմաց անուններու և ասութեանց մասին ամփոփ բացատրութիւններ, որոնք նորոքիւն ժըն եւ միկելո հիւսիս հրատարակուած Մրբազան Պատմութեան դասագիրքերու մէջ, և որոնք, մէկ կողմէ՝ ուսուցչին գործը դիւրացնելով, միւս կողմէ՝ ալ մեծապէս պիտի

նպաստեն աշակերտներուն ծանօթութեանց շրջանակը ընդլայնելու :
 Լեզուի մաքրութիւն, աշակերտին արագ ու դիւրին ըմբռ-
 նողութեան յարմար բացատրելու եղանակ, ուսուցչին համաք
 առաջնորդող ու թելադրիչ հրահանգներ, լաւ ընտրողութիւն
 ամէնէն էական ու հրահանգիչ հատուածներու, հարուստ ծանօ-
 թութիւններ, ու գեղեցիկ և աշակերտին համար իրական հաճոյք
 մը դառնալու սահմանուած պատկերներ՝ Սրբազան Պատմութեան
 այս կրկին Բաթագքները (Տարրական և Միջին) կը դարձնեն ճշ-
 մարիտ նորութիւն մը՝ մինչև այսօր հրատարակուած համանման
 դասագիրքերու մէջ :

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ




Ա. ՄԱՍ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ




Ա. ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԷՆ ՄԻՆՉԵՒ
 ԲԱՐԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻԻՆԸ



1. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻԻՆԸ

Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց .
 բայց երկիրը անձև ու պարապ էր . չորս դին խոր ջու-
 րեր կալին ու խաւարով պատած էր :




Երկիրը պարապ էր ու չորս դին խաւարով պատած

Այն ատեն՝ Աստուած լոյսը ստեղծեց և զայն խաւա-
 րէն բաժնելով, լոյսին անուըր ցերեկ և խաւարին անուըն
 ալ գիշեր դրաւ : Առաջին օրն էր ատիկա :

Երկրորդ օրը Աստուած ստեղծեց երկինքը: Երրորդ օրը Ջուրերը բաժնեց ցամաքէն, և հրամայեց որ ցամաքին վրայ բոյսեր ու տեսակ տեսակ պտղատու ծառեր բուսնին:

Չորրորդ օրը ստեղծեց այն աստղերը որոնք ցերեկը գիշերէն պիտի զատէին. ցերեկուան համար յատ-



Գրաստին կենդանիները

կացուց արևը, ու գիշերուան համար ալ լուսինը և միւս աստղերը: Հինգերորդ օրը Աստուած ստեղծեց ձուկերը և թռչունները:

Վեցերորդ օրն ալ ստեղծեց ցամաքին վրայ գանուռոյ կենդանիները: Իսկ ամէնէն ետքը գեանի հողէն ստեղծեց մարդը, ճիշդ իր պատկերին պէս, շունչ ու հոգի տուաւ անոր, և անունը դրաւ Ադամ. յետոյ Ադամի մէկ կողէն ստեղծեց նաև կինը, որուն անունն ալ Եւա դրաւ: Աստուած օրհնեց զանոնք, ըսաւ որ իշխեն կենդանիներուն, թռչուններուն ու խոտերուն վրայ, և անոնց ցոյց տուաւ իրենց ուտելիքը, որ սերմ ունեցող



Ադամ եւ Եւա Գրաստին մեջ

բոյսերէն և ծառերու պտուղներէն կը բաղկանար: Իսկ կենդանիներուն և թռչուններուն ալ խոտը տուաւ ուտելիք:

Երբոր այսպէս աշխարհի ստեղծագործութիւնը աւարտեց, Աստուած տեսաւ որ ամէն բան լաւ է եղած: Աւելի քան որը հանգչեցաւ, օրհնեց այն օրը և զայն սուրբ հռչակեց:

Հրահանգ. — Ի՞նչ ձև ունէր երկիրը երբ Աստուած զայն ստեղծեց. — Օրը քանի՞ մասերու բաժնուած է, ի՞նչ տարբերութիւն ունին այդ մասերը, ի՞նչ կ'ընենք անոնց տևողութեան միջոցին. — Ո՞ւր կը բնակին թռչունները և ձուկերը. — Ի՞նչ պիտի ուտէին Ադամը և Եւան. — Որո՞նք են սերմ ունեցող բոյսերը և ի՞նչ կու տան մեզի. — Ի՞նչ կը կոչուին արարչագործութեան վեց օրերը. — Ի՞նչ կը կոչուի հանգիստի օրը. — Ուրիշ ի՞նչ օրեր սուրբ կը պահենք:

2. ԴՐԱԽՏԷՆ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

Աստուած Ադամն ու Եւան Արեւելքի կողմը գրասուղ շատ գեղեցիկ պարտէզի մը մէջ դրաւ: Այդ պարտէզը Դրախտն էր. ամէն տեսակէ աղուոր ծառեր կային անոր մէջ և ամէնքն ալ համեղ պտուղներ ունէին: Այդ ծառերուն մէջն էր նաև «Կեանքի Ծառ»ը՝ որուն պտուղը ուտողը չէր մեռներ:

Աստուած ըսաւ Ադամին որ մշակէ հողը և պարտէզը պահէ: Յետոյ անոր արտօնութիւն տուաւ որ բոլոր ծառերուն պտուղներէն ալ ուտէ, բացի մէկ ծառի մը որ պարտէզին մէջտեղը կը գտնուէր և «Բարին ու Չարը ճանչնալու Ծառ» կը կոչուէր: — «Չբլայ որ այս ծառին պտուղէն ուտէք, ըսաւ Աստուած, եթէ ուտէք՝ կը մեռնիք»:

Ադամ ու Եւա հանգիստ կ'ապրէին, երբ օձը, որ կենդանիներուն ամէնէն խորամանկն էր, Եւան խաբեց



Եւա հաւատաց, կերաւ պտուղէն և Ադամին ալ տուաւ

թէ «Բարին ու Չարը ճանչնարու Ծառ»ին պտուղէն ուտելով չեն մեռնիր: Եւա հաւատաց, կերաւ պտուղէն և Ադամին ալ տուաւ, որ նոյնպէս կերաւ:

Այն ատեն Աստուծոյ ձայնը լսեցին, և որովհետեւ անհնազանդ գտնուած էին, վախցան՝ ու պահուրտեցան: Բայց Աստուած հարցուց անոնց թէ ո՞ւր են և թէ ի՞նչ ըրին: Ադամ պատմեց թէ արգելուած ծառին պտուղէն կերած էր և թէ Եւան իրեն տուած էր պտուղը: Եւան ալ ըսաւ որ օձը ղինքը խաբեց:

Աստուած անիծեց օձը որ միշտ սողայ ու հող ուտէ և իր խաբած կնոջմէն ծնելիքները իր գլուխը ջախջախեն: Յետոյ՝ Ադամին ու Եւային ըսաւ. «Ձեր անհնազանդութեան պատճառաւ երկիրը անիծեալ պիտի ըլլայ, փոռչ ու տատասկ պիտի արտադրէ, և դուք ձեր հացը

ձեր ճակտին քրտինքով պիտի ուտէք: Մինչև որ մեռնիք ու հող դառնաք. ինչպէս որ հող էիք»: Եւ որպէս զի «Կեանքի Ծառ»ին պտուղէն ուտելով



Ադամին և Եւային դրախտէն արտաքսուիլը

մեռնելէ չազատին, Աստուած Ադամն ու Եւան դուրս վճնտեց Դրախտէն՝ հրեղէն սուրով հրեշտակին միջոցաւ, և Քերովբէները պահապան դրաւ Դրախտին մէջ:

Հրահանգ.— Ինչե՞ր կային Դրախտին մէջ.— Ադամ եւ Եւա ինչպէ՞ս անհնազանդ եղան.— Ո՞ր կողմը կը գտնուի Արեւելքը.— Ուրիշ ի՞նչ կողմեր ունի աշխարհը.— Ինչո՞ւ օձը կը սողայ և երբ գլուխը կը ջախջախենք.— Ի՞նչ կը նշանակէ ճակտի քրտինքով սպրիլ.— Ինչո՞ւ Ադամ և Եւա Դրախտէն վճնտուեցան:

3. ԿԱՅԷՆ ԵՒ ԱՐԷԼ

Դրախառն արտաքսուներէն վերջ՝ Ադամ և Եւա երկու զաւակ ունեցան: Անդրանիկը որ Կայէն կը կոչուէր, հողագործ եղաւ, իսկ կրտսերը՝ Արէլ՝ խաշնարած: Անդամ մը՝ Կայէն և Արէլ Աստուծոյ ընծայ տարին:



Կայէն յարձակեցաւ եղբօրը վրայ և զայն սպաննեց Կայէն՝ իր մշակած հողիբուն բերքէն քիչ մը բան տարած էր, իսկ Արէլ՝ իր հօտին անդրանիկ ու պարարտ գառնուկները: Աստուած Արէլի ընծան ընդունեց, և Կայէն բարկացաւ ու նախանձեցաւ: Ադամի և Եւայի անհնազանդութենէն իջվեր մարդ-

կային սիրաբ չարացած էր: Կայէն որոշեց վրէժ լուծել: Քիչ ետքը, մինչդեռ դաշտը կը գտնուէին, Կայէն յարձակեցաւ Արէլի վրայ և զայն սպաննեց:

Այն ատեն Աստուած երեւցաւ իրեն և հարցուց թէ ո՞ւր է եղբայրը: Կայէն ստեց, ըսելով որ չգիտեր, բայց Աստուած որ ամէն բանի տեղեակ էր, անիծեց զայն, և ըսաւ. «Քու մշակած հողը արդիւնք չտայ և դուն թափառական ու փախստական պտտիս»:

Կայէն հեռացաւ այն տեղէն և գնաց ընակեցաւ Նայիդ երկիրը:

Ադամ և Եւա ուրիշ զաւակ մըն ալ ունեցան, որուն անունը Սեթ դրին: Սեթ բարի ու առաքինի էր. իր յաջորդներն ալ այդպէս եղան. այս պատճառաւ սկսան «Աստուծոյ որդի» կոչուիլ, մինչդեռ Կայէնի յաջորդները, որոնք չար էին, «Մարդու որդի» կը կոչուէին:

Հրահանգ.— Աստուած ինչո՞ւ Կայէնի ընծան չընդունեց և Արէլին ընդունեց. — Ինչո՞ւ մարդիկ չարացած էին. — Ինչո՞ւ Սեթի յաջորդները «Աստուծոյ որդի» և Կայէնի յաջորդները «Մարդու որդի» կոչուեցան. — Ի՞նչ էր իրենց տարբերութիւնը:


4. ԶՐՀԵՂԵՂԸ

Սեթի և Կայէնի յաջորդները հետզհետէ բազմացան: Առաջինները որոնք առաքինի էին, կամաց կամաց խառնուեցան վերջիններուն և անոնցմէ գէշ օրինակ առնելով՝ երեսնք ալ չարացան և սկսան չկատարել Աստուծոյ պատուէրները:

Աստուած երկար ատեն համբերելէ վերջ՝ տեսնելով որ չափաի չափուին, որոշեց զանոնք պատժել:

Անոնց մէջ՝ առաքինի մարդ մը կար որ Նոյ կը կոչ-

ուէր: Աստուած կանչեց զայն և ըսաւ. «Ջրհեղեղով
պիտի ջնջեմ երկրի վրայ գտնուող մարդիկը, որոնք զիս
մոռցան: Բայց պիտի փրկեմ քեզ, որովհետեւ մարդոց
մէջ ամէնէն արդարն ես: Փայտէ մեծ տապան մը շինէ,



Նոյի տապանը

անոր մէջ մտիր քու զաւակներուդ, կնոջդ և զաւակներուդ
կիներուն հետ. հետդ առ նաև բոլոր կենդանիներէն
երկուքական հատ, և ձեզի ու անոնց պէտք եղած ուտե-
լիքը:»

Նոյ Աստուծոյ պատուէրը գործադրեց: Ասոր վրայ
քառասուն օր և քառասուն գիշեր շարունակ անձրեւ
եկաւ, ջուրը ծածկեց մինչեւ անգամ ամէնէն բարձր
լեռները, և երկրի վրայ գտնուող ամէն բան ոչնչացաւ:

Հարիւր յիսուն օր ջուրերը երկրի վրայ մնացին:
Վերջէն Աստուած հով մը հանեց, ջուրերը սկսան իջնել
և Նոյի տապանն ալ Այրարատ լեռան գագաթը նստաւ:

Նոյ բացաւ տապանին պատուհանը և ազոռաւ մը
արձակեց. ազառաւը ետ չդարձաւ: Յետոյ արձակեց

աղաւնի մը, որ հանգչելու տեղ չգտնելով ետ դարձաւ:
Եօթ օր ետքը արձակեց ուրիշ աղաւնի մը որ նոյն իրի-
կունը տապան դարձաւ՝ կտուցին մէջ ձիթենիի կանանչ
սոս մը բռնած: Նոյ հասկցաւ որ ջուրերը սկսեց ևս
քաշուիլ, և եօթ օր վերջ դարձեալ արձակեց աղաւնին
որ ալ չդարձաւ: Երկիրը չորցած էր:

Աստուած հրամայեց Նոյի որ դուրս ելլէ իր բոլոր
ընտանիքով ու հետը առած կենդանիներով: Նոյ հա-



Նոյ դուրս ելաւ տապանէն և փառք տուաւ Աստուծոյ

զանդեցաւ և դուրս ելլելէն վերջ սեղան շակեց ու ող-
ջակէզ մատոյց Աստուծոյ:


Աստուած ըսաւ որ այլեւս ջրհեղեղ չպիտի ընէ. և
իր խոստման նշան տուաւ ծիրանի գօտին, ըսելով որ

երբ անձրեւ գայ, անիկա պիտի երեւայ և մարդիկը ապահովցնէ:

Տապանէն կլելէն ետք Նոյ երկրագործութեամբ զբաղեցաւ, այգի տնկեց ու զինի պատրաստեց:

Հրահանգ. — Սեթի յռջորդները ինչո՞ւ չարացան. — Ի՞նչ է ջրհեղեղը. — Ի՞նչ է տապանը. — Ինչո՞ւ Նոյ ազատեցաւ. — Ո՞ւր կը գտնուի Այրարատ լեւը. Հայերը ուրիշ ի՞նչ անուն կու տան անոր. — Երկրորդ անգամ տապանէն թռցուած աղանիին ձեթենիի կանանչ ոստ մը բերելը ի՞նչ կը նշանակէր. — Երրորդ անգամ զբկուած աղանիին ինչո՞ւ չգարձաւ. — Ի՞նչ է ողջակէզը. — Ի՞նչ է ծիրանի դօտին, քանի՞ գոյն ունի:

5. ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ



Բաբելոնի Աշտարակը

Նոյ երեք զաւակ ունէր, Սեմ, Գամ և Յաբեթ, որոնց սերունդն են այսօրիկ ըստ մարդիկը:

Սննք կամաց կամաց բազմացան և Այրարատէն իջնելով հասան Սենաար կոչուող դաշտին վրայ ու հոն կանգ առին:

Սմէնքն ալ միեւնոյն լեզուն կը խօսէին: Զուգելով իրարմէ բաժնուիլ, որպէսցին շինել քաղաք մը և աշտարակ մը:

բակ մը որուն կատարը մինչեւ երկինք պիտի հասնէր, և որուն մէջ պիտի բնակէին ամէնքն ալ: Սակայն Աստուած կը փափաքէր ամբողջ երկիրը բնակուած տեսնել. այս պատճառաւ խառնակեց անոնց լեզուն, սկսան իրարու խօսածը չհասկնալ, և անկատար թողուցին աշտարակը որ Բաբել, այսինքն «խառնակութիւն» կոչուեցաւ: Յետոյ ցրուեցան երկրին զանազան կողմերը:

Անոնցմէ ամէնքն ալ առաքլինի չեղան. մեծ մասը մտեցաւ Աստուծմէն տեսած բարիքը և սկսաւ կուռքեր պաշտել:

Աստուած իր պաշտպանութիւնը վերցուց անոնց վըրայէն, և իրեն հաւատարիմ մնացած մարդ մը՝ Աբրահամը զատելով, որոչեց անոր ցեղը իր ժողովուրդը դարձնել:

Այդ ժողովուրդը՝ որուն նահապետը եղաւ Աբրահամ, կոչուեցաւ Իսրայելացի, այսինքն «Աստուծմէ բնորուած»:

Հրահանգ. — Որո՞նք Սենաար իջան, և ի՞նչ ըրին այնտեղ. — Ինչի՞ պիտի ծառայէր աշտարակը, և ինչո՞ւ Աստուած արգելեց անոր շինութիւնը. — Որո՞նք են Իսրայելացիք, և ինչո՞ւ այդ անունով կոչուեցան:

Ե
Ե
Ե



Բ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ

6. ԱՔՐԱՀԱՄԻ ԿՈՉՈՒՄԸ

Աբրահամ Նոյի սերունդէն էր և կը բնակէր Միջագետքի Խառան քաղաքը: Հայրը՝ Նոյի միւս յաջորդներուն պէս մոռցած էր Աստուածը, բայց ինք աստուածապաշտ ու արդար կը մնար և կը սիրուէր Աստուծոմէ:

Օր մը՝ Աստուած կանչեց զայն և ըսաւ. «Ելիր քու հայրենի երկրէդ և եկուր այն երկիրը զոր քու սերունդը



Աբրահամ Ղովտի և Սառային հետ ճամբայ ելաւ

զիդ պիտի յատկացնեմ. որովհետեւ կ'ուզեմ մեծ ազգի մը նահապետը ընել քեզ) :

Աբրահամ հնազանդեցաւ և իր Սառա կնոջ ու եղբորորդիին՝ Ղովտի, ինչպէս նաև թոյր հօտերուն հետ զնաց Աստուծոյ ցոյց տուած անղը որ Քանանացոց եր-

կիրն էր: Բայց իրենց հօտերը այնքան բազմացան որ երկիրը սկսաւ նեղ գալ: Աբրահամի հովիւները չարունակ կը կռուէին Ղովտի հովիւներուն հետ:

Այն ատեն՝ Աբրահամ Ղովտի առաջարկեց որ բաժնուին: Ղովտ հաւանեցաւ և զնաց բնակեցաւ Սոդոմ քաղաքը, որուն բնակիչները սակայն շատ գէշ մարդիկ էին, անոր մօտ գտնուող Գոմոր քաղքին բնակիչներուն պէս:

Ղովտի հոն գտնուած ատենը՝ չորս թագաւորներ պատերազմեցան Սոդոմի թագաւորին հետ, և քաղաքը զրաւելով՝ Ղովտն ալ գերի բռնեցին իր բոլոր ընտանիքին հետ: Փախստական մը Աբրահամին իմացուց եղածը: Ատոր վրայ, Աբրահամ, իր ծառաներէն երեք հարիւր տասնութ մարդիկ առնելով՝ յարձակեցաւ Ղովտը գերի բռնողներուն վրայ, յաղթեց, և անոնց ձեռքէն առաւ ամբողջ աւարը, ինչպէս նաև Ղովտն ու ընտանիքը:

Հրահանգ.— Ի՞նչ է նահապետը.— Աբրահամ որո՞նց նահապետ պիտի ըլլար.— Ինչո՞ւ Աստուած զինքը ընտրեց.— Ո՞վ էր Ղովտ և ինչո՞ւ Աբրահամէն բաժնուեցաւ.— Ի՞նչ փորձանք երկաւ Ղովտի գլխուն.— Ի՞նչ տեսակ քաղաքներ էին Սոդոմ և Գոմոր:

7. ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄԸ

Խառանէն ելած միջոցին՝ Աստուած խոստացած էր Աբրահամի թէ մեծ ազգի մը նահապետը պիտի ընէ զինքը: Բայց տարիները կ'անցնէին, Աբրահամ իննսունընը տարեկան էր, Սառա ալ իննսուն տարեկան, և դեռ զաւակ չունէին: Այս պատճառաւ Աբրահամ տխուր էր:

Բայց Աստուած երեւցաւ իրեն, յոյս տուաւ որ մին-

չև տարի մը զաւակ մը պիտի ունենայ: Յետոյ ըսաւ. «Երկինք նայէ՛ և եթէ կրնաս՝ համրէ՛ աստղերը. քու սերունդդ ալ այդքան բազմաթիւ պիտի ըլլայ»): Աբրահամ հաւատաց:

Ամառուան տաք օր մը երբ Աբրահամ նստած էր իր վրանին առջև, երեք անձանօթներ տեսաւ և իսկոյն



Երկինք նայէ՛ և եթէ կրնաս՝ համրէ՛ աստղերը

անոնց ընդառաջ վազելով ըսաւ. «Եկէ՛ք հանգչեցէ՛ք սա ծառին տակ, որ ջուր բերելով ձեր ոտքերը լուան և պատառ մը հացով սրտերնիդ զօրացնէք. յետոյ կը շարունակէք ձեր ճամբան:»

Երեք անձանօթները, որոնցմէ մէկը Աստուածն էր՝ և միւս երկուքն ալ հրեշտակներ էին, հաւանեցան: Աբրահ-

համ ազնիւ տեսակէ հաց ու լաւ կերակուր պատրաստել տուաւ, և ինք ծառայեց օտարականներուն:

Երբոր ճաշը աւարտեցաւ, Աստուած ըսաւ իրեն թէ տարիէ մը Սառա զաւակ մը պիտի ունենայ: Սառա որ վրանին դրան մէջէն մտիկ կ'ընէր, ծիծաղեցաւ ներքնապէս, որովհետև չէր հաւատար: Աստուած հասկցաւ և կրկնեց իր ըսածը, աւելցնելով թէ Աստուծոյ համար անկարելի բան չկայ: Յետոյ անգամ մըն ալ կրկնեց իր խոստումը:

Երեք հիւրերը ելան և դէպի Սողոմ ուղղուեցան: Աբրահամ ալ՝ ճամբու դնելու համար՝ անոնց ընկերացաւ:

Հրահանգ.— Աստուած Աբրահամին ինչ խոստացած էր, և ինչո՞ւ Աբրահամ տխուր էր.— Աբրահամ ինչո՞ւ անձամբ սպասարկեց հիւրերուն.— Ինչ է վրանը, մարդիկ ուրիշ ինչ տեսող ընտկարաններու մէջ ապրած են.— Ինչ նշանակութիւն ունի հիւրը ճամբու դնելու սովորութիւնը:

8. ՍՈՂՈՄ ԳՈՄՈՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ճամբան՝ Աստուած Աբրահամի յայտնեց թէ պիտի պատժէ Սողոմն ու Գոմորը, որոնց անօրէնութեան չափը անցած էր:

Աբրահամ ուզեց բարխօսել, ըսաւ որ թերևս յիսուն արդար մարդիկ կը գտնուին այնտեղ, որոնք միւսներուն մեղքին համար պիտի զոհուին: Աստուած խոստացաւ որ եթէ նոյն իսկ տասը հատ արդար գտնէ, չպիտի պատժէ քաղաքները: Յետոյ աներեւութացաւ:

Երկու հրեշտակները իրիկուան դէմ Սողոմ հասան: Ղովտ որ քաղաքին դրան առջև նստած էր, զանոնք իր

տունը առաջնորդեց: Հրեշտակները, իրենց գալուն պատ-
ճառը յայանելով, Ղովտի ըսին որ կինն ու երկու աղ-
ջիկները առնելով քաղաքէն մեկնի:

Աստուծո՛ւ ամէնքը մէկ սկսան հեռանալ քաղաքէն:



Սողոմ Գոմորի կործանումը

հրեշտակները պատուիրեցին փախստականներուն որ բնաւ
ետեւնին չնային և փախչին դէպի լեռները:

Հազիւ անոնք հեռացած էին, երբ Աստուած ծծումբ
ու կրակ թափեց մեղաւոր քաղաքներուն վրայ, որոնք
խսկոյն այրեցան ու մոխիր դարձան իրենց մէջի բոլոր
մարդոցմով:

Ղովտին կինը որ չէր կրցած հետաքրքրութիւնը
զսպել և ետին նայած էր՝ քաղաքը տեսնելու համար,
աղէ արձան կտրեցաւ:

Երբ առտուն Աբրահամ գնաց այնտեղ ուր Աստու-
ծոյ բարեխօսած էր Սողոմի և Գոմորի համար, տեսաւ
որ քաղաքները կործանած են, կը վառին ու կը ծխան:

Հրահանգ. — Ի՞նչ կը նշանակէ «անօրէնութեան չափը ան-
ցընել» բացատրութիւնը. — Ինչո՞ւ Ղովտ ազատեցաւ Սողոմի
կործանումէն. — Ղովտին կինը ինչո՞ւ աղէ արձան կտրեցաւ. —
Աստուած ինչո՞ւ չուզեց գործադրել Աբրահամի տուած խոստումը՝
Սողոմ Գոմորի մասին. — Ի՞նչ է ծծումբը, ի՞նչ յատկութիւններ
ունի, ինչի՞ կը գործածուի:

9. Ի Ս Ա Հ Ա Կ

Աստուծոյ խոստումին համաձայն, տարին լրանալուն
Աբրահամ և Սառա արու զաւակ մը ունեցան՝ որուն
անունը Իսահակ դրին, ինչ որ ուրախութիւն կը նշա-
նակէր:



Աբրահամ Իսահակի հետ ճամբայ ելաւ

Երբ Իսահակ բաւական մեծցաւ, Աստուած ուզեց
փորձել Աբրահամը և ըսաւ անոր. — «Բու միամօր զա-

ւակղ հետդ առ և զայն զօհէ լերան մը վրայ զոր քեզի ցոյց պիտի տամ» :

Աբրահամ հնազանդեցաւ և առտուն կանուխ զօհին համար փայտ, կրակ ու դանակ առնելով, Իսահակի հետ ճամբայ ելաւ: Երբոր կը քալէին, Իսահակ հարցուց հօրը թէ ո՞ւր է զօհին ոչխարը. «Աստուած կը հոգայ, զաւակա», պատասխանեց Աբրահամ:

Երբ Աստուծոյ ցոյց տուած լեռը հասան, Աբրահամ



Մի՛ դպչիւ զաւկիդ, ըսաւ հրեշտակը

զօհի սեղան շտկեց, փայտերը դիպեց և Իսահակն ալ կապելով փայտերուն վրայ դրաւ: Բայց մինչդեռ դանակը ձեռքը կը պատրաստուէր զայն զօհելու, Աստուծոյ հրեշտակը երեցաւ իսկոյն և ըսաւ. «Մի՛ դպչիր զաւ-



Ռեբեկա՛ ջուր կուսայ Եղիազարի

կիդ, հիմայ գիտեմ թէ դուն Աստուծմէ կը վախնաս .
քանի որ չվարանեցար քու մէկ հատիկ զաւակդ Անոր
զոհելու» :

Յետոյ ցոյց տուաւ խոյ մը որուն գլուխը կ'երեւար
մօտը գտնուող թուփի մը մէջէն : Աբրահամ խոյը զոհեց
Իսահակին տեղ :

Եւ Աստուած խոստացաւ որ իր զաւակները երկինքի
աստղերուն ու ծովին աւազին չափ պիտի բազմացնէ :

Սառա 127 տարեկան մեռաւ Քերրոն քաղքին մէջ :

Հրահանգ. — Ի՞նչ կը նշանակէ փորձել . — Ի՞նչ է միամօր
զաւակը . — Աստուած ինչո՞ւ հրամայեց Աբրահամի որ Իսահակը
զոհէ . — Ի՞նչ վարձք խոստացաւ Աստուած՝ Աբրահամի հնազան-
դութեան փոխարէն . — Ի՞նչ կը նշանակէ «երկինքի աստղերուն
և ծովին աւազին չափ» բացատրութիւնը :

10. ԻՍԱՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Սառայի մեռնելէն ետք, Աբրահամ որ խոր ծերու-
թեան հասած էր, իր Եղիազար ծառան Միջագետք
դրկեց, պատուիրելով որ Իսահակի համար կին մը ընտրէ :
Եղիազար իսկոյն ճամբայ ելաւ տասը ուղտերով,
որոնք աղուոր ընծաներ կը կրէին, և հասաւ Խառան
քաղաքը : Իրիկունը՝ մինչդեռ Ղրհորի մը քով կը հանգ-
չէր, ծունկի եկաւ և Աստուծոյ աղաչեց որ զինքը առաջ-
նորդէ այդ ընտրութեան մէջ . «Ո՛վ Աբրահամի Աստուածը,
ըսաւ, թող Իսահակի կին ըլլայ այն աղջիկը որ Ղրհորէն
Ղուր առնելու եկած ատենը ո՛չ միայն ինձի Ղուր պիտի
տայ, այլ նաև իմ ուղտերուս» :

Այդ միջոցին Բաթուէլի աղջիկը՝ Ռեբեկա՝ Ղրհորէն

Չուր առնելու եկաւ : Երբ Եղիազար անկէ Չուր ուղեց ,
Ռեբեկա իսկոյն սափորը տուաւ որ խմէ . յետոյ Չուր
տարաւ նաև ուղտերուն :

Եղիազար շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ , իր



Եղիազար շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ

խնդիրքը կատարած ըլլալուն համար , այն գիշերը Բաթ-
ուէլի տունը անցուց , և Բաթուէլի յայտնեց իր այցելու-
թեան նպատակը : Բաթուէլ ալ հաւանութիւն յայտնեց :
Առտուն՝ Եղիազար Ռեբեկան առնելով վերադարձաւ Աբ-
րահամի մօտ :

Այն իրիկունը Իսահակ դաշտը ելած էր երբ յանկարծ
տեսաւ տասը ուղտեր : Հասկցաւ թէ Եղիազարն է որ
իր հարսնցուն կը բերէ : Յետոյ ամուսնացաւ Ռեբեկայի
հետ :

Աբրահամ մեռաւ 175 տարեկան , և իր բոլոր ունե-
ցածը Իսահակ ժառանգեց :

Հրահանգ . — Ո՞ւր կը գտնուի Միջագետք և ինչո՞ւ
այդպէս կը կոչուի . — Եղիազար ինչո՞ւ ճամբորդեց և ինչպէ՞ս
հասաւ իր նպատակին . — Ի՞նչ տեսակ կենդանի է ուղտը , ի՞նչ
գիտէք անոր մասին . — Ի՞նչ է ժառանգութիւնը . — Ինչո՞ւ Իսա-
հակ ժառանգեց Աբրահամի ունեցածը :

11. ԻՍԱՀԱԿԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ


Իսահակ երկու զաւակ ունեցաւ , որոնցմէ մէկը Ե-
սաւ կոչուեցաւ և միւսն ալ Յակոբ : Եսաւ թաւամազ
էր և շատ լաւ որսորդ մը եղաւ , իսկ Յակոբ փափկա-
կազմ տղայ մըն էր և մօրը մօտ կը մնար : Այս պատ-
ճառաւ Ռեբեկա շատ կը սիրէր զինքը , մինչդեռ Իսա-
հակ ալ կը սիրէր Եսաւը որ իրեն որսի միս կը բերէր :

Օր մը Եսաւ դաշտէն տուն դարձաւ յողմած , ու
տեսնելով թէ եղբայրը ոսպնաթան եփած է , խնդրեց որ
իրեն ալ տայ : Յակոբ , ոսպնաթանը տալու համար պայ-
ման դրաւ որ Եսաւ իրեն թողու անդրանկութեան իրա-
ւունքը , եղբայրը հաւանեցաւ ու երդուընցաւ թէ անդ-
րանկութենէ կը հրաժարի :

Այդ միջոցին Իսահակ ծերացած ու կուրցած էր :
Զգալով թէ պիտի մեռնի , կանչեց Եսաւը և անոր ըսաւ .
« Գնա դաշտ և ինծի որսի միս բեր որ ուտեմ և քեզ
օրհնեմ » :

Ռեբեկա շեց այս խօսքը , և որպէս զի Իսահակի
օրհնութիւնը իր սիրած զաւակին բաժին ինչայ , շուտ մը
երկու ուլ բերել տուաւ Յակոբի , մորթեց ու եփեց : Յե-
տոյ , Եսաւի հագուստները Յակոբի հագցուց , անոր վիզն
ու ձեռքերն ալ այժի մորթով պատեց , որպէս զի եթէ
Իսահակ չօշափէ՝ չհասկնայ Յակոբը ըլլալը :

Յակոբ հօրը տարաւ պատրաստուած կերակուրը . Իսահակ՝ խարուելով՝ իր օրհնութիւնը անոր տուաւ , պատ-



Իսահակի օրհնութիւնը

ուիրելով որ ճօրեղբորը՝ Լաբանի աղջիկներէն կին առնէ : Քիչ ետքը նսաւ վրայ հասաւ , և հասկնալով կատարուած խարէութիւնը . ոյս պահեց եղբորը դէմ :

Ռեբեկա՝ վախնալով որ նսաւ կը սպաննէ Յակոբը , զայն իսկոյն Խառան՝ իր եղբոր քով զրկեց :

Հրահանգ. — Ինչ կը նշանակէ թաւամոզ . — Ինչ է սպանաթանը . — Ինչ արժէք ունի անդրանկութիւնը . — Ինչ նշանակութիւն ունէր Իսահակի օրհնութիւնը . — Ինչպէ՞ս խաբուեցաւ Իսահակ . — Ինչո՞ւ վախաւ Յակոբ :

12. ՅԱԿՈՒԲ ԼԱԲԱՆԻ ՄՕՏ

Դէպի Խառան իրախաձ առննր Յակոբ երազին մէջ տեսաւ սանդուխ մը՝ որուն մէկ ծայրը երկինքն էր և միւս ծայրը երկիրը , և որուն վրայէն կ'ելլէին կ'իջնէին հրեշտակները : Աստուած այլ այդ սանդուխին կատարը նստած էր և կ'ըսէր իրեն . «Նա եմ Աբրահամի և Իսահակի Աստուածը . այդ երկիրը ուր կը գտնուիս , քեզի և քու ժառանգներուդ պիտի տամ , և քու ժառանգներդ ծովին աւաղին չափ բազմաթիւ պիտի ըլլան» : Աստուած



Յակոբ ջուր տուաւ Լաբանի հօտին

խոստացաւ նաև որ պիտի օրհնէ Յակոբը և զայն պիտի պաշտպանէ :

Յակոբ հասկցաւ որ նուիրական տեղ մըն է ատիկա , իւզով օձեց այն քարը , որուն վրայ գլուխը դրած էր և զայն Աստուծոյ Տուն անուանեց :

Յետոյ, ճամբան շարունակելով. հանդիպեցաւ Հոաքէլի որ իր մօրեղբոր՝ Լաբանի աղջիկն էր: Հոաքէլ ոչխար կ'արածէր և շատ գեղեցիկ էր. Յակոբ ջրհորի մը քարէ կափարիչը վերցուց որպէս զի անոր հօտը ջուր խմէ. և երբ հասկցաւ թէ Հոաքէլ Լաբանի աղջիկն է, յայտնեց իր ով ըլլալը և Հոաքէլին հետ Լաբանի տունը գնաց:

Լաբան սիրով ընդունեց Յակոբը, որ իր հօրը պատուէրին համաձայն ուզեց ամուսնանալ Հոաքէլին ՚ետ: Լաբան հաւանեցաւ, պայմանաւ որ Յակոբ եօթ տարի աշխատի իր մօտ: Բայց երբ եօթ տարին լրացաւ, Լաբան իր մեծ աղջիկը՝ Լիան տուաւ անոր. Յակոբ նորէն եօթը տարի աշխատեցաւ և Հոաքէլն ալ կին առաւ:



Յակոբ և Եսաւ հաշտուեցան

Շատ զաւակներ ունեցաւ Յակոբ և չուտով հարբստացաւ: Բայց տեսնելով որ Լաբան կը նախանձի իրմէ, ճամբայ ելաւ իր հայրենիքը՝ Քանան դառնալու համար: Լաբան լսելով որ Յակոբ կը փախչի, սկսաւ հալածել

զայն, բայց Աստուած չթողուց որ անոր վնաս հասցնէ: Ճամբան շարունակած ատենը Յակոբ լսեց որ իր Եսաւ եղբայրը 400 մարդոցմով դէպի իրեն գալու վրայ է: Յակոբ իր նախիրէն մաս մը ընծայ զրկեց Եսաւի, որպէս զի մեղմէ անոր բարկութիւնը: Երկու եղբայրները հաշտուելով համբուրուեցան և Յակոբ դարձաւ իր հօրը՝ Իսահակի մօտ, որ 170 տարեկան մեռաւ:

Հրահանգ. — Ի՞նչ էր Յակոբի երազը. — Յակոբ ինչո՞ւ Հոաքէլը կնութեան ուզեց. — Ինչո՞ւ փախաւ Լաբանի քովէն. — Յակոբ ինչո՞ւ Եսաւի բարկութենէն վախեցաւ:

13. Յ Ո Վ Ս Է Փ

Յակոբ հաստատուեցաւ Քանանի երկիրը և ունեցաւ տասերկու զաւակներ. անոնց մէջէն ամէնէն աւելի կը սիրէր կրտսերը, որ Յովսէփ կը կոչուէր, և որուն աղուոր գօյնզգօյն վերարկու մը տուած էր:

Այդ պատճառաւ եղբայրները կ'ատէին զինքը: Օր մը Յովսէփ անոնց պատմեց հետեւեալ երազը. «Չեզի հետ որայ կը կապէի դաշտին մէջ և իմ որաս յանկարծ կանգնեցաւ, ու ձեր կապած որաները անոր երկրպագեցին»: Եղբայրները այս երազը անանկ մեկնեցին թէ Յովսէփ կ'ուզէ թագաւոր ըլլալ իրենց վրայ, և ա՛լ աւելի ատեցին զայն:

Ուրիշ անգամ մըն ալ Յովսէփ պատմեց թէ երազին մէջ տեսած էր որ արեւը, լուսինը և տասներմէկ աստղեր իրեն կ'երկրպագէին: Հայրը բարկացաւ և ըսաւ. «Ի՞նչ կը նշանակէ այդ երազը, պէտք է որ մայրդ, եղբայրներդ և ես երկրպագե՞նք քեզի»:

Քիչ ետքը՝ Յովսէփի եղբայրները Սիւքէմ գացած էին իրենց հօր հօտերը արածելու: Յակոբ Յովսէփը զբուկեց անոնց մօտ, հասկնալու համար թէ ինչպէ՞ս են:



Ահա երազատեալ կուգայ

Երբոր եղբայրները զինքը տեսան, ըսին. «Ահա երազատեալ կուգայ, սպաննենք զայն. մեր հօրը կ'ըսենք թէ գաղաններէն բզքտուած ըլլալու է. նայինք ինչի՞ պիտի ծառայեն իր երազները»:

Բայց Ռուբէն որ ամէնէն մեծն էր և չէր ուզեր Յովսէփի սպաննուիլը, խորհուրդ տուաւ որ անապատին ցամքած ջրհորներէն մէկուն մէջ նետեն. վերջէն պիտի դար ու ազատէր զայն: Եղբայրները հաւանեցան, և Յովսէփը ջրհորին մէջ ձգեցին՝ գոյնզգոյն վերարկուն առնելով: Բայց ահա յանկարծ վրայ հասաւ վաճառականներու խումբ մը և Յովսէփի եղբայրները զայն ջրհորէն հանելով ծախեցին վաճառականներուն:

Յետոյ, ուլ մը մորթելով անոր արիւնին մէջ թաթ-

խեցին Յովսէփի պատմուճանը և իրենց հօրը բերելով ըսին. «Ասիկա միայն գտանք, նայէ ա՞յս է Յովսէփի պատմուճանը»:

Յակոբ ճանչցաւ իր սիրական զաւկին պատմուճանը



Յովսէփ կը ծախուի վաճառականներուն

և սկսաւ ողբալ. «Ասիկա է իմ զաւկիս պատմուճանը՝ չար գաղանը բզքտեր է Յովսէփս»:

Տղաքը ուրախացան որ կրցան դիւրաւ խաբել իրենց ծերունի հայրը:

Յետոյ Յակոբ պատուեց իր հազուատները, սներ հազաւ և երկար ժամանակ իր զաւկին մահուան սուզը կը բռնէր: Միւս տղաքը կուգային զինքը մխիթարելու,

բայց անիկա կ'ըսէր. «Այս ցաւովս ես գերեզման պիտի իջնեմ իմ զաւկիս ետեւէն» :



Յակոբ ճանչցաւ իր սիրական զաւկին վերարկուն

Հրահանգ. — Ի՞նչ երազներ տեսաւ Յովսէփ և ի՞նչ կը նշանակէին անոնք. — Ի՞նչ ո՞ւ Յովսէփ ատելի էր իր եղբայներուն. — Ի՞նչ եղաւ հետեւանքը. — Յովսէփ իբր ի՞նչ ծախուեցաւ վաճառականներուն. — Յակոբ ինչպէ՞ս խաբուեցաւ :

14. ՅՈՎՍԷՓ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՉ

Վաճառականները Եգիպտոս տարին Յովսէփը և զայն ծախեցին Փարաւոնի դահճապետին որ Պետափրէս կը կոչուէր : Յովսէփ շուտով Պետափրէսի սիրելին եղաւ և անոր տան մատակարար կարգուեցաւ, բայց զիչ ետքը՝

Պետափրէսի կինը չարութեամբ բանտ նետել տուաւ զինքը :

Աստուած սակայն կը պաշտպանէր Յովսէփը : Բանտարկուած միջոցին իրեն բանտի ընկեր ունեցաւ Փարաւոնի տակառապետն ու մատակարարը :

Գիշեր մը այս երկուքն ալ երազ տեսան և առտուն



Յովսէփ կը մեկնէ Փարաւոնի երազները

պատմեցին Յովսէփի, որ իսկոյն մեկնեց անոնց երազը : «Դուն, ըսաւ տակառապետին, երեք օրէն նորէն քու պաշտօնիդ պիտի անցնիս» : Իսկ մատակարարին ալ ըսաւ թէ երեք օրէն պիտի կախուի : Յետոյ՝ տակառապետէն խնդրեց որ երբ նորէն պաշտօնի անցնի, իրեն համար բարեխօսէ Փարաւոնի մօտ :

Երեք օր վերջ՝ իր մեկութիւնը իրականացաւ :

Երկու տարի կար որ Յովսէփ բանտն էր՝ երբ Փարաւոն յաջորդաբար երկու երազներ տեսաւ : Անգամ մը երազին մէջ իրեն երեւցան եօթ պարարտ երինջներ, յե-

տոյ եօթ վտիտ երինջներ, որոնք առաջինները կերան: Ուրիշ անգամ մը տեսաւ եօթ լեցուն հասկեր որոնք մէկ ցողունէ կ'ելլէին. յետոյ եօթ պարապ հասկեր որոնք կլլեցին միւս հասկերը:

Փարաւոն կանչել տուաւ Եգիպտոսի բոլոր երազահանները, որոնք սակայն չկրցան մեկնել իր երազները: Այն ատեն՝ տակառապետը յիշեց Յովսէփը և Փարաւոնին պատմեց բանտին մէջ եղածը:


Յովսէփի շուտով կանչուեցաւ Փարաւոնի առջեւ և երազները մեկնեց հետեւեալ կերպով. «Եօթ պարարտ երինջները և եօթ լեցուն հասկերը ցոյց կուտան թէ եօթ ասորի առատութիւն պիտի ըլլայ Եգիպտոսի մէջ. իսկ եօթ վտիտ երինջներն ու եօթ պարապ հասկերն ալ կը նշանակին թէ առատութեան եօթ տարիներէն վերջ՝ եօթ տարի ալ սով պիտի ըլլայ»: Յետոյ Յովսէփի խորհուրդ տուաւ Փարաւոնի որ արժանաւոր կառավարիչ մը ընտրէ:

Փարաւոն՝ անմիջապէս Յովսէփը Եգիպտոսի կառավարիչ կարգեց: Յովսէփի առատութեան եօթ տարիներուն մէջ ահազին քանակութեամբ ցորեն ամբարեց, և երբ սովի եօթ տարիները սկսան, ժողովուրդը բնաւ չհեղուեցաւ: Նոյն իսկ օտար երկիրներէն Եգիպտոս կուգային ցորեն քնելու համար:

Հրահանգ.— Ի՞նչ են դասճապետը, մատակարարը և տակառապետը.— Ի՞նչ է երեւոյն.— Ո՞վ էր Փարաւոն.— Յովսէփի Ի՞նչպէս Եգիպտոսի կառավարիչ եղաւ և ինչո՞ւ սովի տարիներուն Եգիպտոսը ընտաւ հացի նեղութիւն չքաշեցին.— Ի՞նչ է երազահանը:

15. ՅՈՎՍԷՓ ԵՒ ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Քանանացւոց երկիրն ալ սովի մատնուած ըլլալով, Յակոբ իր զաւակները Եգիպտոս զրկեց ցորեն դնելու: Իր քով պահեց միայն կրտսեր զաւակը, Բենիամինը, զոր ամէնէն աւելի կը սիրէր՝ Յովսէփը կորսնցնելէն ի վեր:



Յովսէփի կ'ընդունի իր եղբայրները

Յովսէփի իսկոյն ճանչցաւ իր եղբայրները, բայց տեսնելով որ Բենիամինը չկայ անոնց մէջ, ամէնքն ալ բանտարկել տուաւ: Յետոյ անոց հարցուց թէ ո՞ւր է Բենիամինը. և երբ անոնք յայտնեցին թէ տունն է, այն ատեն Շմաւոն եղբայրը իր պատանդ իր քով պահեց և միւսներուն ալ ցորեն տալով ըսաւ. «Մինչև որ ձեր պղծաբիկ եղբայրը հետեւնիդ հոս չբերէք, ո՛չ Շմաւոնը պիտի արձակեմ, ոչ ալ երկրորդ անգամ մը ցորեն պիտի տամ ձեզի»:

Յակոբ երբ ասիկա լսեց, չուզեց Բենիամինը Եգիպտոս զրկել, վախնալով որ Յովսէփին պէս ան ալ կը կորսնցնէ: Բայց սովը հետզհետէ կը սաստկանար Քանանացւոց երկրին մէջ, որով ստիպուեցաւ հաւանիլ Բենիամինի երթալուն:



Յովսէփի կ'ընդունի իր հայրը

Այս անգամ Յովսէփի սիրով ընդունեց իր եղբայրները, և համոզուած ըլլալով որ անոնք շատ կը սիրեն թէ՛ իր հայրը և թէ՛ Բենիամինը, անոնց յայտնեց թէ իրենց եղբայրն է: Յետոյ, զանոնք առատ նուէրներով ու բազմաթիւ կառքերով զրկեց Քանանացւոց երկիրը, որպէս զի հայրը առնեն Եգիպտոս բերեն:

Յակոբ նախ չուզեց հաւատալ թէ Յովսէփի ողջ է և

Եգիպտոսի կառավարիչ դարձած է: Բայց երբ զրկուած կառքերը տեսաւ, ուրախութեամբ ճամբայ ելաւ 66 հոգիով:

Բերսաբէի մէջ՝ Աստուած իրեն երեցաւ և ըսաւ թէ, Եգիպտոսի մէջ մեծ ազգ մը պիտի գոյացնէ իր սերունդը. յայտնեց նաև Յակոբի թէ ինք հոն պիտի մեռնի, բայց իր զաւակները որ մը նորէն Քանանացւոց երկիրը պիտի գառնան:

Յովսէփի մեծ խնդութեամբ ընդունեց իր հայրը և զայն ներկայացուց Փարաւոնին: Յակոբ օրհնեց Փարաւոնը որ Գեսեմի երկիրը յատկացուց անոր և զաւակներուն ընակութեան:

Հրահանգ.—Յովսէփի ինչպէ՞ս տեսաւ իր եղբայրները և ինչպէ՞ս փոխարինեց անոնց չարութիւնը.—Ինչո՞ւ ուզեց տեսնել Բենիամինը, և Յակոբ ինչո՞ւ ընդդիմացաւ անոր Եգիպտոս երթալուն.— Յակոբ ինչո՞ւ չէր հաւատար Յովսէփի ողջ ըլլալուն.—Ի՞նչ կը նշանակէ պատանդը:

16. ՅԱԿՈՒԲԻ ԵՒ ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ

Յակոբ 147 տարեկան էր երբ զգաց թէ պիտի մեռնի. իսկոյն իր մօտ կանչել տուաւ Յովսէփը, օրհնեց անոր երկու զաւակները՝ Մանասէն ու Եփրեմը, օրհնեց նաև իր բոլոր զաւակները և պատուիրեց որ մեռնելէն ետքը իր մարմինը Քանանացւոց երկիրը տանին և թաղեն հօրը գերեզմանին մէջ:

Յովսէփի՝ Փարաւոնէն արտօնութիւն ստացաւ հօրը պատուէրը գործադրելու, և եղբայրներուն հետ մեծ հան-

գէտով անոր մարմինը տարաւ թաղեց Քանանացւոց երկիրը :

Երբ հայրերնին մեռաւ, Յովսէփի եղբայրները վախցան որ անկա կը պատժէ իրենց երբեմնի չարութիւնը. այս պատճառաւ եկան անոր մօտ և ներողութիւն խնդրեցին: Բայց Յովսէփի ապահովցուց զանոնք, ըսելով. «Մի վախնաք. դուք ինձի չարութիւն ընել ուզեցիք, բայց Աստուած անանկ կարգադրեց որ ձեր ըրած չարութիւնը բարութիւն եղաւ. ես նորէն կը հոգամ ձեզ և ձեր ընտանիքը» :

Յակոբի մեռնելէն յիսուն տարի ետք մեռաւ նաև Յովսէփ, 110 տարեկան: Մեռնելէն առաջ կանչեց իր եղբայրները և ըսաւ անոնց. «Ահա ես կը մեռնիմ. Աստուած անշուտ պիտի այցելէ ձեզի և այս երկրէն հանելով պիտի առաջնորդէ Քանանացւոց երկիրը, զոր Աբրահամի, Իսահակի և Յակոբի խոստացած էր» :


Յետոյ անոնց երգում ընել տուաւ որ այնտեղ գացած ատեննին իր ոսկորներն ալ հետերնին տանին :

Եղբայրները զմուսեցին իր մարմինը և տապանի մը մէջ դնելով պահեցին :

Հրահանգ.—Ե՛րբ մեռաւ Յակոբ և ի՞նչպէս.—Ինչպէ՞ս Աստուած բարութիւն դարձուց Յովսէփի եղբայրներուն ըրած չարութիւնը.—Ե՛րբ մեռաւ Յովսէփ և ի՞նչ պատուիրեց իր եղբայրներուն.—Ի՞նչ կը նշանակէ մարմին մը զմուսել :

17. Մ Ո Վ Ս Է Ս

Յովսէփի մեռնելէն 430 տարի ետքը՝ Եգիպտոսի վրայ իշխող Փարաւոն մը տեսնելով որ Իսրայելացիք չափազանց բազմացած են ու կրնան իրենց գէշութիւնը



Իսրայելացիք երբ գերի կ'աշխատին


նել, հրամայեց ճնշել զանոնք: Բոլոր Իսրայելացիք գերութեան ենթարկուեցան, և ստիպուեցան մեծ շէնքերու և պալատներու շինութեան աշխատիլ:

Ասով ալ չգոհանալով՝ Փարաւոն հրամայեց որ Իսրայելացւոց բոլոր նորածին արու սղաքը նեղոս գետը ձգուին:

Կին մը միայն իր զաւակը պահեց երեք ամիս. յետոյ, վախնալով որ երեւան կ'ելլէ, եղէգէ հիւսուած

և կուարով ձեփուած սակաւի մը մէջ դնելով Նեղոսի մէջ ձգեց զայն :

Տղուն քոյրը դեռ գետին եղերքն էր, երբ Փարաւոնին աղջիկը անկէ անցնելով տեսաւ պզտիկը և իր նափշտներուն հրամայեց որ զայն հանեն գետէն : Յետոյ



Մովսէս կը հանուի գետէն

գլխաց անոր վրայ և որոշեց զայն մեծցնել : Այն ատեն պզտիկին քոյրը Փարաւոնին աղջկան մօտենալով, առաջարկեց կաթնտու կին մը բերել տղան դիեցնելու համար, և անոր հաւանութեան վրայ, բուն իսկ իր մայրը բերաւ :

Պզտիկը, մեծնալէն վերջ, տարուեցաւ Փարաւոնի աղջկան, որ զայն որդեգրեց և անունը դրաւ Մովսէս,

այսինքն «Չուրէն հանուած» : Մովսէս սկսաւ մեծնալ պալատին մէջ, և ժամանակին բոլոր զիտութիւնները սորվելով իմաստուն մարդ մը եղաւ :

Հրահանգ.— Իսրայելացիք ինչո՞ւ հալածանքներու ենթարկուեցան Եգիպտոսի մէջ.— Ի՞նչպէս ազատեցաւ Մովսէս.— Ի՞նչ կը նշանակէ իր անունը.— Ի՞նչ է կուարը.— Ինչո՞ւ Մովսէսը պարունակող սակաւը կուարով ձեփուած էր.— Ի՞նչ է գետը.— Ի՞նչ է որդեգիրը.— Ի՞նչ է նափշտը :

18. ԱՄՏՈՒՄԾ ԿԸ ԽՕՍԻ ՄՈՎՍԷՍԻ

Պալատին մէջ մեծնալով հանդերձ, Մովսէս չէր մտնար իր ազգակիցները և սրտանց կը ցաւէր՝ անոնց տառապանքները տեսնելով :

Անգամ մը, փողոցին մէջ հանդիպեցաւ Եգիպտացի փերակացուի մը որ Իսրայելացի մը կը ծեծէր. չկրնալով դիմանալ, սպաննեց Եգիպտացին :

Փարաւոն լսեց եղածը և որոշեց մահուամբ պատժել Մովսէսը, բայց անիկա անապատ փախաւ : Ճամբան, հորի մը մօտ տեսաւ հովիւներ և հովուուհիներ. առաջինները վերջիններուն ձեռքէն խել կ'ուզէին հորէն քաշուած ջուրը : Մովսէս պաշտպանեց աղջիկները, հովիւները վանելով :

Հովուուհիները Մադիամի քուրմին աղջիկներն էին : Իրենց հայրը Մովսէսը իր տունը հիւրընկալեց և աղջիկներէն մէկը անոր կնութեան տուաւ :

Անկէ ետքը՝ Մովսէս քուրմին ոչխարները կ'արածէր : Օր մը, մինչդեռ Քորեբ լեռան վրայ կը գտնուէր, տեսաւ մորենի մը որ անընդհատ կ'այրէր առանց հատնելու :

Հետաքրքրուելով անոր մտեցաւ, ու կը նայէր թէ ինչ է պատճառը, երբ յանկարծ լսեց ձայն մը որ կ'ըսէր. «Յո Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածն եմ. իմ ժո-



Մովսէս կը վանէ հովիւները

ղովուրդիս եգիպտոսի մէջ կրած տառապանքները տեսայ, և քեզ եգիպտոս պիտի ղրկեմ որ զայն ազատես» :

Մովսէս ըսաւ որ ինք անգոր է այդ գործին համար : Աստուած յուսադրեց զինքը, յայտնելով որ իրեն հետ պիտի ըլլայ նաև Ահարոն եղբայրը :

Ատոր վրայ, Մովսէս հրաժեշտ առաւ ընտանիքէն և ճամբայ ելաւ : Անապատին մէջ հանդիպեցաւ Ահարոնին որուն հետ մէկտեղ ժամանեց եգիպտոս :

Հրահանգ.—Մովսէս ինչո՞ւ փախաւ եգիպտոսէն, և ինչպէ՞ս Մարիամի քուրմին փեսայ դարձաւ.— Ի՞նչ է քուրմը.— Ի՞նչ է ժոթենին.— Ո՞վ էր Ահարոն և ինչո՞ւ Մովսէսի հետ եգիպտոս գնաց :

19. ԻՍՐԱՅԵԼԱՅԻՈՅ ԱԶԱՏՈՒՄԸ

Մովսէս և Ահարոն Փարաւոնին ներկայանալով, Աստուծոյ անունով ըսին որ արձակէ Իսրայելացի ժողովուրդը :

Փարաւոն հպարտութեամբ մերժեց անոնց խնդիրքը, տուրկելով որ չի ճանչնար այդ Աստուածը. և հրամայեց տւելի խտացնել Իսրայելացիներուն չարչարանքը :

Ատոր վրայ Աստուած շատ ծանր պատիժներ ղրկեց



Իսրայելացիք կ'ուտեն խորոված գառնուկը

Եգիպտոսի գլխուն : Փարաւոն այդ պատուհասները տեսնելով կը խոստանար արձակել Իսրայելացիները, բայց երբ Մովսէսի աղաչանքներուն վրայ պատիժը կը դադրէր, նորէն չէր արձակելը զանոնք ու կը շարունակէր նեղել :

Վերջապէս Աստուծոյ համբերութիւնը սպառեցաւ, և կանչեց Մովսէսը և ըսաւ անոր. «Ըսէ՛ իմ ժողովուրդիս

որ՝ ամէն մարդ գառնուկ մը առնէ և խորովելէն վերջ ուտէ հապճեպով, մեկնելու պատրաստ վիճակի մէջ. գառնուկին արիւնն ալ թող ամէն մարդ իր տան դրան քսէ, որովհետեւ այս գիշեր պիտի անցնիմ Եգիպտոսէն և նշան չկրող բոլոր տուններու անդրանիկ զաւակները պիտի մեռցնեմ»։ Աստուած պատուիրեց նաև որ ամէն տարի այդ օրը տօն պահեն ։

Կէս գիշերին իրաւ Աստուած զարկաւ բոլոր Եգիպտացւոց անդրանիկները. մեռաւ նաև Փարաւոնի անդրանիկ զաւակը։ Ատոր վրայ, Փարաւոն թողուց Իսրայելացիները որ մեկնին իրենց հօտերով և ստացուածքով։

Այսպէս անոնք դուրս ելան Եգիպտոսէն, ուր մնացած էին 430 տարի։ Իրենց թիւը 600,000 էր, առանց կիներն ու սղաքը հաշուելու։ Աստուած զանոնք առաջնորդելու համար ամպէ սիւն մը ցոյց տուաւ ցերեկը և գիշերն ալ հրեղէն սիւն մը։

Հրահանգ.— Փարաւոն ինչո՞ւ կը մերժէր Իսրայելացիները արձակելու— Ինչ ըրաւ Աստուած.— Ինչո՞ւ պատժուեցան Եգիպտացիք.— Ինչ կը նշանակէ «համբերութիւնը սպառել».— Աստուած ինչպէ՞ս ստիպեց Փարաւոնը որ արձակէ Եգիպտացիները.— Իսրայելացիք քանի՞ հոգի էին Եգիպտոս մտած ատեննին։

20. ԿԱՐՄԻՐ ԾՈՎԷՆ ԱՆՅՔԸ

Փարաւոն շուտով զղջաց Իսրայելացիները արձակած ըլլալուն համար, և անմիջապէս պատերազմական կառքերով ու ձիաւորներով ճամբայ ելաւ որպէս զի զանոնք ետ դարձնէ։

Իսրայելացիք Կարմիր ծովուն մօտն էին երբ տեսան զիրենք հալածողները, վախցան և սկսան Աստուծոյ աղա-

չել։ Բայց Աստուած Մովսէսի հրամայեց որ զաւազանը բարձրացնէ։ Հաղիւ Մովսէս նազանդած էր, երբ ծովուն ջուրը երկուքի բաժնուեցաւ, բայց ձգելով ճամբայ մը՝ ուրկէ անցան Իսրայելացիք։ Եգիպտացիներն ալ ա-



Փարաւոն իր մարդոցմով ու ձիերով խեղդուեցաւ

նոնց հետեւեցան այդ ճամբէն։ Երբ Իսրայելացիք ամբողջովին ցամաք ելան, Մովսէս, դարձեալ Աստուծոյ հրամանով, զաւազանը բարձրացուց։ Զուրերը նորէն գոցուեցան, և Փարաւոն իր մարդոցմով ու ձիերով խեղդուեցաւ։

Մովսէս և Իսրայելացիք, իրենց թշնամիներուն կորուստը տեսնելով, օրհնեցին Աստուածը որ զիրենք աղատած էր։ Յետոյ սկսան յառաջանալ դէպի Սին անա-

զատր: Ճամբան ծարաւցած էին, բայց միայն դառն ջուր մը կար զոր չէին կրնար խմել: Մովսէս Աստուծոյ հրամանով փայտ մը ձգեց այդ ջուրին մէջ որ իսկոյն անուշացաւ և Իսրայելացիք կրցան իրենց ծարաւը անցընել:

Հրահանգ. — փարուտն ինչո՞ւ զոջաց խորայեւացի գերիները արձակած ըլլալուն համար. — Ի՞նչ էր գերին և ի՞նչ տեսակ կեանքի մը դատապարտուած էր. — Աստուած ի՞նչ միջոցով ազատեց իսրայելացիները:

21. ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

Սին անապատը մտած ատեննին՝ Իսրայելացիք ուսելիք չունէին: Աստուած անոնց զրկեց բազմաթիւ լորա-



Աստուած զրկեց լորամարդիներ

մարդիներ, որով միս ունեցան, ու նաև մանանկայ որ զիչե-

րը կը թափէր երկինքէն և զոր առտուն կանուխ կը ժողվէին, դեռ արևը չծագած, որովհետև տաքէն կը հալէր:

Աւելի առաջ երթալով դարձեալ ջուրի նեղութիւն կրեցին և սկսան գանգատիլ: Աստուած ըսաւ Մովսէսի.

«Ս'ա քու գաւազանդ որով ծովուն ջուրը բաժնեցիր, զա՛րկ ժայռին և անկէ ջուր պիտի բրդախ»: Մովսէս հնազանդեցաւ և Աստուծոյ ըսածին պէս ջուր ելաւ: Իսրայելացիք կրցան յագեցընել իրենց ծարաւը և դադրեցան արտնջալէ:



Մովսէս ջուր կը հանէ ժայռէն

Սին անապատին մէջ Ամաղեկացի ժողովուրդը յարձակեցաւ Իսրայելացւոց վրայ: Մովսէս կանչեց Յեսուն և պատուիրեց որ հետը քաջ մարդիկ առնելով երթայ պատերազմի Ամաղեկացւոց հետ. ինք ալ՝ Ահարոնի և Ովրի հետ բլուրի մը վրայ ելաւ ու աղօթեց այնտեղ:

Երբ ձեռքերը դէպի երկինք կը վերցնէր, Ամաղեկացիք կը յաղթուէին. իսկ երբ յոգնելով վար կ'իջեցընէր, Իսրայելացիք կը յաղթուէին: Այն ատեն՝ Ահարոն և Ովր անոր թեւերուն տակ կեցան, մինչեւ որ Ամաղեկացիք բոլորովին յաղթուեցան:

Հրահանգ. — Իսրայելացիք ինչ կերան անապատին մէջ. — Ինչ էր մանանան, ինչ տեսակ թուչուն է լորտմարգին. — Աստուած ինչպէ՞ս ջուր տուաւ Իսրայելացիներուն. — Մովսէս ինչ ջրած էր իր գործածած գաւաղանով և ե՞րբ:

22. ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔԸ

Եգիպտոսէն ելիչնէն երեք ամիս վերջ Իսրայելացիք հասան Սինա անապատը, և բանակեցան նոյն անունը կրող լեռան դէմը: Աստուած Սինա լեռան վրայէն Մովսէսի տուաւ իր օրէնքը որ սա տասը պատուիրաննեքէն կը բաղկանար.

1. Իսրայելացիք Աստուծմէ զատ ուրիշ Աստուած չպիտի պաշտէին:
2. Կուռք չպիտի շինէին և անոնց երկրպագութիւն չպիտի ընէին:
3. Աստուծոյ անունը սնտոի խօսքերու մէջ չպիտի յիշէին և Աստուծոյ անունով սուտ երգում չպիտի ընէին:
4. Շաբթուան վեց օրը պիտի աշխատէին և եօթներորդ շաբաթ օրը սուրբ պիտի պահէին:
5. Իրենց հայրը և մայրը պիտի պատուէին:
6. Մարդ չպիտի սպաննէին:
7. Ամուսիններ իրարու հաւատարիմ պիտի մնային:
8. Գողութիւն չպիտի ընէին:
9. Իրենց ընկերոջ մասին սուտ վկայութիւն չպիտի տային:
10. Իրենց ընկերոջ տան և ստացուածքին վրայ աչք չպիտի տնկէին:

Աստուած այս պատուէրները փորագրած էր երկու

քարէ տախտակներու վրայ, զորս Մովսէս Իսրայելացեաց պիտի բերէր:

Բայց մինչդեռ Մովսէս Սինա լեռան վրայ կը գընալու, Իսրայելացիք տեսնելով որ օրերով այնտեղ մնացած է և կ'ուշանայ գալու, Ահարոնի աղաչեցին որ իրենց Աստուած մը չինէ:

Ահարոն՝ Իսրայելացոց աղաչանքներուն տեղի տալու



Մովսէս կտորեց քարէ տախտակները

լով, իրենց ոսկեղէն զարդերը բերել տուաւ և անծնցմով սակի հորթ մը շինեց, զոր ժողովուրդը սկսաւ պաշտել:

Աստուած, տեսնելով եղածը, պատուիրեց Մովսէսի որ Իսրայելացեաց քով փութայ: Մովսէս չատ բարկացաւ անոնց ըրածը տեսնելով և գետին նետեց քարէ

տախտակները որոնք կոտրեցան: Յետոյ խորտակեց նաև օսկի հորթը:

Անկէ ետքը Աստուծոյ հաւատարիմ մնացած Ղեւթի գերունդին հրամայեց որ սրէ անցընեն բոլոր մեղանչողները: Այդ օրը Իսրայելացւոցմէ 3000 հոգի մեռան:

Վերջէն սակայն Մովսէս նորէն լիռ գնաց և Աստուծոմէ թողութիւն խնդրեց ժողովուրդին յանցանքին համար:

Աստուած ներեց, և անգամ մըն ալ տուաւ տասը պատուիրանները պարունակող քարէ տախտակները, պատուիրելով որ զանոնք Տապանակի մը մէջ պահեն:

Հրահանգ. — Ի՞նչ են տասը պատուիրանները և ի՞նչ կը նշանակեն. — Ի՞նչ է օսկի հորթը և ի՞նչ փորձանք բերաւ Իսրայելացւոց գլխուն. — Իսրայեցացիք ի՞նչի մէջ պիտի պահէին քարէ տախտակները:

23. ԻՍՐԱՅԵԼԱՅԻՈՅ ՊԱՏԻԺՆԵՐԸ

Սինայէն ելելէ վերջ Իսրայելացիք գացին Փառան անապատը: Հոն Աստուած պատուիրեց Մովսէսի որ իւրաքանչիւր ցեղէ մէյ մէկ մարդ զրկէ Քանանացւոց երկիրը, այնտեղ եղածը հասկնալու համար: Մովսէս տասերկու մարդ ընտրեց, որոնց մէջ էր նաև Յետուն:

Քառասուն օր վերջ Յետու և իր ընկերները դարձան աւ պատմեցին թէ շատ բարեբեր երկիր մըն է. իրենց հետ բերած էին մանաւանդ ողկոյզ մը զոր երկու հոգի զժուարաւ կրնային կրել: Բայց ըսին նաև թէ բնակիչները զօրաւորն են և քաղաքներն ալ ամուր:

Ասոր վրայ Իսրայելացիք վախցան հոն երթալու և սկսան տրտնջալ, յայտնելով որ Եգիպտոս դառնալ կ'ու-

զեն: Աստուած բարկացաւ որ իրեն չեն վստահիր և ըսաւ, որ իբր պատիժ քառասուն տարի պիտի թափառին անապատին մէջ, ուր պիտի մեռնին ամէնքն ալ. միայն




Ողկոյզը երկու հոգի հազել կը կրէին

իրենց թոռները պիտի կրնան տեսնել Քանանացւոց երկիրը, որ իր խոստացած Աւետեաց երկիրն էր: Յետու և Քաղէփ որոնք Աստուծոյ վստահած էին, բացառութիւն պիտի կազմէին:

Իսրայելացիք ուրեմն մնացին անապատին մէջ: Օր մը, մինչդեռ ջուր չունէին, նորէն սկսան տրտնջալ: Աստուած պատուիրեց Մովսէսի. «Գնա՛, խօսէ՛ ժայռին և ջուր պիտի հոսի»: Մովսէս գնաց ժայռին մօտ, բայց փոխանակ խօսելու՝ զաւազանովը երկու անգամ զարկաւ անոր: Ջուրը հոսեցաւ թէև, բայց Աստուած սաստեց Մովսէսը՝ ըսելով. «Ի՞նչն ալ տարակուսեցար ինձմէ, և զաւազանով զարկիր ժայռին, փոխանակ անոր խօսելու. այս պատճառաւ պիտի տեսնես Աւետեաց երկիրը, բայց չպիտի կրնաս հոն մտնել»:

Անապատին մէջ Իսրայելացիք ուրիշ մէկ քանի անգամ ալ դժգոհացուցին Աստուածը որ սարսափելի պատիժներ տուաւ անոնց : Անգամ մը՝ անոնց մէջ զրկեց



Մովսէսի շինած պղինձէ օձը

Թունաւոր օձեր , որոնք շատ մարդ մեռցուցին : Մովսէս կրցաւ դարձեալ Աստուծոյ սիրտը առնել , և անոր հրամանով պղինձէ օձ մը շինեց ու գաւազանի մը ծայրը բարձրացուց . Թունաւոր օձերէն խայթուողը երբ այդ պղինձէ օձին նայէր՝ իսկոյն կը բժշկուէր :

Անապատին մէջ՝ Իսրայելացիք ստիպուեցան պատեւաբարձիլ դրացի ժողովուրդներու հետ : Միջոց մը նորէն մոռցան Աստուածը և սկսան կուռք պաշտել . Աստուած , իբր պատիժ , անոնցմէ շատ մարդիկ մեռցուց զանազան կերպով :

Հրահանգ.—Մըն էր Աւետեաց երկիրը, և Իսրայելացիք ինչ՞ով չուզեցին այնտեղ երթալ.— Որո՞նք ծնած էին հոն.— Աստուած ինչ՞ով պատժեց Իսրայելացիները.— Մովսէս ինչ՞ով դատաւարտուեցաւ Աւետեաց երկիրը չմտնելու.— Ի՞նչ կը նշանակէ սեբաբը առնել :

24. ՄՈՎՍԵՍԻ ՄԱՀԸ

Քառասուն սարի անապատին մէջ Թափառելէ վերջ , Իսրայելացիք նորէն սկսան Աւետեաց երկրին մօտենալ : Աստուած ըսաւ Մովսէսի . « Էլի՛ր նաբաւ լեռան վրայ և դիտէ Քանանացւոց երկիրը զոր Արբանամու խոստացայ



Մովսէս դիտեց Աւետեաց երկիրը

և զոր անոր յաջորդներուն պիտի տամ » : Մովսէս խընդրեց որ անկէ առաջ իրեն տեղ ուրիշ առաջնորդ մը նշանակէ Իսրայելացւոց , քանի որ ինք ծեր է ու կրնայ մեռնել , և Աստուած ալ պատուիրեց որ Յեսուն ընտրէ :

Մովսէս Իսրայելացւոց յայտնեց թէ ինք ձերացած ըլլալով այլևս չի կրնար զիրենք առաջնորդել և թէ Յե-

սուն պիտի ըլլայ իրենց առաջնորդ: Յետոյ Յեսուին ա ըսաւ. «Դուն պէտք է ժողովուրդը անցնես Յորդանանէն և տանիս Աստուծոյ խոստացած Աւետեաց Երկիրը»:

Անկէ ետքը Մովսէս բարձրացաւ Նաբաւ լեռը, ուրկէ տեսաւ Քանանացւոց ամբողջ երկիրը:

Աստուած անգամ մըն ալ երեցաւ անոր և ըսաւ. «Ահա այս է այն երկիրը զոր ես խոստացեր եմ Աբրահամի, Իսահակի և Յակոբի. այս բոլորը տեսար դուն, բայց չպիտի կրնաս հոն մտնել»:

Իրաւ ալ Մովսէս չկրցաւ Աւետեաց երկիրը մտնել և Մովարացւոց երկրին մէջ մեռաւ 120 տարեկան: Իր գեղեզմանին տեղը միշտ անյայտ մնաց:


Իսրայելացիք երեսուն օր սուգ բռնեցին Մովսէսի մահուան համար:

Հրտեանց.—Երբոր քառասուն տարին լրացաւ՝ ի՞նչ պատահեցաւ.—Մովսէս ինչո՞ւ իրեն յաջորդ մը կ'ուզէր.—Ինչո՞ւ Աստուած Յեսուն ընտրեց.—Յեսու կրնա՞ր մտնել Աւետեաց երկիրը.—Ի՞նչ նշանակութիւն ունի սուգ բռնելը:

25. ԱԻԵՏԵԱՅ ԵՐԿԻՐԸ


Մովսէսի մեռնելէն վերջ՝ Աստուած պատուիրեց Յեսուի որ պաշար պատրաստեն՝ երեք օրէն Յորդանանը անցնելու համար:

Յեսու, Աստուծոյ հրամանով, ժողովուրդը տարաւ Յորդանանի մօտ, և ըսաւ քահանաներուն. «Առէ՛ք Տապանակը և անցէ՛ք ժողովուրդին առջև»: Հաղիւ քահանաները ոտքերնին գետին մէջ դրած էին երբ Ղուրբը



Մովսէս մեռնելէն առաջ կը խօսի Իսրայելացւոց

ճեղքուեցան և ժողովուրդը կրցաւ անցնիլ գետէն ու մըտ-
նել Աւետեաց երկիրը :



Յորդանանէն անցքը

Այնտեղ՝ Իսրայելացիք հասան Երիքով քաղաքին
առջև : Աստուած դարձեալ երեւցաւ Յեսուի և ըսաւ .
«Վեց օր յաջորդաբար զինուորներդ պէտք է դառնան
քաղքին պարիսպներուն շուրջը . եօթներորդ օրն ալ թող
քահանաները տապանակին առջև ինկած չըջանը ընեն քա-
ղաքին և փողերը հնչեցնեն . իսկոյն պարիսպները պիտի
խշան և քաղաքը պիտի գրաւէք» :

Այդպէս ալ եղաւ : Հազիւ փողերը հնչած էին , Ե-
րիքովի պարիսպները կործանեցան և Իսրայելացիք գրա-
ւեցին քաղաքը :

Յեսու կռուեցաւ նաև ՚ինգ թագաւորներու հետ ,

որոնք միարանած էին իրեն դէմ: Կռիւի ատեն՝ վախցաւ
որ օրը շուտով կը լրանայ, որով չի կրնար թշնամիներուն
կատարելապէս յաղթել, և Աստուծոյ աղաչելով կեցուց
արեւը, մինչև որ թշնամիները թոլորովին բնաջինջ ըրաւ:



Յեսու մեծ քար մը տնկեց

Յեսույ, իրենց գրաւած երկիրները տասերկու մասե-
րու բաժնեց և Իսրայելացւոց տասերկու ցեղերուն մէջ
մէկ մաս տալով, ըսաւ որ միշտ հնազանդին Աստուծոյ և
անոր պատուէրները գործադրեն:

Իսրայելացիք խոստացան, և Յեսու, իբր նշան առը
խոստումին, մեծ քար մը տնկեց:

Յեսու մեռաւ խոր ձերու թեան մէջ, 110 տարեկան:
Իսրայելացիք Սիւլքէմ քաղաքին մէջ թաղեցին Յով-
սէփի ոսկորները զորս իրենց հետ բերած էին Եգիպտոսէն
երած առանձին:

Հրահանգ.— Իսրայելացիք ինչպէ՞ս անցան Յորդանոսէն. —
Ինչպէ՞ս առնուեցաւ Երեմովը.— Ինչ էր Տապանակը, Ինչ պահ-
ուած էր տնոր մէջ.— Յեսուի տնկած քարը ինչի՞ նշան էր:

Գ. ԴԱՏԱԻՈՐՆԵՐԸ

26. Գ Ե Դ Է Ո Ն


Յեսուի մեռնելէն վերջ, Իսրայելացիք կը կառավար-
ուէին դատաւորներու միջոցաւ: Բայց ժամանակ անցնե-
լով նորէն մուսցան Աստուածը, սկսան կուռքեր պաշտել
և Անոր անհաճոյ բաներ ընել: Աստուած ալ իբր պատիժ՝
զանոնք մատնեց Մադիամի ժողովուրդին, որ շատ նե-
զութիւններ տուաւ Իսրայելացւոց:

Երբ Աստուած անոնց պատիժը բաւական համարեց,
Մանասէի ցեղէն Գեղէոն անուն բարի մարդու մը երեւ-
լով, ըսաւ. «Գնա՛ աղատէ Իսրայելի ժողովուրդը, ես
քաւ հետդ պիտի ըլլամ»: Պատուիրեց նաև որ կործանէ
Իսրայելացւոց պաշտած Բահաղ կուռքին սեղանը:

Գեղէոն կործանեց Բահաղի սեղանը, յետոյ առանց
դէնքի 300 մարդիկ առնելով, անոնց մէկ ձեռքը փող և
միւս ձեռքն ալ պարապ սափոր մը տուաւ, մէջը վա-
ռած ջահով մը և ըսաւ. «Երբ ես փող հնչեցնեմ, դուք
ալ հնչեցուցէ՛ք և սափորները գետին նետելով աղաղա-
կեցէ՛ք.— «Հո՛ս է Աստուծոյ ու Գեղէոնի սուրը»:

Գեղէոն և իր մարդիկը գլշերանց մտան Մադիա-
մացւոց բանակը, այնպէս ըրին, և զանոնք այն աստի-
ճան վախցուցին որ սկսան իրար կոտորել ու փախչիլ, օ-
րով յաղթութիւնը Իսրայելացւոց մնաց:

Գեղէնն քառասուն տարի դատաւոր եղաւ և քա-



Աբիմեղէք

ման միջոցին կին մը երկանաքարի կտորով մը ջախջախեց իր գլուխը:

Հրահանգ.—Յեսուի մեռնելէն վերջ ինչ եղան իսրայելացիք, և ինչո՞ւ Աստուած նորէն պատժեց զանոնք. — Ո՞ր էր Գեղէնն և ինչպէ՞ս փրկեց իսրայելացիները.—Ո՞ր յաջողեց Գեղէնն, և ինչո՞ւ պատժուեցաւ.— Ի՞նչ է երկանաքարը, ինչի՞ կը գտնուի:

27. ԻՍՐԱՅԵԼԱՅԻՔ ՆՈՐԷՆ ԳԵՐԻ

Իսրայելացիք նորէն սկսան կուռք պաշտել, և Աստուած ալ զանոնք պատժելու համար Ամոնացւոց ձեռքը գերի դարձուց:

Յեփթայէ դատաւորը սակայն կուռեցաւ Ամոնացւոց դէմ, Աստուծոյ ուխտ ընելով որ եթէ յաղթէ՝ յաղթութենէն վերջ առաջին դէմը ելողը Իրեն պիտի զոհէ:

Երբ Ամոնացւոց յաղթելէն ետքը քաղաք կը դառնար, իր մէկ հատիկ աղջիկը դէմը ելաւ իր յաղթութիւնը շնորհաւորելու: Յեփթայէ շատ տրտմեցաւ, բայց յարգեց Աստուծոյ տուած խոստումը և աղջիկը զոհեց:

Վերջէն՝ իսրայելացիք դարձեալ Աստուծոյ պատուէրները մոռցան, և այս անգամ ալ Փղշտացւոց ձեռքը գերի ինկան:

Քառասուն տարի այդպէս գերի մնալէ վերջ, Աստուած անոնց դատաւոր կարգեց Սամիսոնը որ արտակարգ ուժի տէր մարդ մըն էր:

Անգամ մը՝ ամուսնանալու համար Փղշտացւոց երկիրը գացած ատենը՝ երիտասարդ առիւծի մը հանդիպելով, զայն խեղդեց թևերուն մէջ և անոր կզակները բաժնեց: Ղերադարձին՝ տեսնելով որ մեղուներ մեղը չինսած են առիւծին բերնին մէջ, առաւ մեղրէն և երբ հարսնիքը կառարկու համար աղջկան տունը գնաց, առաջարկեց հետեւեալ հանելուկը. «Կերողէն կերակուր, հզորէն անուշ ելաւ, ի՞նչ է»: Եթէ հանելուկը լուծէին՝ երեսուն ձեռք զգեստ պիտի տար անոնց. իսկ եթէ չկարենային, անոնք իրեն նոյնքան զգեստ պիտի տային:

Սամիսոնի կինը ամուսնէն հասկցաւ հանելուկին իմաստը, և իմացուց միւսներուն. անոնք ալ ըսին Սամի-

տանի. «Մեղրէն անուշ ինչ կայ, առիւծէն հզոր ո՞վ կայ»: Սամփսոն հասկցաւ կնոջը խարէութիւնը, բայց ձայն



Սամփսոն առիւծ մը խղրած էր


չհանեց: Յետոյ, խոստումը յարգելու համար, Ասկաղոն իջաւ, երեսուն Փղշտացի սպաննեց, և անոնց հագուստները առնելով բերաւ սոււաւ հանելուկը լուծողներուն:

Հրահանգ.— Իսրայելացիք ինչո՞ւ նորէն գերի ինկան.— Ո՞վ ազատեց զերեսք Ամոնացւոց ձեռքէն և այդ ազատութիւնը ի՞նչ բարեց իրեն.— Ո՞վ էր Սամփսոն.— Ի՞նչ կը նշանակէր իր առաջարկած հանելուկը:

28. ՍՍՄՓՍՈՆ ՓՂՇՏԱՅԻՈՅ ԴԷՄ

Ժամանակ մը ետքը Սամփսոն՝ տեսնելով որ Փղշտացիք իր կնիւր ուրիշի մը հետ ամուսնացուցեր են, բարկացաւ, 300 աղուէս բռնելով զոյգ զոյգ պոչերնէն իրա-

բու կապեց, պոչերնուն մէջտեղը վաւ ջահեր հաստատեց և զանոնք արծակեց Փղշտացւոց դաշտերուն մէջ, որոնց բովանդակ հունձքը, ինչպէս նաև ձիթենիի ծառերը այրեցան:



Սամփսոնի մահը

Փղշտացիք վրէժ լուծելու համար նախ այրեցին Սամփսոնի կնին ու աները, յետոյ պահանջեցին Իսրայելացիներէն որ Սամփսոնը կապած իրենց յանձնեն: Սամփսոն պատուիրեց Իսրայելացւոց որ անոնց հրամանը կատարեն, և անոնք ալ հնազանդեցան: Փղշտացիք կ'ուրախանային որ իրենց թշնամին ձեռք ձգած են, երբ Սամփսոն փրցուց զինքը կաշկանդող չուսնները և գետնէն իջու ծնօտ մը գտնելով անով 1000 հոգի սպաննեց:

Ուրիշ անգամ մը Փղշտացւոց Քազա քաղաքը կը գտնուէր, երբ դուռը վրայէն գոցեցին որպէս զի չփախչի և զինքը սպաննեն: Բայց Սամփսոն գիշերանց չալկեց քաղաքին ծանր դուռերը և չալակը առնելով տարաւ մօտը գտնուող լեռան մը վրայ ձգեց:

Քիչ ետքը Սամիսոն ամուսնացաւ Դալիյա անուն կնոջ մը հետ : Փղշտացիք կաշառեցին զայն և հասկցան որ Սամիսոնի զօրութիւնը մազերէն է , որոնք բնաւ չէին կտրուած : Դալիյա՝ Փղշտացոց խորհուրդով՝ Սամիսոնի քնացած ատենը կտրեց անոր մազերը , որով ոչժը սպառեցաւ : Փղշտացիք իսկոյն բռնեցին զայն և երկու աշուրները փորելով ալիւր ազալ կու տային :

Օր մը մինչդեռ Փղշտացոց իշխանները Դաքոն կուռքին զո՛հ կը մատուցանէին , մտածեցին Սամիսոնը բերել և իրենց առջև խաղցնելով զուարճանալ : Սամիսոնի մազերը սակայն բուսած էին և վերագտած էր իր ոչժը : Իսկոյն , երկու ձեռքերը նետեց տաճարը բռնող սիւներուն , սարսեց զանոնք և ահագին շէնքը փլաւ , իրեն սակ թաղելով աւելի քան 3000 Փղշտացի , բոլոր իշխանները , ու նաև Սամիսոնը որ նոյնպէս մեռաւ :

Հրահանգ.—Սամիսոն ի՞նչ վնասներ հասցուց Փղշտացոց.— Ի՞նչ էր Սամիսոնի ոչժին գաղտնիքը.— Ի՞նչ քաջագործութիւններ ըջաւ այդ ոչժին շնորհիւ.— Ի՞նչպէս կորսնցուց իր ոչժը.— Ե՞րբ և ի՞նչ տարագաներու մէջ մեռաւ Սամիսոն :

29. Հ Ռ Ո Ւ Թ

Այն ատենները սով եղաւ Իսրայելացոց մէջ և Եղիմելէք անունով մարդ մը իր Նոէմի անուն կնոջ ու երկու զաւակներուն հետ Բեթղէէմ քաղաքէն ելլելով գնաց Մովաբացոց երկիրը , ուր իր զաւակները ամուսնացան : Եղիմելէքի մեռնելէն վերջ՝ Նոէմի լսեց որ Բեթղէէմի մէջ սովը դադրեր է և պատրաստուեցաւ հոն դառնա-

լու : Հարսերէն մէկը՝ Հուլթ՝ որուն ամուսինը մեռած էր , չուզեց իրմէ բաժնուիլ , և իրեն ընկերացաւ զինքը խնամելու համար : «Քու ազգգ իմ ազգս և քու Աստուածդ իմ Աստուածս պիտի ըլլայ» , ըսաւ անոր :



Հուլթի և Պօօզի հանդիպումը

Երբ Բեթղէէմ հասան , հունձքի ատեն էր : Օր մը՝ Հուլթ Պօօզի արտը գնաց հասկ ժողվելու . Պօօզ տեսաւ զայն և իր վերակացուին հարցուց թէ ո՞վ է այդ աղջիկը : Վերակացուն ալ ըսաւ թէ Նոէմիի հարսն է :

Պօօզ գիտէր թէ Հուլթ ի՞նչ անձնուիրութեամբ իր կեարքը հետեւած էր . այս պատճառաւ , զայն վարձատրեց և պատուիրեց որ միշտ արտը զայ հասկ ժողվելու : «Ինձի ամէն բան պատմեցին , ըսաւ . դուն թողեր ես

հայրդ, մայրդ ու հայրենիքդ, և քեզի անծանօթ երկիր մը եկեր ես, քու կեսուրդը խնամելու համար. հետեւաբար արժանի ես վարձատրութեան»:

Ճաշի ատենը Պօօզ Հռութին հաց տուաւ. բայց ան կէսը միայն կերաւ և միւս կէսը պահեց կեսորջր: Յետոյ, մինչդեռ դարձեալ հասկ կը ժողվէր, Պօօզ պատուիրեց ծառաներուն որ աւելի մաս մը հասկ ալ ձգեն անոր:

Երբ Հռութ տուն դարձաւ, կեսուրը հարցուց թէ քերկէ՞ հաւաքած էր բերած հասկերը: Հռութ պատմեց նոյն օրուան եղածը, և Նոէմի պատասխանեց. «Աստուած օրհնէ Պօօզը, անիկա մեր ազգականն է»:

Հռութ ամէն օր Պօօզի դաշտը կ'երթար հասկ ժողվելու: Վերջէն Պօօզ՝ անոր առաքինութիւնը տեսնելով՝ ամուսնացաւ հետը:

Եւ այսպէս առաքինութիւնը վարձատրուեցաւ:

Հռութի թոռան զաւակը՝ Դաւիթ՝ վերջէն Իսրայելացւոց թագաւոր պիտի ըլլար:

Հրահանգ. — Ո՞վ էր Հռութ և ի՞նչ պայմաններու մէջ Բեթղէէմ եկաւ. — Ի՞նչ պատահեցաւ Պօօզի արտին մէջ, և Պօօզ ինչո՞ւ Հռութը վարձատրեց:

30. ՀԵՂԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ

Սամիսոնէն ետքը Իսրայելացւոց դատաւոր եղաւ Հեղի քահանայապետը: Ասոր օրով՝ եղկանա անունով մարդ մը և իր Աննա կինը, զաւակ չունենալով, ամէն տարի Սելով կ'երթային Աստուծոյ զոհ մատուցանելու, խնդրելով որ իրենց զաւակ մը պարգևէ:

Աստուած լսեց անոնց խնդիրքը և Աննա ունեցաւ

զաւակ մը որուն անունը Սամուէլ է. այսինքն Աստուածատուր դրին: Աննա Սամուէլը Հեղիի յանձնեց, որպէս զի տաճարին մէջ Աստուծոյ սպասուորէ:

Հեղի երկու զաւակ ունէր, որոնք քահանայ էին, բայց շատ անշնորհ մարդիկ ըլլալով, ժողովուրդը կը կեղեքէին և անկարգ կեանք մը կ'անցընէին: Հեղի կը տեսնէր անոնց յոռի վարմունքը, բայց ձայն չէր հաներ:



Սամուէլ ձայն մը լսեց

Օր մը, մինչդեռ Սամուէլ քնացած էր խորանին առջև, լսեց ձայն մը որ զինքը կը կանչէր: Սամուէլ կարծեց թէ Հեղին է կանչողը. բայց անիկա ըսաւ որ ինք չէ կանչած: Քիչ ետքը ձայնը նորէն լսուեցաւ: Սամուէլ դարձեալ կարծեց թէ Հեղին է և հարցուց անոր թէ ի՞նչ կ'ուզէ: Այս անգամ՝ Հեղի հասկեցաւ որ Աստուածն է Սամուէլը կանչողը և անոր ըսաւ որ եթէ անգամ մըն ալ նոյն ձայնը լսէ, պատասխանէ. «Ըսէ՛, Տէր, քու ծառայողը լսէ»:

Ձայնը երրորդ անգամ մըն ալ իմացուեցաւ, և Սամուէլ պատասխանեց Հեղիի պատուիրած կերպով: Այն ատեն Աստուած ըսաւ իրեն թէ Հեղին ու իր զաւակները պիտի պատժէ, վերջինները իրենց չարութեան պատճառաւ, և առաջինն ալ անոր համար որ իր զաւակները չի պատժեր:

Իրօք քիչ ետքը Փղշտացիք յարձակեցան Իսրայելացւոց վրայ: Ասոնք, Տապանակը պատերազմի տարին, անոր զօրութեամբ յաղթելու համար, բայց չարաչար պարտուեցան. իրենցմէ սպաննուեցան 30,000 հոգի, որոնց մէջ կը գտնուէին նախ Հեղիի երկու որդիքը: Տապանակն ալ գրաւուեցաւ Փղշտացւոց կողմէ:

Երբ Հեղի լսեց այս տխուր լուրը, աթոռէն գլորելով մեռաւ:

Հրահանգ.—Ո՞վ էր Հեղի և ինչո՞ւ Աստուած դժգոհ էր անկէ.—Ինչ պայմաններու մէջ ծնաւ Սամուէլ.—Ուրի՞շ ո՞վ իրեն պէս ծնած էր.—Տապանակը ինչ նշանակութիւն ունէր Իսրայելացւոց համար:


31. Ս Ա Մ Ո Ւ Է Լ

Փղշտացիք տապանակը տարին դրին իրենց կուռքերուն քով, բայց երբ առտուն կուտուն զացին, տեսան որ կուռքերը երեսի վրայ գետին խնկեր և փշրուեր են: Այն ատեն տապանակը վերադարձուցին Իսրայելացւոց:

Սամուէլ՝ որ Հեղիի մեռնելէն վերջ դատաւոր եղած էր, Տապանակին վերադարձէն օգտուելով, իր ժողովուրդը հաշտեցուց Աստուծոյ հետ: Իսրայելացիք՝ որոնք նորէն կուպաշտութեան սկսած էին, լքեցին կուռքերը և դարձեալ Աստուծոյ նուիրուեցան:

Ատոր վրայ, Փղշտացիք անգամ մըն ալ յարձակեցան անոնց դէմ: Սամուէլ սակայն Աստուծոյ զօն մատուցանելով Անոր օգնութիւնը հայցեց, և Փղշտացիք ամբողջով Անոր օգնութիւնը հայցեց, և Փղշտացիք ծանր պարտութիւն մը կրեցին: Անկէ վերջը, որքան ատեն որ Սամուէլ ողջ էր, բնաւ չկուռեցան Իսրայելացւոց հետ:

Երբ Սամուէլ ծերացաւ, իր զաւակները դատաւոր



Սամուէլ կ'օծէ Դաւեթը

նշանակեց իրեն տեղ: Բայց անոնք ուղիղ մարդիկ չէին և ժողովուրդը կը նեղէին: Այս պատճառաւ Իսրայելի ծերերը Արիմաթէմի մէջ հաւաքուելով խնդրեցին Սամուէլէն որ իրենց թագաւոր մը ընտրէ: Սամուէլ կը վարանէր, բայց Աստուած ըսաւ իրեն որ հնազանդի ժողովուրդին:

Այդ միջոցին Բենիամինի ցեղէն Կիս անուն մարդու մը էջերը կորան: Կիսի զաւակը՝ Սաւուղ՝ հօրը էջերը փնտռելու ելլելով հասաւ Արիմաթէմ քաղաքը: Աստուած զայն ցոյց տուաւ Սամուէլի և ըսաւ. «Ահա այժմ մարդը պիտի կառավարէ իմ ժողովուրդս»:

Սամուէլ իսկոյն առաւ իւղի սրուակը, և Սաւուղը Իսրայելացւոց թագաւոր օծեց: Անկէ ետքը Աստուծոյ հոգին սկսաւ վարել Սաւուղը:

Հրահանգ.—Տապանակը ինչպէ՞ս վերադարձուեցաւ Իսրայելացւոց.—Ո՞վ յաջորդեց շեղի, և ի՞նչ պատահեցաւ անոր օրով.— Իսրայելացիք ինչո՞ւ թագաւոր մը խնդրեցին.—Սաւուղ ինչպէ՞ս թագաւոր օծուեցաւ:

Ե. Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ը

32. Ս Ա Ի Ո Ի Ղ

Սաւուղ թագաւոր ընտրուելուն պէս պատերազմեցաւ Ամոնացւոց հետ և Պաղեստինը ազատեց: Փղշտացիք, վախնալով որ Իսրայելացիները իրենց վրայ կը յարձակին, բոլոր դարձնոցները քանդած էին որպէս զի չը կարենան գէնք չինել: Սաւուղ երկրագործական գործիքներով զինեց իր ժողովուրդը և յաղթեց Փղշտացւոց: Այս պատերազմին մէջ նշանաւոր հանդիսացաւ Սաւուղի քաջ զաւակը, Յովնաթանը:

Յետոյ Աստուած Սամուէլի միջոցաւ հրամայեց Սաւուղի որ զարնէ նաև Ամաղեկացիները, որոնք Իսրայելացւոց շատ նեղութիւն պատճառած էին: Այս հրամանը տուած ատենը Աստուած պատուիրեց որ բոլոր Ամաղեկացիներն ալ, իրենց անասուններով ջարդէ: Սամուէլ սակայն, Ամաղեկացւոց յաղթելէ և ամէնքն ալ սուրէ անցընելէ վեր, ողջ պահեց անոնց Ագագ թագաւորը, ոչխարներուն աղէկներն ալ պահեց, ու միայն անպիտան անասունները ջարդել տուաւ:

Աստուած՝ Սաւուղի անհնազանդութիւնը տեսնելով, բարկացաւ և Սամուէլի յայտնեց թէ Սաւուղը թագաւոր ընելուն զղջացած է: Սամուէլ գնաց Սաւուղը փնտռելու, և Աստուծոյ դժգոհութիւնը յայտնելու: Գաղգաւ զայի մէջ վերջապէս գտաւ զայն ու տեսաւ որ զոհ կը մատուցանէ:

Սաւուղ, Սամուէլի հարցման վրայ խոստովանեցաւ թէ Ամաղեկացւոց լաւագոյն կենդանիները ողջ թողած է:

Աստուծոյ զոհելու համար. բայց Սամուէլ յայտնեց իրեն թէ հնազանդութիւնը աւելի հաճելի է Աստուծոյ քան զոհը: Յետոյ յարեց թէ այլևս Իսրայելի թագաւոր չէ:

Սաւուղ սկսաւ պաղատիլ ու ներողութիւն խնդրել. Սամուէլ սակայն ականջ չկատեց և սպաննել տուաւ Ամաղեկացոց Ագագ թագաւորը, ըսելով. «Ինչպէս որ քու սուրդ կիները անդաւակ թողուց, այնպէս ալ թող քու մայրդ անդաւակ մտայ»: Յետոյ Սամուէլ Ռամա գնաց, և ալ բնաւ Սաւուղի երեսը հնայեցաւ, թէև միշտ անոր անհնազանդութեան վրայ կը խորհէր ու կը տխրէր:

Հրահանգ.—Սաւուղ թագաւոր ընտրուելէն վերջ որոնց հետ պատերազմեցաւ. — Փղշտացիք Ինչո՞ւ քանդած էին Իսրայելացոց դարբնոցները. — Սաւուղ Ինչպէ՞ս կուռեցու Փղշտացոց դէմ. — Ինչո՞ւ Սաւուղ շնորհազուրկ եղաւ. — Ինչ կը նշանակէ սրէ անցընել:

33. Դ Ա Ի Ի Թ

Աստուած՝ Սամուէլի տխրութիւնը տեսնելով՝ ըսաւ անոր. «Նիր Բեթղէէմ գնա, և գաիր Յէսսէն որուն զաւակներէն մէկը թագաւոր պիտի օծես»: Յէսսէ Հուրթի թոռն էր:

Սամուէլ գնաց Յէսսէի մօտ, որ իր եօթ զաւակները ցոյց տուաւ անոր. բայց Աստուած յայտնեց թէ անոնց մէջ չէ իր ընտրածը: Այն ատեն Սամուէլ հարցուց Յէսսէի թէ ուրիշ զաւակ չունի: Յէսսէ ալ պատասխանեց թէ պզտիկ տղայ մըն ալ ունի որ խաչնարած է:

Սամուէլ բերել տուաւ այդ պզտիկը որ Դաւիթ կը կոչուէր: Աստուած ըսաւ Սամուէլի. «Նիր և օծէ ձախ»

կա, որովհետեւ ատ է իմ ընտրածս»: Եւ Սամուէլ զայն թագաւոր օծեց: Այն օրուրէն սկսեալ Աստուծոյ հոգին հեռացաւ Սաւուղէն և իջաւ Դաւիթի վրայ:

Սաւուղ՝ Աստուծոյ հոգիին իրմէ բաժնուելէն վերջ, կը տանջուէր չար ոգիէն: Զինքը հանդարտեցնելու հա-



Դաւիթ քնար կը զարնէ Սաւուղի առջեւ

մար՝ իր մարդիկը մտածեցին լաւ քնար զարնող մը գտնել: Սաւուղ հաւանեցաւ. Աստուծոյ վրայ, իր ծառայներէն մէկը ըսաւ թէ Բեթղէէմի մէջ շատ լաւ քնար զարնող մը կայ. Յէսսէի զաւակը, որ Դաւիթ կը կոչուի: Սաւուղ իսկոյն Դաւիթը իր մօտ բերել տուաւ:

Այս կերպով Դաւիթ մտաւ Իսրայելի արքունիքը: Սաւուղ չուտով սկսաւ սիրել զայն. երբ չար ոգին իր վրայ կուգար, Դաւիթ կ'առնէր քնարը, կը նուագէր ու կ'երգէր, որով Սաւուղ կը հանգստանար:

Հրահանգ. — Աստուած ո՞վ թագաւոր ընտրեց Սաւուղի տեղ. — Ո՞վ էր Յէսսէ. — Դաւիթ Ինչպէ՞ս Իսրայելի արքունիքը գամանեց. — Ինչո՞ւ Սաւուղ քնար զարնողի մը պէտք տեսաւ:

34. ԳՈՂԻԱԹԻ ՄԱՀԸ

Փղշտացիք նոր զօրք հաւաքելով Իսրայելացւոց վրայ քալեցին: Իրենց բանակին մէջ կար անազին հսկայ մը որ Գողիաթ կը կոչուէր: Երբ երկու բանակները դէմ առ դէմ եկան, Գողիաթ՝ լաւ սպառազինուած ու զրահապատ՝ առաջ անցաւ և ըսաւ Իսրայելացւոց. «Թող ձեզմէ



Գողիաթի մահը

մէկը զայ ու մենամարտի ինծի հետ. եթէ ես յաղթուիմ, մենք ձեր ծառաները կ'ըլլանք. իսկ եթէ ձեր մարդը յաղթուի, դուք մեր ծառաները կ'ըլլաք»: Սաւուղ և Իսրայելացիք, այս հրաւէրը լսելուն պէս սկսան վախճալ ու չէին համարձակեր կուռելու:

Դաւիթ ըսաւ Սաւուղի թէ ինք պատրաստ է հսկային հետ կուռելու: Սաւուղ ուղեց զայն ետ կեցնել,

բայց անոր պնդումներուն վրայ, տուաւ իր զրահները որ հագնի և երթայ կուռի: Դաւիթ չկրցաւ զրահները հագնիլ, որովհետեւ շատ ծանր էին. միայն գաւազան մը, հինգ քար և իր պարսատիկը առնելով քալեց հսկային դէմ:

Գողիաթ այդ պատանին տեսնելով սկսաւ հեգնել: Սակայն Դաւիթ պարսատիկով քարը անանկ ուժով նետեց անոր գլխուն որ հսկան գետին փռուեցաւ: Այն առտն՝ Դաւիթ անոր վրայ խոյացաւ, քաշեց սուրը մէջքէն և գլուխը կտրեց: Ասոր վրայ, Իսրայելացիք սիրա առին և յաղթանակի աղաղակներ արձակելով հալածեցին Փղշտացիները:



«Սաւուղ հազար սպաննեց, Դաւիթ տասը հազար...»

Վերադարձին՝ կիները թմբուկներով և ծնծղաներով Դաւիթի ընդ առաջ եկան: «Սաւուղ հազար հոգի սպաննեց, իսկ Դաւիթ տասը հազար», կ'ըսէին երգելով: Ասոր վրայ, Սաւուղ սկսաւ նախանձիլ Դաւիթէն:

Հրահանգ. — Ո՞վ էր Գողիաթ, և ինչո՞ւ Փղշտացիք կը վախճային անոր հետ կռուելու. — Դաւիթ ինչո՞վ յաղթեց անոր և ինչ հետեւանք ունեցաւ իր յաղթութիւնը. — Ինչ է պարսաստիկը. — Սաւուղ ինչո՞ւ կը նախանձէր Դաւիթէն:

35. ՍԱԻՈՒՂԻ ՄԱՀԸ

Սաւուղի նախանձը երթալով կը մեծնար: Ժողովուրդը քանի՜ Դաւիթը կը սիրէր, ինք ալ այնքան կ'ատէր: Այդ ատելութենէն դրդուած, մէկ քանի անգամ փորձեց զայն սպաննել:

Օր մը, մինչդեռ Դաւիթ քնար կը զարնէր իր առջև, գեղարդը նետեց անոր ետեւէն, բայց պատանին կըրցաւ փախչիլ ու ազատիլ:

Սաւուղ խոստացաւ իր Մեղքող աղջիկը կնութեան տալ Դաւիթի եթէ 100 Փղշտացի սպաննէ: Կը յուսար որ այդ կռուին մէջ Դաւիթ կը սպաննուի: Բայց անիկա 200 Փղշտացի սպաննեց և ամուսնացաւ Մեղքողի հետ:

Յետոյ Սաւուղ իր Յովնաթան զաւկին պատուիրեց որ մեռցնէ Դաւիթը. բայց Յովնաթան կը սիրէր զայն ու փոխանակ մեռցնելու, անոր խորշուրդ տուաւ որ փախչի:

Ուրիշ անգամ մը՝ Սաւուղ իր աղջկան պալատը պաշարել տուաւ, որպէս զի Դաւիթը բռնեն ու մեռցնեն: Բայց Մեղքող որ կը սիրէր իր ամուսինը, զայն փախցուց պատուհանէն:

Այս փորձերուն անյաջողութենէն կատրելով, Սաւուղ քիչ մնաց պիտի սպաննէր Յովնաթանը որ կը մերժէր Դաւիթը մեռցնել, և միշտ վտանգի պահուն լուր կուտար անոր:

Իսկ Դաւիթ, մէկ քանի անգամ Սաւուղը սպաննելու առիթներ ունեցաւ բայց չուզեց զայն մեռցնել:

Օր մը, մինչդեռ այրի մը մէջ ապաստանած էր իր ընկերներուն հետ, Սաւուղ նոյն այրը մտնելով քնաջատար: Դաւիթ անոր վերաբերէն կտոր մը միայն կրտրեց, հասկցնելու համար որ եթէ ուզէր՝ կրնար զինքը սպաննել:



Դաւիթ Սաւուղի վերաբերէն կտոր մը կտրեց

Դարձեալ անգամ մը գիշերանց անոր բանակատը մտաւ. Սաւուղ և իր բոլոր մարդիկը կը քնանային: Դաւիթ նորէն անոր կեանքին չըպաւ, միայն գեղարդը և ջուրի կուժը առնելով հեռացաւ:

Այդ ատենները մեռաւ Սամուէլ, որուն մարմինը

Իսրայելացիք Արիմաթէմի մէջ թաղեցին և սուգ բերեցին :

Քիչ ետքը Փղշտացիք նորէն պատերազմեցան Իսրայելացւոց հետ և չարաչար պարտութեան մատնեցին զանոնք : Յովնաթան և իր երկու եղբայրները սպաննուեցան կռուին մէջ : Սաւուղ ալ վիրաւորուելով ինքզինքը սպաննեց : Թշնամիները Սաւուղի և Յովնաթանի գլուխը կտրելով իրենց երկիրը զրկեցին ու կախեցին Բեթսանայի պարիսպէն :

Դաւիթ մեծ ցաւ զգաց Սաւուղի և Յովնաթանի մահը լսելով , ու ողբ յօրինեց իր սիրական Յովնաթանին վրայ :

Հրահանգ.— Սաւուղ ինչ միջոցներու դիմեց Դաւիթը ըստ պաննելու համար.— Դաւիթ ինչ կերպով պատասխանեց անոր չարութեան.— Ինչպէս մեռաւ Սաւուղ.— Ո՞ր նշանաւոր մարդը մեռաւ այս դէպքերուն ատենը :

36. ԴԱՒԻԹ ԹԱԳԱԻՈՐ ԿՐՆՏՐՈՒԻ

Սաւուղի մեռնելէն ետքը՝ Աստուծոյ հրահանգով Դաւիթ Բերրոն քաղաքը գնաց և այնտեղ թագաւոր ընտրուեցաւ Յուդայի ցեղին կողմէ : Իսկ միւս ցեղերը թագաւոր ընտրեցին Սաւուղի Յեփուսթէ զաւակը : Ատոր վրայ թշնամութիւն տիրեց Դաւիթի ու Յեփուսթէի միջև : Եօթ տարի տևող կռիւներէ ետք , Յեփուսթէ սպաննուեցաւ :

Դաւիթ շատ մը յաղթական պատերազմներ մղելէ վերջ գրաւեց նաև Երուսաղէմը և այնտեղ հաստատեց իր թագաւորական աթոռն ու Տապանակը : Շատ բարեպաշտ

էր և աղուոր սաղմոսներ յօրինելով ու քնար գարնելով՝ ժողովուրդին հետ կը փառարանէր Աստուածը :




Դաւիթ Սաղմոս կ'երգէ

Անգամ մը սակայն ծանր մեղք մը գործեց . իր սպաներէն Ուրիայի Բերսարէ անուն կնոջ հետ ամուսնանալու համար , Ուրիան վտանգաւոր կռուի մը զրկելով մեռցրնել տուաւ : Յետոյ ամուսնացաւ Բերսարէի հետ :

Աստուած սրտմտեցաւ և անոր մօտ զրկեց Նաթան Մարգարէն որ հետեւեալ առակը պատմեց զայն կշտամբելէ առաջ .— «Քաղքի մը մէջ երկու մարդիկ կային . մէկը հարուստ էր և միւսը աղքատ : Հարուստը շատ մը ոչխարներ և կովեր ունէր , իսկ աղքատը միայն պզտիկ զառնուկ մը գոր գնած էր և կր մեծցնէր զուրգուրան-

քով: Օր մը, հարուստը կոչունք մը պիտի տար. բայց փոխանակ իր հօտէն ոչխար մը կտրելու, աղքատին գառնուկը յափշտակեց...»:

Երբ այս պատմութիւնը լսեց, Դաւիթ բարկացաւ և



Նաթան կը կշտամբէ Դաւիթը

ըսաւ. «Պէտք է մեռցնել այդ մարդը»: Այն ատեն՝ Նաթան յարեց թէ ինք, Դաւիթ, նոյն բանը ըրած է Ուրիան մեռցնել տալով: Դաւիթ սկսաւ լալ ու թողութիւն խնդրել Աստուծմէ:


Հրահանգ.—Երբ թագաւոր ընտրուեցաւ Դաւիթ և ինչ ըրաւ.—Ո՛րչ կերպով մեղանչեց Աստուծոյ դէմ.—Ո՛րչ էր Նաթան և ինչ կերպով Դաւիթը կշտամբեց:

37. ԴԱՎԻԹԻ ՄԱՀԸ

Աստուած Դաւիթի գղջուծին վրայ ներեց յանցանքը. բայց կարգ մը պատիժներ սուաւ նոյն ատեն:

Նախ՝ Բերսաբէէն ծնած զաւակը մեռաւ: Յետոյ, Ամոն անուն զաւակը սպաննուեցաւ իր միւս զաւակէն՝ Աբիսոդոմէն, որ քիչ ետ-

քը իրեն դէմ ալ ապրտամբեցաւ, զինքը ըսպաննելու մտքով: Դաւիթ նախ փախաւ, բայց չուտով զօրքը հաւաքելով պարտութեան մասնեց Արիսոդոմը, որ մինչդեռ Նորի մը վրայ հեծած կը փախչէր անտառի մը մէջէն, իր երկար մազերը կաղնիի մը ճիւղերուն կառչեցան: Այդպէս կախուած մնալով չկրցաւ փախչիլ և ըսպաննուեցաւ հօրը Յովաբ զօրավարին ձեռքով:



Աբիսոդոմի մահը

Դաւիթ շատ ցաւ զգաց իր զաւակին մահը լսելով: Կ'ուզէր մեծ տաճար մը շինել Աստուծոյ համար, բայց Նաթան մարգարէն ըսաւ թէ այդ գործը իր Սողոմոն զաւակին պիտի վիճակի, որովհետև ինք պատերազմ ըրած և մարդ սպաննած է:

Ուրիշ անգամ մը Դաւիթ սնապարծութեամբ համ-

բել տուաւ ժողովուրդը . Աստուած նորէն բարկացաւ , և որովհետեւ ժողովուրդէն ալ շատ գոհ չէր , Գաթ մարգարէին միջոցաւ Դաւիթի ըսաւ որ ընտրէ հետեւեալ երեք պատիժներէն մէկը . — Կամ երեք տարի սով , կամ երեք



Նաթան կը յայտնէ Դաւիթի Թէ երուսաղէմի Տաճարը
իւր գաւակը պիտի շինէ

որ մահ , կամ երեք ամիս անընդհատ հալածանք իր թշնամիներէն : Դաւիթ երկրորդը ընտրեց և երեք օրուան մէջ 70,000 հօգի մեռան իր ժողովուրդէն :

Դաւիթ՝ քառասուն տարի թագաւորելէ վերջ մեռաւ եօթանասուն տարեկան : Մեռնելէն առաջ իրեն յաջորդ կարգեց Սողոմոն զաւակը որ դեռ հազիւ տասերկու տարեկան էր : Իր մեծ զաւակը՝ թէև աշխատեցաւ Յովարի օգնութեամբ հօրը գահուն տիրանալ , բայց Սողոմոն երկուքն ալ մեռցնել տուաւ :

Հրահանգ. — Աստուած ինչպէ՞ս պատժեց Դաւիթը , — Ինչպէ՞ս մեռաւ Աբիսողոմ . — Ինչո՞ւ Նաթան մարգարէն չուզեց որ Դաւիթ շինէ երուսաղէմի տաճարը . — Դաւիթ ինչո՞ւ երկրորդ անգամ մըն ալ պատժուեցաւ . — Ո՞վ սպաննեց Աբիսողոմը , և ինչ տղ ինչպէ՞ս մեռաւ :

38. ՍՈՂՈՄՈՆ

Սողոմոն իր հօրը պէս բարեպաշտութեամբ և արդարութեամբ սկսաւ կառավարել : Աստուած՝ երազին մէջ անոր երեցաւ և ըսաւ . « Ընդրէ՛ ինչ որ կ'ուզես » : Սողոմոն պատասխանեց . « Տէ՛ր , քու ծառայիդ խելք տուր որպէս զի կարենայ չարը բարիէն զանազանել » :




« Երկուքի բաժնեցէք տղան . . . »

Այս խօսքը շատ հաճելի եղաւ Աստուծոյ : « Ընդիր-
ժըդ պիտի կատարեմ և դուն իմաստուն պիտի ըլլաս ,
ըսաւ . քեզի պիտի տամ նաև ինչ որ չխնդրեցիր , այսինքն
հարստութիւն և փառք » :

Օր մը՝ մինչդեռ արդարութիւն կը բաշխէր՝ երկու

կիներ ներկայացան իրեն: Անոնցմէ մէկը ըսաւ՝ իր ընկերուհին ցոյց տարով. «Այս կինը և ես մէկ տան մէջ կը բնակէինք. երկուքս ալ մէյ մէկ զաւակ ունեցանք: Գիշերը՝ անոր զաւակը կը մեռնի, և ինք իր մեռած տղան իմ անկողնիս մէջ դնելով, իմ զաւակս կ'առնէ իր քով. առտուն միայն հասկցայ որ փոխեր է զաւակս»:
Միւս կինը սակայն սկսաւ պնդել թէ ողջ տղան իրօք իրն է:



Երուսաղէմի Տաճարը

Այն ատեն Սողոմոն ըսաւ. «Սուր մը բերէք, երկուքի բաժնեցէք տղան և մէյ մէկ կտոր տուէք այս կիններուն: Իսկոյն՝ բուն մայրը, այն որ առաջին անգամ խօսած էր, ըսաւ. «Մի՛ սպաննէք պղտիկը, թող անոր արուի, կը բաւէ որ ողջ մնայ»: Մինչդեռ միւս կինը կ'ուզէր որ տղան կիսեն: «Տղան առաջին կնոջ տուէք, հրամայեց Սողոմոն, որովհետեւ ան է բուն մայրը»: Այս իմաստուն դատաստանը Իսրայելացւոց սքանչացում պատճառեց:

Սողոմոն՝ իր թագաւորութեան չորրորդ տարին սկսաւ Մորէա լեռան վրայ կառուցանել այն մեծ Տաճարը զոր

իր հայրը չէր կրցած շինել: Հազարաւոր մարդիկ աշխատեցան ատոր համար: Երբ շինութիւնը ամբողջացաւ, Սողոմոն Երուսաղէմ կանչեց երկրին բոլոր ձերբըր, իշխանները և ժողովուրդը: Քահանաները Տապանակը և բոլոր սրբազան անօթները Սիօն լեռան վրայէն Տաճարը փոխադրեցին և եօթ օր ու եօթ գիշեր սօն կատարուեցաւ: Այդ տօնախմբութեան առթիւ 22,000 եգ և 120,000 օչխար զոհուեցան Աստուծոյ, որ շատ գոհ մնաց Տաճարին շինութենէն:

Հրահանգ. — Սողոմոն ի՞նչ խնդրեց Աստուծմէ և Աստուած թնջով վարձատրեց զայն. — Սողոմոն ինչպէ՞ս դատեց երկու կիները և ինչչօն հասկցաւ բուն մայրը. — Ի՞նչ կը նշանակէ արդարուստեալ բաշխել. — Ի՞նչու Սողոմոն հայրը չէր կոցած շինել Աստուծոյ տաճարը:

39. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Սողոմոնի իմաստութեան համբաւը ամէն կողմ կը տարածուէր հետզհետէ. հեռաւոր երկիրներու թագաւորներ մարդիկ կը զրկէին անոր՝ խորհուրդ հարցնելու համար:

Սարայի թագուհին որ Արարիա կը բնակէր, մեծ բազմութեամբ և ազնիւ ընծաներով իրեն այցելեց: Թագուհին շատ խելացի կին մըն էր և զժուար խնդիրներ առաջարկեց Սողոմոնի, որ ամէնքն ալ լուծեց մեծ իմաստութեամբ: Ատոր վրայ, թագուհին ըսաւ իրեն. «Հեռուէն տուութեամբ: Ատոր վրայ, թագուհին ըսաւ իրեն. «Հեռուէն լսած էի իմաստութեանդ համբաւը, բայց չէի հաւատար պատմուածներուն. հիմայ կը տեսնեմ որ ինձի պատմուածները իրականութեան կէտը անգամ ցոյց չեն տար. բախ-

տաւոր են քու ծառաներդ որ միշտ դէմդ կայնած՝ քու իմաստուն վճիռներդ կը լսեն»:



Սաբայի թագուհին Սողոմոնի կ'այցելէ:

Այսպէս Սողոմոն փաստով ու երջանկութեամբ կը թագաւորէր, ամէնուն սքանչացման աւարկայ դառնալով:

Ծերութեան տարիներուն սակայն այս իմաստուն թագաւորը Աստուծոյ ճամբէն շեղեցաւ: Իր օտարազգի կիներուն հաճոյ երեւալու նամար, անոնց կուռքերուն նուիրուած տաճարներ կանգնեց:

Աստուած, վշտանալով, ըսաւ իրեն. «Որովհետեւ դուն իմ ուխտս և պատուէրներս չյարգեցիր, ես ալ քու թագաւորութիւնդ պիտի լսեմ ջեղմէ, բայց ոչ կենդանութեանդ ժամանակ, այլ քու զաւակիդ օրով. միայն պզտիկ մաս մը պիտի թողում անոր, և ան ալ քու հօրըդ՝ Դաւիթի սիրոյն»:

Ինչ ետքը, Սողոմոնի ծառաներէն մէկը՝ Յերոբովամ՝ որ լաւ պատերազմիկ մըն էր, ապստամբեցաւ իրեն դէմ:

Սողոմոն աշխատեցաւ Յերոբովամը սպաննելու, բայց աշխիւք եղիպտոս փախաւ:

Քառասուն տարի թագաւորիլէ վերջ՝ Սողոմոն մեռաւ, թագաւորութիւնը թողով իր Ռոբովամ զաւկին:

Իսրայելացիք պահանջեցին Ռոբովամէն որ թեթեւեղնէ իրենց տուրքերը, զորս Սողոմոն շատուցած էր: Ռոբովամ մերժեց. Այն ատեն՝ տասը ցեղեր բաժնուցան իրմէ և կազմեցին Իսրայելի թագաւորութիւնը, իրենց թագաւոր ընտրելով Յերոբովամը: Իսկ Ռոբովամ իշխեց միայն Յուդայի և Բենիամինի ցեղերուն վրայ, որոնք կազմեցին Յուդայի թագաւորութիւնը:

Հրահանգ.—Ո՞վ էր Սողոմոնի այցելող թագուհին և ինչօ՞ւ երուսաղէս եկաւ.—Ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ ճամբէն շեղիլ.— Սողոմոնի ծերութեան տարիներուն ի՞նչ պատահեցաւ.—Աստուած ի՞նչ կերպով պատժեց զայն, և ինչօ՞ւ անոր զաւկին մաս մը եւ խնուութիւն ուզեց թողուլ:

40. ՅԵՐՈԲՈՎԱՄ ԵՒ ԻՐ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Ռոբովամ և Յերոբովամ իրարու դէմ երկար կռիւներ մղեցին: Յերոբովամ, որ Սիւլքէմի մէջ հաստատած էր իր թագաւորութիւնը, վախցաւ թէ ժողովուրդը Երուսաղէմի տաճարը այցելելով իր թշնամիին կողմը կ'անցրուան, և Դան ու Բեթէլ անունով երկու երկնջ շինելով իբր կուռք պաշտել տուաւ:

Իրեն յաջորդեց Նաբադ զաւակը. ասոր օրով՝ Յերոբովամի բոլոր սերունդը սպաննուեցաւ Բայասա զօրավարին կողմէ: Յետոյ չորս զօրավարներ աշխատեցան իրարու ձեռքէ յափշտակել Իսրայելի թագաւորութիւնը.

Թէ բժշկուելու համար պէտք է եօթ անգամ լուացուի Յորդանանի մէջ: Նաաման հաւատաց, բայց իր ծառաներուն պնդումին վրայ ուզեց փորձել, և Եղիսէի պատուէրը գործադրելով իսկոյն բժշկուեցաւ:




«Եթէ տէրս Եղիսէն տեսնէ, կ'առողջանայ»

Այն ատեն, իր բոլոր մարդոցմով վերադարձաւ Եղիսէի մօտ, ծնրադրեց անոր առջև, և ըսաւ. «Կը հաւատամ որ Իսրայելի Աստուծմէն զաս ուրիշ Աստուած չկայ»: Յետոյ ուզեց մեծ պարգեւներ տալ անոր, բայց Եղիսէ մերժեց. «Ես Աստուծոյ ծառան եմ, և ոչինչ կ'ընդունիմ», ըսաւ:

Ատոր վրայ Նաաման ուխտեց որ այլևս կուռքերու զո՞հ չպիտի մատուցանէ, այլ միայն Աստուծոյ:

Այն ատենները Ասորոց թագաւորը պաշարեց Իսրայելի Սամարիա մայրաքաղաքը ուր մեծ սով եղաւ: Եղիսէ՝ Աստուծոյ օգնութեամբ փախցուց Ասորիները և Սամարիան ազատեց սովէն:



Եղիսէ մարգարէն կը մերժէ Նաամանի նուէրները

Հրահանգ. — Որո՞նք յաջորդեցին Աքաաբի և ի՞նչ տեսակ թագաւորներ էին. — Ո՞վ էր Նաաման և ինչու Եղիսէին դիմեց. — Ի՞նչ է բորոտութիւնը, ինչպէ՞ս պէտք է զգուշանալ անկէ. — Ի՞նչու «Կնտակ» կը կոչէին Եղիսէն և ինչպէ՞ս պատժուեցան զայն ծառորդ տղաքը:

42. ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Յովրամ կը շարունակէր Աստուծոյ անհաճոյ ընթացքի մէջ գտնուիլ, հակառակ անոր որ Եղիսէի միջնորդութեամբ շատ անգամներ Անոր բարիքները տեսած էր: Աստուած՝ զայն պատժելու համար՝ Եղիսէի ձեռքով

Իսրայէլի թագաւոր օծել տուաւ Յէոնն որ Յովրամը սպաննեց և Աքաաբի ամբողջ սերունդը ջնջեց :

Յէոն իր թագաւորութեան սկիզբը բոլոր կռատունները կործանեց և Աստուծոյ ճամբէն չհեղեցաւ , բայց վերջէն ինք ալ Ոսկի Հորթը պաշտել սկսաւ : Իր յաջորդներն ալ անչորհք թագաւորներ եղան : Ասոնցմէ վերջինը Ովսէէն էր , որ շատ բարկացուց Աստուածը :

Պատիժը չուշացաւ : Ասորեստանի Սաղմանասար թագաւորը պատերազմի ելաւ Իսրայելացւոց դէմ և Ովսէէն յաղթուելով՝ ստիպուեցաւ հարկ վճարել : Սակայն այս պայմանը չգործադրեց , որուն վրայ Սաղմանասար նորէն բանակը հաւաքելով եկաւ պաշարեց Իսրայելացւոց մայրաքաղաքը , Սամարիան :

Պաշարումը տեւեց երեք տարի : Վերջապէս Ովսէէն յաղթուեցաւ : Սաղմանասար Սամարիա մտաւ և Իսրայելացիներուն մեծ մասը իրենց թագաւորին հետ գերի աւարաւ Ասորեստան : Յետոյ՝ Ասորեստանէն հեթանոսներ բերել տալով բնակեցուց Սամարիոյ մէջ և շրջակաները : Ասոնց մէջ մնացող Իսրայելացիները աստուածապաշտ էին , բայց խառնուեցան հեթանոսներուն , և այս կերպով գոյացաւ ժողովուրդ մը որ Սամարացի կոչուեցաւ : Ասոնք կը հաւատային Աստուծոյ , բայց միևնոյն ատեն օտար կուռքեր ալ կը պաշտէին :

Ահա այս կերպով կործանեցաւ Իսրայելացւոց թագաւորութիւնը՝ 253 տարի տեւելէ վերջ :

Հրահանգ. — Ինչ էր Ոսկի Հորթը , և Իսրայելացիք առաջին անգամ ե՞րբ շինած էին զայն . — Աստուած ինչպէս պատժեց Իսրայելացիները . — Ինչ կը նշանակէ հարկ վճարել . — Ե՞րբ հաստատուած էր Իսրայելացւոց թագաւորութիւնը և ո՞վ եղած էր առաջին թագաւորը :

43. ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Սողոմոնի Ռորովամ զաւակը որուն միայն երկուցեղ հաւատարիմ մնացած էին , Յուդայի թագաւորութիւնը կազմելով , 17 տարի կրցաւ թագաւորել : Կաւ թագաւոր մը չեղաւ , կուռքեր պաշտեց և Աստուծոյ պատուէրները չգործադրեց : Աստուած ալ բարկանալով անոր վրայ զրկեց եգիպտացւոց Սուսակիմ թագաւորը , որ Յուդայի շատ մը քաղաքներուն տիրելէ վերջ գրաւեց նաև մայրաքաղաք Երուսաղէմը . Տաճարն ու թագաւորական գոմիճը կողոպտեց և ծանր տուրքեր դրաւ ժողովուրդին վրայ :

Ռորովամի յաջորդեց իր Աբիա զաւակը որ Իսրայելի Յերորովամ թագաւորին հետ պատերազմելով մէկ քանի քաղաքներ առաւ անոր ձեռքէն : Աբիա իրեն յաջորդ թողուց իր Ասաի զաւակը որ Աստուծոյ բարկութեան աւարկայ դարձաւ : Ասաի շատ բարի տղայ մը ունէր , Յովսափաղը , որ երբ իր հօրը յաջորդեց , բոլոր կռատունները վերցուց երկրին մէջէն , Աստուծոյ օրէնքները ամէնուն սորվեցնել տուաւ , և քսանըհինգ տարի թագաւորեց , միշտ յաղթելով իր թշնամիներուն :

Կռապաշտութիւնը սակայն նորէն վերահաստատուեցաւ Յուդայի մէջ՝ Յովսափաղի զաւակին՝ Յովրամի ձեռքով : Աստուած՝ իբր պատիժ՝ անոր վրայ զրկեց Փղշտացիներն ու Արաբացիները , որոնք Երուսաղէմը կողոպտելով Յովրամի կիներն ու զաւակները գերի տարին , բացի Ոքոզիայէն որ իր հօրը յաջորդեց և սպաննուեցաւ Յեուելի կողմէ : Մայրը՝ Կոթողիա՝ ուզեց ինք տիրել Յուդայի թագաւորութեան , և այդ նպատակով սպաննեւորաւ Ոքոզիայի բոլոր զաւակները . միայն Յովաս աղաւտեցաւ Յովիդայէ քահանային շնորհիւ :

Երբ վեց տարեկան եղաւ՝ Յովիդայէ զայն հօրը գա-
 հը նստեցուց՝ սպաննել տալով Գոթոլիան: Յովաս Աս-
 տուծոյ հաւատարիմ մնաց՝ որքան ատեն որ Յովիթայէ
 ողջ էր. բայց անոր մեռնելէն վերջ՝ քարկոծել տուաւ
 Չաքարիա մարգարէն: Իր երկիրն ալ շարունակ թշնա-
 միներու յարձակման ենթարկուելով գրեթէ անսպաս
 դարձաւ:

Յովասի յաջորդող չորս թագաւորներ՝ Ամասիաս,
 Ազարիա, Յովաթամ և Աքազ՝ չկրցան Յուդայի երկիրը
 թշուառութենէ ազատել: Բացի Յովաթամէն որ բարե-
 պաշտ մնաց, միւս երեքը կռապաշտ էին. Աքազ մա-
 նաւանդ մեծ անօրէնութիւններ գործեց և իր օրով Յու-
 գայի թագաւորութիւնը Ասորեստանի Թագղաթ-Փաղա-
 սար թագաւորին հարկատու եղաւ:

Հրահանգ. — Յուդայի թագաւորութիւնը երբ կազմուած
 էր և ինչ պարագաներու մէջ. — Ինչո՞ւ Սողոմոնի թագաւորու-
 թիւնը երկու մասի բաժնուած էր. — Ինչ է մայրաքաղաքը, ինչ
 է տուրքը. — Որո՞նք յաջորդեցին Ռոբովամի և ինչպէ՞ս թագա-
 ւորեցին:

44. Ե Չ Ե Կ Ի Ա

Երբոր Սաղմանասար Իսրայելի թագաւորութիւնը
 կործանեց՝ Ովսէէ թագաւորն ու Իսրայելացիները գերե-
 տանելով, Յուդայի վրայ կը թագաւորէր Աքազի զաւա-
 կը՝ Եզեկիա, որ ճշմարտապէս աստուածավախ մարդ մըն
 էր, և իր հօրն ու անոր նախորդներուն գործած չարիքը
 գարմանելու աշխատեցաւ:

Աքազ փակել տուած էր Աստուծոյ Տաճարին դուռ-

ները. Եզեկիա ո՛չ միայն բանալ տուաւ զանոնք, այլ
 կործանեց երկիրն մէջ հաստատուած բոլոր կռատունները:
 Միեւնոյն ատեն՝ թէ՛ Իսրայելի և թէ՛ Յուդայի բոլոր ժո-
 ղովուրդներուն ղեսպաններ ղրկեց, և զանոնք յորդորեց
 որ Աստուծոյ պատուէրները յարգեն: Իր օրով մեծ հանդէս-
 ներով տօնուեցաւ Պասէքի տօնը. այդ առթիւ ահագին
 բազմութիւն հաւաքուեցաւ Երուսաղէմի մէջ. եկած էին
 նաև Իսրայելի ժողովուրդէն շատեր:

Այդ միջոցին Ասորեստանի նոր թագաւորը՝ Սինե-
 քերիմ՝ յարձակեցաւ Յուդայի երկիրն վրայ, և շատ մը
 քաղաքներ առնելէ վերջ պաշարեց Երուսաղէմը: Ժողո-
 վուրդը վախու մէջ էր: Սինեքերիմ՝ պատգամաւորներու
 միջոցաւ անոր ըսաւ. «Մի՛ հաւատաք Եզեկիային. անոր
 Աստուածը եթէ ամենազօր ըլլար, չէր թողուր որ այժ-
 պէս իր քաղաքները գրաւուին»:

Երբ Եզեկիա այս ամբարիշտ խօսքը լսեց, պատռեց
 հագուստները, Տաճար գնաց աղօթելու, և Եղիսէ Մար-
 գաթէին ալ մարդ ղրկեց ըսելու թէ «Հեթանոսներու թա-
 գաւորը կը նախատէ մեր Աստուածը»: Եղիսէ անոր զըր-
 կած մարդոց ըսաւ որ ապահով ըլլան, Երուսաղէմ չպի-
 ինայ Սինեքերիմի ձեռքը:

Նոյն գիշերը վարձատրուեցաւ Եզեկիայի բարեպաշ-
 տութիւնը: Աստուած հրեշտակ ղրկելով Ասորեստանցւոց
 բանակէն 185,000 մարդ կոտորեց, և Սինեքերիմ՝ ամօ-
 թահար մնալով՝ վերցուց բանակը ու փախաւ իր մայրա-
 քաղաքը՝ Նինուէ:

Հրահանգ. — Ինչո՞ւ կործանած էր Իսրայելացւոց թագաւո-
 թութիւնը. — Ինչ տեսակ թագաւոր էր Եզեկիա. — Ինչ տարբերու-
 թիւն կար իրեն և հօրը միջև. — Ինչ է ղեսպանը, ինչ է պատգա-
 մաւորը. — Ինչ էր Պասէքի տօնը և ինչ առթիւ հաստատուած էր:

45. ԵԶԵԿԻԱՅԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Եզեկիայի զաւակը՝ Մանասէ՛ տասերկու տարեկան էր երբ հայրը մեռնելով գահը իրեն մնաց։ Մանասէ չափանաս ըլլալուն պէս շատ անկարգ մարդ մը դարձաւ և մեծ չարիքներ գործեց։ Տաճարը նորէն փակուեցաւ, որովհետեւ Մանասէ կուստուներն հաստատած էր և կուսեքերուն կը զոհէր անմեղ մարդիկ, նոյն իսկ իր զաւակները։

Մարգարէները զինքը միշտ կը զգուշացնէին, ըսելով որ Աստուծոյ բարկութիւնը իր վրայ պիտի հրաւիրէ։ Մանասէ կարեւորութիւն չէր տար անոնց պատուէրներուն։ Վերջապէս Ասորեստանցիք Յուդայի երկրին վրայ յարձակեցան և Մանասէն բռնելով ձեռքը ոտքը կապեցին ու գերի տարին։ Ամբարիշտ թագաւորը ատոր վրայ զղջաց ու ապաշխարեց, և երբ գերութենէ ազատեցաւ, վերահաստատեց Աստուծոյ պաշտամունքը և իր գործած չարիքը դարմանելու աշխատեցաւ։

Մանասէի դարձէն վերջ Նարուզոդոնոսորի Հողեփեռնէս սպարապետը յարձակեցաւ Յուդայի երկրին վրայ և պաշարեց Բետիղուա քաղաքը։ Բնակիչները անձնատուր պիտի ըլլային, բայց Յուդիթ անունով այրի կին մը զանօնք արգիլեց, յայտնելով թէ ինք պիտի ազատէ քաղաքը։ Յետոյ գնաց Հողեփեռնէսի քով, զայն խաբեց՝ ըսելով որ Հրէաստանի ճամբաները ցոյց պիտի տայ իրեն, և գիշեր մը, անոր գինովութեան միջոցին, գլուխը կտրելով բերաւ Բետիղուա։ Առտուն՝ քաղաքին բնակիչները յարձակեցան Հողեփեռնէսի բանակին վրայ, յաղթեցին անոր և մեծ աւար ձեռք ձգեցին։

Մանասէէն վերջ Յուդայի վրայ թագաւորեց իր զա-



Իսրայելացիի կ'ողբան գերութեան մեջ

ւակը՝ Ամոն, որ շատ ամբարիշտ մարդ մըն էր և սպաննուեցաւ ծառաներուն կողմէ: Յովսիա, որ Ամոնի յաջորդեց, բարեպաշտ թագաւոր մը եղաւ, կուռքերը վերցուց, բայց սպաննուեցաւ պատերազմի մէջ: Յովսիայէն վերջ՝ Յուդայի երկրին վրայ թագաւորեց նախ իր զաւակը՝ Յովաքազ, որ երեք ամիս վերջ վար առնուեցաւ և թագաւորութիւնը մնաց Յովակիմի: Աս ալ չար ու անօրէն մարդ մըն էր:

Յովակիմի օրով՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը եկաւ պաշարեց Երուսաղէմը: Յովակիմ անձնատուր եղաւ: Նաբուգոդոնոսոր կողոպտեց Յուդայի մայրաքաղաքը, Տաճարին ու պալատին գանձերը առաւ և բոլոր արհեստաւորները, ինչպէս նաև թագաւորն ու իր ընտանիքը Բաբելոն տարաւ:

Երուսաղէմի մէջ միայն աղքատ մարդիկ մնացին, և Նաբուգոդոնոսոր անոնց վրայ թագաւոր կարգեց Սեզեկիան:

Հրահանգ. — Մանասէ ո՞վ էր և ի՞նչ պայմաններու մէջ թագաւորեց. — Ի՞նչպէս զոջաց իր գործած չարքներուն համար. — Ո՞վ էր Նաբուգոդոնոսոր և ի՞նչ ըրաւ. — Ի՞նչու Յովակիմ կորսնցուց իր թագաւորութիւնը. — Ո՞վ էր Յուդիթ և ի՞նչ քաջագործութիւն ըրաւ. — Ի՞նչ է սպարապետը. — Ի՞նչ կը նշանակէ անձնատուր ըլլալ:


46. ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

Սեզեկիա՝ փոխանակ իր նախորդին զլիտուն եկած փորձանքէն խրատուելու՝ ո՛չ միայն Աստուծոյ պատուէրներուն չհնազանդեցաւ այլ նաև ապստամբեցաւ Նաբուգոդոնոսորի դէմ, և անոր հետ կնքած դաշինքը դրժե-

լով միացաւ Եգիպտացւոց հետ որոնք Բաբելոնացւոց թշնամի էին :

Այն ատեն՝ Նաբուգոդոնոսոր մեծ բանակ մը կազմելով մտաւ Յուդայի երկիրը, և ամէն կողմ ասպատակելէ վերջ պաշարեց Երուսաղէմ յազաքը : Պաշարումը տեւեց մէկ ու կէս տարի և մեծ սով ծագեցաւ Երուսաղէմի մէջ :

Սեղեկիա՝ տեսնելով որ չպիտի կրնայ Նաբուգոդո-



Իսրայելացիք գերի կը տարուին

նոսորի ձեռքէն ազատիլ, իրեն հաւատարիմ մարդիկ առնելով հետը, գիշերանց դուրս ելաւ քաղաքէն, յուսալով որ կը յաջողի իշնամիին գիծէն անցնիլ և փախչիլ : Սակայն Բաբելոնացիք լաւ հսկողութիւն կը կատարէին : Սեղեկիա և իր մարդիկը բռնուելով տարուեցան Նաբուգոդոնոսորի առջև, որ պաշարման երկար տեւելէն շատ բարկացած էր արդէն :

Նաբուգոդոնոսոր կանչեց Սեղեկիայի բոլոր գա-

ւակները և զանոնք իրենց հօրը աչուրներուն առջև մորթել տուաւ : Յետոյ հրամայեց որ Սեղեկիան կուրցնեն և շղթայի զարնելով Բաբելոն տանին :

Այն գիշերը Բաբելոնացիք մտան Երուսաղէմ, շարդեցին ընակիչները, այրեցին Աստուծոյ տաճարն ու թագաւորական պալատը, և կործանեցին քաղաքն ու պարիսպները : Իսկ ազատած ժողովուրդն ու զբաւուած զանձները, Նաբուգոդոնոսորի հրամանով, տարուեցան Բաբելոն :

Այսպէս կործանեցաւ Յուդայի թագաւորութիւնը :

Հրահանգ. — Երբ հաստատուած էր Յուդայի թագաւորութիւնը և ինչ պայմաններու մէջ. — Ինչո՞ւ Նաբուգոդոնոսոր երկրորդ անգամ յարձակեցաւ Երուսաղէմի վրայ. — Ինչ է դաշնը :

Զ. ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՋ

47. ՆԱԲՈՒԳՈՒՈՆՈՍՈՐԻ ԵՐԱԶՋ


Նարուզդոդոնոսորի հրամանով, Իսրայելացի ընդունակ տղաք մասնաւոր կրթութիւն ստացան: Այս տղոց մէջ կը գտնուէին Դանիէլ և իր երեք ընկերները, որոնք Աստուծոյ հաւատարիմ մնացած էին և Անոր պատուէրներուն կը հետեւէին:

Անգամ մը Նարուզդոդոնոսոր ոսկիէ արձան մը շինել տուաւ որպէսզի ժողովուրդը պաշտէ զայն. չպաշտողները հնոցի մը մէջ պիտի նետուէին: Դանիէլ և իր ընկերները, հակառակ այդ սպառնալիքին, ծունգի չեկան արձանին առջև: Նարուզդոդոնոսոր, իմանալով, հնոցը նետել տուաւ Դանիէլի ընկերները, որոնք սակայն ողջ մնացին: Այն ատեն Նարուզդոդոնոսոր համոզուեցաւ թէ անոնց պաշտած Աստուածը զօրաւոր է, և մեծ պատիւներու առարկայ դարձուց Դանիէլին ու անոր երեք ընկերները, որոնք կը կոչուէին Սեղրաք, Միաք և Արեթնազով:

Ուրիշ անգամ մը Նարուզդոդոնոսոր երազ մը տեսաւ և այնքան վախեցաւ որ իսկոյն կանչեց բոլոր մոգերը ու հրամայեց որ մեկնեն իր երազը: Մոգերը ուզեցին հազկէնալ թէ ի՞նչ էր տեսած երազը, բայց Նարուզդոդոնոսոր մոռցած էր, որով մոգերը չկրցան զինքը գոհացնել:

Դանիէլ սակայն, Աստուծոյ աղօթելով, Անոր օգնութեամբ գտաւ երազին ինչ ըլլալը և մեկնութիւնն ալ տուաւ, գուշակելով որ Նարուզդոդոնոսորէ վերջ Բաբելոնի թագաւորութիւնը պիտի տկարանայ,

և ամէնէն վերջը երկրի վրայ պիտի սկսի ուրիշ թագաւորութիւն մը, Քրիստոսի թագաւորութիւնը, որ բնական վերջ չպիտի ունենայ:



Դանիէլ Աստուծոյ կ'աղօթէ

Թագաւորը այս մեկնութեան վրայ երեսի վրայ իշնալով երկրպագութիւն ըրաւ Դանիէլի, և խոստովանեցաւ որ անոր պաշտած Աստուածն է ճշմարիտ Աստուածը: Յետոյ՝ Բաբելոնի իմաստուններուն պետ կարգեց Դանիէլը:

Հրահանգ.—Ո՞վ էր Դանիէլ և ի՞նչ կերպով նշանաւոր դարձաւ.—Ի՞նչ է մոգը.—Նարուզդոդոնոսոր ինչո՞ւ հնոցի մը մէջ նետել տուաւ Դանիէլի ընկերները և ի՞նչ պատահեցաւ.— Ինչպէ՞ս Դանիէլ գուշակեց Քրիստոսի թագաւորութեան գալիքը.—Ի՞նչ է Քրիստոսի թագաւորութիւնը:

48. ԲԱՂԴԱՍԱՐԻ ԽՆՉՈՅՔԸ

Նաբուգոդոնոսորէ վերջ՝ երբ Բաբելոնի վրայ կ'իշխէր Բաղդասար, Պարսից Կիւրոս թագաւորը եկաւ պաշարեց Բաբելոնը: Քաղքին պաշարման միջոցին Բաղդասար մեծ խնճոյք մը կուտար, կուռքերուն ի պատիւ գինի խմելով. գինին դրուած էր այն ոսկիէ սրբազան



Բաղդասարի խնճոյքը

անօթներուն մէջ որոնք Նաբուգոդոնոսորի օրով Երուսաղէմի Տաճարէն բերուած էին:

Յանկարծ ձեռք մը երեւցաւ և պատին վրայ բաներ մը գրելով անբերելոյթ եղաւ: Բաղդասար վախցաւ, կանչեց բոլոր մոգերն ու իմաստունները և հրաւիրեց զանոնք որ մեկնեն դրուածը: Ոչ ոք սակայն կրցաւ գինքը գոհացնել: Այն առեւն՝ թագաւոր իր առջեւ բերել տուաւ Դանիէլը և ըսաւ անոր. «Եթէ սա գրուածը կարդաս, քեզի ծիրանի պիտի հազցնեմ, ոսկիէ մանեակ

պիտի կախեմ վիզէդ և առատ նուէր պիտի տամ քեզի»:

Դանիէլ պատասխանեց. «Նուէրներդ չեմ ուզեր, բայց պիտի կարդամ գրուածը. դուն արհամարհեցիր Աստուածը որ քեզի կեանք և ոյժ տուած էր. այս պատճառաւ այդ ձեռքը զրկեց ու գրել տուաւ. — Մանե, քեկեղ, փարես. ստիկա կը նշանակէ՝ չափեցի, կշռեցի, բաժնեցի. քու թագաւորութեանդ օրերը չափուած են. քեզ կ'չուած ու թեթեւ գտած են. քու թագաւորութիւնդ պիտի բաժնուի և ուրիշներուն պիտի արուի:

Նոյն գիշերը Բաղդասար սպաննուեցաւ. Կիւրոս գրաւեց անոր մայրաքաղաքը և վերջ տուաւ Բաբելոնացոց թագաւորութեան:

Հրահանգ. — Ի՞նչ պատահեցաւ Բաղդասարի օրով. — Ի՞նչ չո՞ւ ձեռք մը երեւցաւ խնճոյքի միջոցին և ի՞նչ գրեց. — Ի՞նչ մեկնութիւն տուաւ Դանիէլ և ինչպէ՞ս կատարուեցաւ իր գուշակութիւնը. — Ի՞նչ է ծիրանին և ի՞նչ նշանակութիւն ունէր:

49. ԴԱՆԻԷԼ ԵՒ ԱՌԻԻԾՆԵՐԸ

Դանիէլ իր իմաստութեան չարժիւ սիրելի դարձաւ նաև Կիւրոսի: Պարսիկ իշխանները կը նախանձէին իրմէ և առիթ կը փնտռէին զինքը մեռցնել տալու համար:

Անգամ մը՝ թագաւորը հրամայեց որ բոլոր ժողովուրդը պաշտէ մի միայն իր պատկերը. այս հրամանին չհնազանդողները պիտի նետուէին առիւծներով լեցուն խոռցի մը մէջ: Դանիէլ կարեւորութիւն չտուաւ այդ հրամանին և շարունակեց պաշտել Աստուածը: Ասորք վրայ թշնամիները իսկոյն լուր տուին թագաւորին, որ

Թէեւ ուզեց փրկել իր սիրական Դանիէլը, բայց չկր-
ցաւ, և թողոց որ գայն առիւծներուն մէջ նետուն:

Կիւրոս նոյն գիշերը չկրցաւ քնանալ, առտուն
կանուխ գնաց խուցին մօտ, ու յուսամուտէն ներս նա-
յելով ըսաւ. «Դանիէլ, ծառայ Աստուծոյ, քու Աստ-
ուածդ զոր եռանդագին կը պաշտէիր, կրցա՞ւ քեզ ազա-



Դանիէլ առիւծներու խուցին մէջ

ան առիւծներու ճիրաններէն»:

Թագաւորը չէր յուսար որ Դանիէլ կը պատասխանէ
իր ձայնն ալ շատ տխուր էր, որովհետեւ վստահ
էր թէ առիւծները բզբտած են զայն:

Բայց ահա յուեցաւ Դանիէլի ձայնը որ կ'ըսէր.
«Տէ՛ր արքայ, իմ Աստուծաւ գոցեց առիւծներուն բե-
րանը, և անոնք բնաւ չըպան ինձի»:

Իրօք առիւծները չէին վնասած իրեն: Կիւրոս ու-
րախացաւ իր սիրականը ողջ տեսնելով, և անմիջապէս
զայն դուրս հանեց առիւծներու խուցէն: Յետոյ՝ Դա-
նիէլի տեղ հոն նետել տուաւ անոր թշնամիները, զորս
առիւծները կտոր կտոր ըրին:

Անկէ ետքը՝ Կիւրոս մեծ յարգանք կը տածէր Աս-
տուծոյ նկատմամբ:

Հրահանգ.—Կիւրոսի օրով Ինչ վիճակ ունէր Դանիէլ. — Ին-
չո՞ւ կը նախանձէին իրմէ.— Ինչո՞ւ համար Դանիէլ առիւծներու
խուցը նետուեցաւ.— Ինչ կը կարծէր տեսնել Կիւրոս և Ինչ տե-
սաւ.— Ինչ կերպով պատժուեցան Դանիէլի թշնամիները:

50. ԳԵՐՈՒԹԵՆՆԷ ԴԱՐՁ

Կիւրոս որ Դանիէլի պատճառաւ կը սիրէր Հրեանե-
րը, ուզեց զանոնք ազատել գերութենէ, որուն մատնը-
ւած էին 76 տարիէ ի վեր, և ըսաւ որ անոնցմէ փափա-
քողները դառնան Երուսաղէմ ու վերաչինեն Աստուծոյ
Տաճարը:

Այս թոյլտուութեան վրայ, Յուդայի և Իէնիամինի
բոլոր իշխաններն ու քահանաները ժողովուրդին գլուխը
անցնելով սկսան Երուսաղէմ դառնալ: Անոնք որ չէին
կրնար երթալ, արժաթէ և ոսկիէ անօթներ ու զանազան
նուէրներ կուտային գացողներուն, որպէս զի Տաճարին
նուեցման գործածեն: Կիւրոս ալ անոնց յանձնեց նա-
բուգողոսնոսորի օրով Երուսաղէմէն բերուած բոլոր սրբա-
զան անօթները:

Հայրենիք դարձող Հրեաներուն թիւը 42,000ը կ'անց-
նէր: Անոնց կ'առաջնորդէին Զօրաբարէլ, Յեսու և Գա-

հանայապետը: Երբոր Երուսաղէմ հասան, սեղան կազմելով Աստուծոյ զոր մատուցին և սկսան կառուցանել տաճարը: Ամէն մարդ որ կարողութիւն ունէր, կը մասնակցէր շինութեան. իսկ քահանաները կ'երգէին ժողովուրդին աշխատած ատենը:

Սամարացիք ալ ուզեցին մասնակցիլ Տաճարին շինութեան. բայց Հրեաները թոյլ չտուին, որովհետեւ անոնք կուռք ալ կը պաշտէին: Ատոր վրայ Սամարացիք աշխատեցան խանգարել Տաճարին շինութիւնը, սակայն չյաջողեցան:

Այդպէս ազօթքներով ու փառարանութիւններով լրացաւ տաճարը, ուր Հրեաները Պատէքի տօնը կատարեցին մեծ հանդէսներով: Երբոր՝ որոնք կը յիշէին հին տաճարը, անոր վերականգնումը տեսնելով ուրախութենէ կուլային:


Քիչ առ քիչ, Իսրայելացիք սկսան նորէն հետեւիլ Աստուծոյ օրէնքներուն, զորս մոռցած էին օտարութեան մէջ:

Հրօտանգ. — Իսրայելացիք ինչպէ՞ս ազատեցան գերութենէ. — Ե՞րբ դերի տարուած էին, ինչո՞ւ և որո՞ւ կողմէ. — Ե՞րբ կազմուած էր Սամարացի ժողովուրդը և ինչո՞ւ այդ անունը կը կրէր. — Հին տաճարը ե՞րբ շինուած էր, որո՞ւ կողմէ և ե՞րբ կործանած էր:

51. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Կիւրոսէն վերջ, Արտաշէս թագաւորին օրով, արքունի պալատին տակառապետն էր Նէէմի անունով Հրեայ մը, որ թագաւորէն արտօնութիւն խնդրեց Երուսաղէմ երթալու: Տաճարը թէեւ շինուած էր, բայց քա-

ղաքը մեծ մասամբ աւերակ և պարիսպէն զուրկ կը մնար: «Տէ՛ր արքայ, ըսաւ Նէէմի, թոյլ տուր որ ծառադ կրթայ իր նախահայրերուն քաղաքը վերաշինէ»:



Եօթ օր յաջորդաբար կարգացուեցան Մովսէսի օրէնքները

Արտաշէսի արտօնութեան վրայ՝ Նէէմի վերադարձաւ հայրենիք և ժողովուրդին մեծերուն հետ խորհրդակցելով սկսաւ շինել քաղքին պարիսպներն ու դուռները:

Սամարացիք, տեսնելով որ Երուսաղէմ ամուր քաղաք մը պիտի ըլլայ և այլևս անառիկ պիտի դառնայ, ուղեցին պարիսպները շինուած զայն գրաւել, ու պատերազմի գացին Հրեաներուն վրայ:

Նէէմի յուսադրեց Հրեաները, ըսելով որ Աստուած իրենց հետ է և յաղթութիւնը իրենց պիտի մնայ: Յետոյ պահապաններ զրաւ քաղքին ամէն կողմերը, և

հրամայեց որ պարիսպներուն շինութիւնը առաջ տանին առանց վախնալու :

Երբոր Սամարացիք յարձակեցան , Նէէմի երկու մասի բաժնեց ժողովուրդը . մէկ մասը , առանց դադար առնելու կը շարունակէր պարիսպներուն շինութիւնը , իսկ միւս մասը՝ ղէնքը ձեռքը կը կռուէր : Աշխատողներն ալ զինուած էին , և յաճախ՝ մէկ ձեռքով պատ կը հիւսէին , միւս ձեռքով ալ զէնքը բռնած կը կռուէին :

Սամարացիք պարտուեցան և Հրեաները յաջողեցան լրացնել պարիսպները :

Անկէ ետքը Նէէմի բոլոր Իսրայելացիները Երուսաղէմ հաւաքեց , բերել տուաւ Մովսէսի օրէնքներուն գիրքը և եօթ օր յաջորդաբար կարդալ տուաւ , որպէս զի ամէն մարդ տեղեկանայ անոնց և Աստուծոյ ցոյց տուած ճամբէն չչեղի : Երբ ընթերցումները աւարտեցան , մեծ և ուրախալի հանդէսներ կատարուեցան՝ Երուսաղէմի վերականգնութեան համար :

Հրեաները՝ գերութենէ դառնալէ վերջ՝ Պարսից թագաւորներուն իշխանութեան տակ կը մնային , բայց իրաւունք ունէին ընտրելու կուսակալներ որոնք զիրենք կը կառավարէին :

Հրահանգ . — Ինչպէ՞ս վերականգնեցաւ Երուսաղէմ և ո՞վ գլուխ կեցաւ այդ գործին . — Սամարացիք ինչո՞ւ աշխատեցան արգիւելու Երուսաղէմի պարիսպներուն շինութիւնը . — Իսրայելացիք ի՞նչ կերպով կռուեցան անոնց հետ . — Ի՞նչ էին Մովսէսի օրէնքները և Աստուած ե՞րբ ու քանի՞ անգամ տուած էր զանոնք . — Ի՞նչ է կուսակալը :

52. Ե Ս Թ Է Ր

Անգամ մը Արտաշէս թագաւորը՝ թագունի մը ընտրելու համար՝ իր առջեւ բերել տուաւ բոլոր երիտասարդ աղջիկները : Ասոնց մէջ կը գտնուէր նաև Եսթէր անուանով աղջիկ մը՝ զոր իր հօրեղբայրը՝ Մուրդքէ՝ իբր զաւակ կը մեծցնէր : Եսթէր շատ գեղեցիկ էր , յաջողեցաւ գրաւել Արտաշէսի սիրտը և դարձաւ թագունի : Մուրդքէ ալ արքունիքին մէջ մեծ պաշտօնի մը կոչուեցաւ :

Քանի մը տարի ետքը Արտաշէս իրեն առաջին պաշտօնեայ կարգեց Համան իշխանը և հրամայեց օր ամէն մարդ անոր երկրպագութիւն ընէ : Մուրդքէ սակայն չուզեց այդ հրամանին հնազանդիլ : Ատկէ քիչ առաջ՝ Մուրդքէ իմացած էր թէ մէկ քանի իշխաններ կ'ուզեն Արտաշէսը սպաննել և Եսթէրի միջոցաւ անմիջապէս լուր տուած էր Արտաշէսի , որ այս պատճառաւ շատ կը սիրէր զիրենք : Ատոր համար որ Մուրդքէ համարձակած էր չերկրպագել Համանի :



Մուրդքէ պալատ վազեց

Այս վերջինը սակայն շատ ոխակալ մարդ մըն էր. Մուրդքէի վարմունքը անարգանք մը նկատելով, որոշեց վրէժ լուծել՝ սուրէ անցընել տալով բոլոր Հրեաները:

Երբ Մուրդքէ ասիկա իմացաւ, շատ վրդովուեցաւ, պատուեց հագուստները, քուրձեր հագաւ, վաղեց գնաց պալատ, ու եսթէրը կանչելով պատմեց իրողութիւնը: Յետոյ ըսաւ անոր. «Ի՞նչն միայն կրնաս փրկել քու ազգդ. փութա՛ թագաւորին քով»:

Եսթէր պատասխանեց թէ անոնք որ առանց կանչուած ըլլալու թագաւորին քով կը մտնեն, մահուամբ կը պատժուին: Բայց Մուրդքէ պնդեց՝ յարելով. «Ինչ որ ալ ըլլայ պէտք է երթաս. ո՛վ գիտէ թերեւս Աստուած այս օրուան համար քեզ թագուհիի վիճակին բարձրացուց»:


Եսթէր յայտնեց թէ պիտի մտնէ թագաւորին քով և պատուիրեց որ Հրեաները ծոմ բռնեն ու աղօթեն անդադուր:

Հրատահեց.—Ո՞վ էր եսթէր և ինչպէս թագուհի եղաւ. — Իր օրով Հրեաները ինչ վտանգի ենթարկուեցան և ինչո՞ւ. — Եսթէր ինչո՞ւ չէր ուզեր թագաւորին քով մտնել.— Մուրդքէ ինչ ըսելով համոզեց զայն.— Ինչ է քու յօ՞ւժը և ինչ նշանակութիւն ունի քու ձ հագնիլը:

53. ԵՍԹԷՐԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Եսթէր իր արքայական հագուստները հագնելով, նաժիշտի մը նետ ներկայացաւ թագաւորին. բայց այնքան յուզուած էր որ երկու անգամ յաջորդաբար նուազեցաւ:

Թագաւորը սակայն շատ սիրով ընդունեց զայն, և անոր նուաղիլը տեսնելով վազեց մօտը և հարցուց թէ ինչ խնդիրք ունի: Եսթէր խնդրեց որ թագաւորն ու Համան նոյն օրը հացկերոյթի գան իրեն: Արտաշէս հա-



Թագաւորը Եսթէրի քով վազելով հարցուց թէ ինչ խնդիրք ունի

ձեցաւ: Համան ալ իրեն համար պատիւ մը նկատեց այդ հրաւէրը, ուրախ զուարթ տուն գնաց և յիսուն կանգուն բարձրութեամբ սիւն մը պատրաստել տուաւ: Մուրդքէն անկէ կախելու համար:

Եսթէր երկու անգամ թագաւորը խնջոյքի հրաւիրեց Համանին հետ, բայց չհամարձակեցաւ խնդիրքը յայտնելու: Երրորդ անգամուն, Արտաշէս հարցուց իրեն թէ ինչ կը խնդրէ. «Եթէ թագաւորութեանս կէսն ալ ու-

զես, պիտի տամ», ըսաւ։ Այն ատեն՝ Եսթէր յայտնեց իր խնդիրքը։ «Տէ՛ր արքայ, գոչեց, չար մարդ մը կ'աշխատի զիս և իմ ազգս փճադնելու, ազատէ՛ մեզ»։ — «Ո՛վ է այդ չարը», հարցուց Թագաւորը։ «Այդ չարը քու առաջին պաշտօնեադ՝ Համանն է», պատասխանեց Եսթէր։



«Այդ չարը քու առաջին պաշտօնեադ է . . .»

Արտաշէս խռոված դուրս ելաւ. իսկ Համան՝ Եսթէրի ոտքը իննալով աղաչեց որ խնայէ իրեն։ Բայց Թագաւորը որ լսած էր թէ Համան Մուրդքէի համար կախաղան մը պատրաստած է, բոլորովին բարկանալով հրամայեց նոյն կախաղանը հանել Համանը։

Այդպէս ալ եղաւ, և Հրեաները փրկուեցան։ Իսկ Մուրդքէ որ արդէն սնգամ մը Թագաւորին կեանքը փրկած էր, Համանի յաջորդեց։

Հրահանգ. — Եսթէր ինչ միջոցի դիմեց իր ազգակիցները ազատելու համար. — Ինչ կ'ուզէր ընել Համան և ինչո՞ւ. — Արտաշէս ինչպէ՞ս պատժեց զայն. — Մուրդքէ ինչ կերպով Արտաշէսը մահուանէ ազատած էր. — Ինչ էր նստիշտը։

54. ՄԱԿԱՒԱՅԵՑԵՑԻՔ

Գերութենէ դարձած Իսրայելացիները Պարսիկներուն հպատակ մնացին. որքան ատեն որ տեւեց Պարսիկ իշխանութիւնը. անկէ ետքը՝ յաջորդաբար ինկան Մակեդոնացւոց, Եգիպտացւոց և Ասորւոց իշխանութեան տակ։

Այս հպատակութեանց ընթացքին՝ Իսրայելացիք չատնեղութիւններ քաշեցին։ Ասորւոց Անտիոքոս Եպիփան Թագաւորը Երուսաղէմը այրեց, 80,000 Հրեայ ջարդեց և 40,000 չոգի ալ գերի տարաւ. Աստուծոյ տաճարն ալ կռատունի վերածեց, և Հրեաները բռնադատեց որ կուռք պաշտեն։ Շատեր մերժեցին և սպաննուեցան։ Կին մը իր եօթը զաւակները քաջախիբեց որ մեռնին ու չչեղին Մովսէսի օրէնքէն. վեցը սպաննուեցան իր աշուրներուն առջեւ. մինչդեռ եօթներորդը պիտի սպաննուէր, մայրը բաղուկներուն մէջ առաւ զայն և ըսաւ. «Ինչ զափր բաղուկներուն մէջ առաւ զայն և ըսաւ. «Ինչ զափր Աքրահամ նահապետը և ըսէ անոր որ եթէ ինք իր մէկ հատիկ զաւակը Աստուծոյ զօնելու պատրաստ էր, քու մայրդ եօթը զաւակ մէկանց զոնց»։ Յետոյ ինքն ալ նահատակուեցաւ։

Այդ նեղութեան օրերուն՝ Մակաբայեցւոց ցեղէն Մատթեայ քահանան և իր հինգ զաւակները, քաջ ու հայտաթեայ քահանան և իր հինգ զաւակները, քաջ ու հայտաթեայ Հրեաներու գլուխը անցած՝ ապստամբեցան, և Ասորւոց վրայ յարձակելով մեծ վնաս պատճառեցին անոնց։

Մատթեայի մեռնելէն վերջ՝ իր Յուդա զաւակը չարունակեց կռուիլ Ասորւոց դէմ։ Ուրիշ Մակաբայեցիներ նոյնպէս յաղթական ու կատաղի կռիւներ մղեցին և յաջողեցան անկախութիւն հաստատել։ Այդ կռիւներէն մէկուն մէջ՝ Մակաբայեցի մը տեսաւ խոշոր փիղ մը որ

բարձր աշտարակ մը կը կրէր: Մակաբայեցիին կարծեց



Փիղը ճզվեց քաջ Մակաբայեցիին

Հրեաները ինկան Հռոմէացւոց իշխանութեան տակ:

Հրահալգ.— Գերութեան և անարարութեան իրարայնացումները ինչ եղանակով էր Անտիոքոս եպիսկոպոս և ինչ փորձանք բերաւ Հրեաներուն դիմումը — Հրեաները որոնց միջոցաւ անկախութեան տիրացան.— Քանի որ տարի տեւեց իրենց անկախութիւնը. անոր վերջնական 37 տարի ետքը ինչ մեծ դէպք պատահեցաւ.— ինչ կը նշանակէ օրէնքէ շեղել:

55. Հ Ե Ր Ո Վ Դ Ի Է Ս

Հռոմէացւոց իշխանութեան տակ ինչպէն վերջ՞ կուտակայն կը կառավարէին Հրեաստանը. ասոնց մէջ ամէնէն նշանաւորը եղաւ Հերովդէս, որ Մեծ կոչուեցաւ, և որ Հռոմայեցւոց Սգոստոս կայսեր օրով թագաւոր դարձաւ, միշտ հպատակ մնալով Հռոմէական Գայսրութեան:

Իրարու յաջորդող զանազան կուտակայններու օրով Հրեաները միշտ չարչարուեցան, որովհետեւ Աստուծոյ հաւատարիմ կը մնային և չէին ուզեր կուռքեր պաշտել. կործանեցաւ նաև երուսաղէմի փառաւոր Տաճարը:

Հերովդէս՝ թագաւոր դառնալէն վերջ կը վախնար որ Հրեաները նորէն կ'ապստամբին Մակաբայեցւոց առաջնորդութեամբ. այս պատճառաւ աշխատեցաւ Մակաբայեցւոց սիրտը շահելու, և այդ մտքով անոնց ընտանիքէն Մարիամ անունով աղջկան հետ ամուսնացաւ:

Հերովդէս կը յուսար որ Մարիամի սիրոյն Մակաբայեցիք իր կողմը կ'անցնին, իսկ երբեք չիրցաւ վստահիլ անոնց վրայ. ապստամբութեան վախը միշտ մնաց իր մէջ, և ատկէ ազատելու համար շատ անգույթ միջոցի մը գիտեց, սպաննել տալով Մակաբայեցւոց ընտանիքին բոլոր ժառանգները:

Իր վախը այնքան մեծ էր որ չուզեց անոնցմէ ոչ մէկուն խնայել. մինչև անգամ սպաննել տուաւ Մարիամը և անկէ ծնած իր երկու զաւակները:

Հրեաները սոսկումի տակ էին իր օրով, կը վախնային որ թագաւորը աւելի մեծ չարիքներ կը գործէ: Հերովդէս սակայն, երկրին խաղաղութիւնը չվրդովելու և իր անգթութիւնը մոռցնելու համար՝ Հրեաներուն սիրելի

աշխատութեան մը ձեռնարկեց: Երուսաղէմի Տաճարը որ քանդուած էր, սկսաւ վերաշինել տալ հոյակապ կերպով՝ Այդ շինութիւնը պիտի տուէր երկար տարիներ և իր յաջորդներուն օրով միայն պիտի աւարտէր:

Հերովդէսի իշխանութեան միջոցին ծնաւ Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս:

Հրահանգ. — Ո՞վ էր Հերովդէս և իր օրով ի՞նչ եղան Մա-կաբայեցեք. — Հերովդէս ինչո՞ւ կը վախնար որ Հրեաները կ'ապստամբին. — Ուրիշ ի՞նչ անգթութիւն ըրաւ, և ինչո՞վ ուղեց սէրաշահիւ Հրեաները. — Ի՞նչ մեծ դէպք տեղի ունեցաւ Հերովդէսի օրով. — Երուսաղէմի Տաճարը քանի՞ անգամ կործանած էր և վերջին անգամ ե՞րբ վերաշինուած էր:

Բ. ՄԱՍ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. ԲՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԷՆ ՄԻՆՁԵՒ ԲԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ

1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Հերովդէս թագաւորին օրով Հրէաստանի մէջ կ'ապրէր Չաքարիա անունով արդար քահանայ մը, իր կնոջ՝ Յղիսաբեթի հետ: Երկուքն ալ ծեր էին և զաւակ չունէին:

Օր մը, մինչդեռ Չաքարիա կ'աղօթէր, Աստուծոյ հրեշտակը իրեն երեցաւ և ըսաւ. «Դուն զաւակ մը պիտի ունենաս որուն անունը Յովհաննէս պիտի դնես. անիկա քեզի և ուրիշ շատերու համար ուրախութիւն մը պիտի դառնայ, որովհետև մեծ պիտի ըլլայ Աստուծոյ առջև, Ս. Հոգիով պիտի լեցուի և անհաւատները Աստուծոյ ճամբուն պիտի վերադարձնէ»:

Չաքարիա չուղեց հաւատալ, որովհետև ինք ու իր կինը շատ ծեր էին: Այն ատեն՝ հրեշտակը յարեց. «Ես Գաբրիէլ հրեշտակապետն եմ, Աստուած զիս զրկեց որ քեզի այս աւետիսը տամ, բայց դուն չհաւատացիր. և անհամբ պիտի ըլլաս դուն, մինչև այն օրը ուր ըսածս կատարուի»: Իրաւ ալ՝ տաճարէն ելլելէն վերջ՝ Չաքարիա չկրցաւ խօսիլ:

Հրեշտակին խոստման համաձայն Եղիսաբեթ զաւակ մը ծնաւ . ազգականները, ասիկա լսելով, եկան անոնց ուրախութեան մասնակցելու, և փափաք յայտնեցին որ տղան հօրը պէս Զաքարիա կոչուի: Բայց Եղիսաբեթ՝ հրեշտակին պատուէրը միտքը բերելով՝ պնդեց թէ Յովհաննէս պիտի կոչէ:

Այն ատեն՝ որոշեցին հօրը հարցնել, և Զաքարիա ալ տախտակի մը վրայ գրեց թէ տղուն անունը Յովհաննէս պիտի դրուի: Ատոր վրայ իսկոյն լեզուն բացուեցաւ:

Զաքարիա նորածինը բազուկներուն մէջ առաւ, ու մարգարէացաւ ըսելով. «Ո՛վ պղտիկ տղայ, դուն ամենակարող Աստուծոյ Մարգարէն պիտի կոչուիս, որովհետեւ Տիրոջ ճամբան պիտի պատրաստես, և անոր ժողովուրդին պիտի սորվեցնես թէ Աստուծոյ գթած ողորմութեամբ իր մեղքերուն թողութիւն շնորհուելով պիտի փրկուի»:

Հրահանգ. — Ո՛վ էր Զաքարիա և ինչո՞ւ համը դարձաւ. — Ի՞նչ կը նշանակէ մարգարէանալ. — Իսրայելացիք ի՞նչ նշանաւոր մարգարէներ ունեցած էին. — Զաքարիա ի՞նչ տեսակ փրկութիւն մարգարէացաւ Աստուծոյ ժողովուրդին համար:

2. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԱԻԵՏՈՒՄԸ

Այն ատենները Գալիլիոյ Նազարէթ քաղքին մէջ կը բնակէր Գաւթի գեղէն Մարիամ անուն կոյս մը որ Յովսէփ անունով նշանած մը ունէր: Զաքարիայի երեւնալէն վեց ամիս՝ վերջ՝ Գարրիէլ հրեշտակապետ երեցաւ նաև Մարիամի և ըսաւ անոր. «Ուրախացի՛ր, Մարիամ, որովհետեւ Աստուած քեզի հետ է»:

Մարիամ չհասկցաւ թէ ի՞նչ կը նշանակէ այդ ողջոյնը և չփոթեցաւ: Հրեշտակը ապահովցուց զայն՝ յա-

բելով. «Մի՛ վախնար, Մարիամ, Ս. Հոգին քու վրադ պիտի իջնէ և դուն զաւակ մը պիտի ունենաս որուն անունը Յիսուս (Փրկիչ) պիտի դնես. Անկիա Աստուծոյ Որդի պիտի կոչուի, պիտի տիրանայ Դաւիթի աթոռին, և իր թագաւորութիւնը վերջ չպիտի ունենայ»:

Հրեշտակը Մարիամին յայտնեց նաև թէ իր ազգականը Եղիսաբեթ ալ զաւակ մը պիտի ունենայ: Ատոր վրայ՝ Մարիամ հաւատաց և ըսաւ. «Ես Տիրոջը աղախինն եմ, թող քու ըսածիդ պէս ըլլայ»:

Երբոր հրեշտակը մեկնեցաւ, Մարիամ ելաւ Զաքարիայի տունը գնաց՝ Եղիսաբեթին այցելութիւն տալու: Եղիսաբեթ հասկցաւ թէ անկիա Աստուծոյ Որդիին մայր պիտի դառնայ, և գոչեց. «Օրհնեա՛լ ես դուն կիներուն մէջ և օրհնեալ է քու ունենալիք զաւակդ. դուն իմ Տիրոջ մայրն ես, և ես երջանիկ եմ որ Աստուած քու այցելութիւնդ ընդունելու ուրախութիւնն ալ տուաւ ինձի»:

Մարիամ Եղիսաբեթի քով կեցաւ երեք ամիս և յետոյ իր տունը դարձաւ նորէն:

Հրահանգ. — Ո՛վ էր Մարիամ և ինչո՞ւ հրեշտակը անոր երեւցաւ. — Ի՞նչ էր Դաւիթի աթոռը (Թագաւորութիւնը), ե՞րբ կը սկսէր և ի՞նչ անցքերու առարկայ դարձաւ. — Ի՞նչ կը նշանակէին Եղիսաբեթի կողմէ Մարիամի ըսուած խօսքերը:

3. ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՆԴԸ


Հռոմէացւոց Օգոստոս կայսրը հրամայեց որ իր հըպատակներուն մարդահամարը կատարուի, և ատոր համար ամէն մարդ իր ծնած քաղաքը ելթայ անունը արձանագրել տալու:

Յովսէփ ու Մարիամ՝ Դաւիթի ցեղէն ըլլալով, ճամբայ ելան Բեթղէէմ՝ իրենց ծննդավայրը երթալու։ Երբ հոն հասան, պանդոկները լեցուած էին. այս պատճառաւ օտարացեացան գոմի մը մէջ անցընել գիշերը։ Նոյն գիշերը աշխարհ նկաւ Յիսուս, զոր Մարիամ խանձարուրով պատելով մատրին մէջ դրաւ։



Հովիւները երկրպագեցին Յիսուսին

Բեթղէէմի չրջակաները հովիւներ իրենց հօտերը կը պահպանէին այդ գիշերը, երբ յանկարծ փառաւոր լոյս մը ծագեցաւ երկինքէն։ Հովիւները սկսան վախնալ, բայց Աստուծոյ հրեշտակը իրենց երեւնալով ըսաւ. «Մի վախնաք, որովհետեւ մեծ աւետիս մը պիտի տամ ձեզի. Դաւիթի քաղքին մէջ այսօր ձեզի Փրկիչ մը ծնաւ»։



Յիսուսի մանկուիւիներ

Յետոյ՝ երեւցան ուրիշ բազմաթիւ հրեշտակներ, որոնք «Փառք Աստուծոյ՝ երկինքի բարձրութեան մէջ, խաղաղութիւն երկրի վրայ, և հաճութիւն մարդոց մէջ» տաղը կ'երգէին :

Երբ հրեշտակները աներեւութացան, հովիւները ըսին իրարու. « Երթանք Ինթլէէմ, տեսնենք թէ ինչ եղած է » :

Եւ երբ հոն գացին ու տեսան մտորին մէջ պառկած մանուկը, երկրպագեցին անոր : Յետոյ՝ իրենց սեղերը դարձան՝ Աստուծոյ փառք տալով :

Ութ օր վերջ՝ Մարիամ և Յովսէփ մանուկին անուներ Յիսուս դրին :


Հրահանգ — Մարիամ ինչո՞ւ Ինթլէէմ գնաց. — Ինչ է մարդահամարը. — Ինչո՞ւ Յիսուս մտորի մը մէջ ծնաւ. — Ամէնէն առաջ որո՞նց յայտնուեցաւ Յիսուսի ծնունդը, և ինչպէ՞ս. — Ինչ կը նշանակէր հրեշտակներուն երգած տաղը :

4. Մ Ո Գ Ե Ր Ը

Յիսուսի ծնած ասեւը Արեւելքի կողմը բնակող մոգեր փայլուն աստղ մը տեսան և անոր հետեւելով եկան մինչև Երուսաղէմ, ուր աստղը աներեւութացաւ : Մոգերը որոնք գուշակած էին թէ մեծ թագաւոր մը կը ծնի, կը հարցնէին թէ « Ո՞ւր է Հրեաներու նորածին թագաւորը որուն երկրպագելու եկած ենք » :

Հերովդէս՝ ասիկա լսելով, չփոթեցաւ, կանչեց բոլոր քահանայապետները և անոնց հարցուց թէ ո՞ւր պիտի ծնէր Քրիստոս. անոնք ալ ըսին թէ մարգարէին գուշակութեան համեմատ՝ Ինթլէէմի մէջ պիտի ծնի :

Այն ատեն Հերովդէս իր մօտ բերել տուաւ մոգերը, անոնց յայտնեց թէ նորածին թագաւորը Բեթղէէմ կը գտնուի, ու պատուիրեց որ եթէ զայն գտնեն, վերա-



Մոգերը փայլուն աստղ մը տեսան

կնդրուկ և զմուռս, զորս հետերնին բերած էին:


Ասդին՝ Հերովդէս մեծ անհամբերութեամբ անոնց վերադարձին կը սպասէր: Վախնայով որ նորածին թագաւորը իր իշխանութեան վերջ կուտայ, որոշած էր զայն սպանել: Մոգերէն պիտի հասկնար թէ իրօք ո՞ւր կը գտնուի:

Բայց Աստուած երազի մէջ մոգերուն երեւնայով պատուիրեց որ Հերովդէսի մօտ չդառնան և անոր չիտացնեն Յիսուսի ուր գտնուիրը. մոգերն ալ ուրիշ ճամբով մը դարձան իրենց երկիրը, առանց Հերովդէսի հանդիպելու:

դարձին գան իրեն իմաց տան, որպէս զի ինք ալ անոր երկրպագէ:

Երբ մոգերը ճամբայ ելան, փայլուն աստղը նորէն երեւցաւ, և զիրենք առաջնորդեց մինչև այն տեղը ուր ծնած էր Յիսուս:

Մոգերը շատ ուրախացան որ իրենց նպատակին հասան, ծնրադրեցին Յիսուսի առջև, և անոր մատուցին առատ նուէրներ, որպէս:



Հերովդէս և Մոգերը


Հրահանգ. — Մոգերը ինչ գուշակեցին փայլուն աստղին հոգմէ երուսաղէմ առաջնորդուելով. — Ինչու վախցաւ Հերովդէս և ինչ կ'ուզէր ընել. — Ինչպէս Աստուած արգիլեց անոր մտածած չարութիւնը. — Ինչ է կնդրուկը, ինչ է զմուռը. ինչ կը գործածուէին:

5. ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Յովսէփ և Մարիամ՝ ծնելէն քառասուն օր կտքը Յիսուսը տարին Երուսաղէմի Տաճարը՝ Աստուծոյ ընծայելու: Այդպէս կը պատուիրէր Մովսէսի օրէնքը, որուն համաձայն՝ հարուստները իրր ընծայ զոյգ մը գառնուկ կը տանէին նորածինին հետ, և աղքատներն ալ զոյգ մը տատարակ: Յիսուսի ծնողքը աղքատ էին, և զոյգ մը տատարակ տարին:

Այն ատենները Երուսաղէմի մէջ Սիմէոն անունով

արդար ու աստուածավախ ծերունի մը կար: Ս. Հոգին անոր խոստացած էր թէ Փրկիչը շտեմած չպիտի մեռնի: Երբ Յիսուս տաճարը կը գտնուէր, Սիւէնն եկաւ, մանուկը գիրկը առաւ և ըսաւ. «Տէ՛ր, հիմայ խաղաղութեամբ առ հոգիս, որովհետև աչուքներս տեսան Փրկիչը զոր պատրաստեցիր բոլոր ազգերուն համար»:



Յիսուսի ընծայումը

Այդ միջոցին Հերովդէս՝ հասկնալով թէ Մոգերը չը պիտի դառնան իր քով, հրամայեց որ Բեթլէէմի և շըրջականերուն մէջ գտնուող երկու տարեկանէն պզտիկ բոլոր տղաքը մեռցնեն. այսպէսով կը յուսար Յիսուսը ապահով կերպով սպաննել տալ:

Բայց Աստուծոյ հրեշտակը՝ երազի մէջ Յովսէփի երևնալով ըսաւ. «Ելիր, ա՛ն տղան ու մայրը, փախիր Եգիպտոս և հոն մնացիր մինչև որ ես քեզի իմաց տամ. որովհետև Հերովդէս մանուկը կը փնտռէ սպաննելու համար»: Յովսէփի ելաւ գիշերանց, առաւ Մարիամն ու Յիսուսը և փախաւ Եգիպտոս:

Յովսէփի Եգիպտոս մնաց մինչև Հերովդէսի մահը, ուրկէ վերջ, հրեշտակին հրամանով, դարձաւ Իսրայել:



Եգիպտոս փախուստը

լացւոց երկիրը և հաստատուեցաւ Նազարէթ քաղաքը՝ Այնտեղ ընակելուն համար է որ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ:

Հրահանգ.—Ինչո՞ւ Յիսուս Նրուսողէմի Տաճարը տարուեցաւ.—Ինչ կը նշանակէ Աստուծոյ ընծայումը.—Ո՞վ էր Սիւէնն Եբրունին և ինչպէ՞ս կատարուեցաւ անոր եղած խոստումը.—Յովսէփ և Մարիամ ինչո՞ւ Եգիպտոս փախցուցին Յիսուսը.— Ինչո՞ւ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ:

6. ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՉ

Յովսէփ և Մարիամ ամէն տարի Չատկուան տօնին Երուսաղէմ կ'երթային: Երբ Յիսուս տասերկու տարեկան էր, նորէն գացած էին Չատկը Երուսաղէմ անցընելու: Վերադարձին Յիսուս Երուսաղէմ մնաց, մինչդեռ Յով-



Յովսէփ և Մարիամ Յիսուսը գտան Տաճարին մէջ

սէփ և Մարիամ կը կարծէին թէ իրենց ճամբու ընկերներուն հետ կը գտնուի:

Օրուան մը ճամբայ երթալէ վերջ, յանկարծ տեսան որ Յիսուս չկայ, իսկոյն փնտոեցին ամէն կողմ, ու չը գտնելով՝ վերադարձան Երուսաղէմ: Ամբողջ երեք օր

զայն փնտոելէ ետք, վերջապէս գտան տաճարին մէջ, նստած վարդապետներուն հետ, որոնց հարցումներ կ'ուղղէր: Բոլոր լսողները կը հիանային իր իմաստութեան և տուած պատասխաններուն վրայ:

Յովսէփ և Մարիամ զարմացան զինքը այդտեղ տեսնելով. «Չաւակս, ի՞նչ ըրիր, ըսած Մարիամ, երեք օր է որ քեզ կը փնտոենք և շատ չարչարուեցանք քեզի համար»: Այն ատեն Յիսուս պատասխանեց. «Ինչո՞ւ զիս կը փնտոելիք, չէ՛ք զիսեր որ ես պէտք է չօրս տան մէջ ըլլամ»:

Մարիամ և Յովսէփ չհասկցան այս խօսքին իմաստը: Յիսուս անոնց հետ վերադարձաւ Նազարէթ: Միշտ կը հնազանդէր անոնց խօսքին, կը զարգանար իմաստութեամբ ու հասակով, և Աստուծոյ ու մարդոց առջեւ միշտ աւելի շնորհալի կը դառնար:

Հրահանգ — Յովսէփ և Մարիամ ի՞նչպէս կորսնցուցին Յիսուսը և ո՞ւր գտան զայն. — Ի՞նչ կը նշանակէր Յիսուսի տուած պատասխանը. — Յիսուս ի՞նչ տեսակ յատկութիւններով նշանակելի կը դառնար:

7. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Չաքարիայի որդին՝ Յովհաննէս՝ անապատին մէջ կ'ապրէր, երբ Աստուած հրամայեց անոր որ երթայ քահանայութեան ժողովուրդները: Յովհաննէս ուղտի բուրդէ հագուստ կը հագնէր, կաշիէ գօտի կը կապէր և մարտի ու վայրի մեղր կ'ուտէր:

Երբոր Յորդանան եկաւ, սկսաւ քարոզել. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի թագաւորութիւնը կը մօ-

տենայ. ահա ինձմէ աւելի զօրաւոր մէկը կու գայ, որուն օտքին կօշիկները քակելու անգամ արժանի չիմ ես. ես ձեզ ջուրով կը մկրտեմ, ինք ձեզ Ս. Հոգիով պիտի մկրտէ»:

Ու կը մկրտէր բոլոր ապաշխարողները: Հրէաստանի




Յովհաննէս Մկրտիչ կը քարոզէ

ամէն կողմերէն մարդիկ կուգային իր մօտ, կը խոստովանէին իրենց մեղքերը և կը մկրտուէին Յորդանանի մէջ:

Յիսուս որ այն ատենները երեսուներորդ տարին կը մտնէր, նոյնպէս Նազարէթէն Յորդանան եկաւ՝ Յովհաննէսէն մկրտուելու համար: Յովհաննէս չուզեց մկրտել, ըսելով. «Ես պէտք է քեզմէ մկրտուիմ. դո՞ւն ինձի կու գաս»: Բայց Յիսուս պատասխանեց. «Թո՛ղ որ մկրտուիմ հիմայ. պէտք է ընենք այն ինչ որ արդար է»: Յովհաննէս այլևս չընդդիմացաւ և մկրտեց Յիսուսը:

Այդ միջոցին երկինքը բացուեցաւ և Յովհաննէս տեսաւ որ Ս. Հոգին աղանձի կերպարանքով կ'իջնէ Յիսուսի վրայ:



Յիսուսի մկրտութիւնը

Միևնոյն ժամանակ երկինքէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Այդ է իմ սիրելի որդիս որուն հաւանած եմ»:

Հրտահանգ. — Ե՞րբ ծնած էր Յովհաննէս Մկրտիչ և ի՞նչ կերպով. — Ո՞վ էր Ձաքարեա. — Յովհաննէս որո՞ւ կ'ակնարկէր՝ ըսելով որ իմէ աւելի զօրաւորը պիտի գայ. — Ի՞նչ անցքեր տեղի ունեցած էին Յորդանանի մէջ:

Բ. ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ



8. ՅԻՍՈՒՄԻ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Մկրտուելէն վերջ՝ Յիսուս Գալիլիա գնաց: Օր մը, մինչդեռ ծովեզերքը կը պտտէր, տեսաւ երկու նաւակներ և խուճմբ մը ձկնորսներ: Այս վերջինները իրենց ուռկանները կը լուային:

Ձկնորսները կը տրանջային թէ ամբողջ գիշերը աշխատեցան և չկրցան բան մը որսալ: Այն ատեն՝ Յիսուս մտաւ նաւակներէն մէկուն մէջ, որուն տէրը Սիմոնն էր և հրամայեց որ նորէն ուռկան նետեն: Այս անգամ ձուկերը այնքան առատ լեցուեցան ուռկաններուն մէջ որ Սիմոնի նաւակին ձկնորսները ստիպուեցան միւս նաւակին մարդիկը օգնութեան կանչել ուռկանը քաշելու համար, ու երկու նաւակներն ալ ընկղմելու աստիճան լեցուեցան:

Սիմոն և իր ընկերները զարմացան այդ արդիւնքը տեսնելով, և հասկցան որ սուրբ մարդ մըն էր Յիսուս: Երբոր ցամաք ելան, Յիսուս ըսաւ անոնց. «Հետեւեցէ՛ք ինձի, և ես մարդու որսորդ պիտի ընեմ ձեզ»:

Ձկնորսները թողուցին իրենց ուռկանները և Յիսուսի հետեւեցան:

Գալիլիոյ մէջ, ժողովուրդը միշտ կուգար կը խմբուէր Յիսուսի շուրջը, անոր քարոզութիւնները մտիկ ընելու համար: Շատեր կ'ուզէին բնաւ չբաժնուիլ իրմէ: Յիսուս յաջորդաբար ընտրեց տասներկու հոգի որոնք իր առաքեալները դարձան: Ասոնք էին՝ Սիմոն որ Պետրոս կը կոչուէր, իր եղբայրը Անդրէաս, Յակոբոս մեծ և իր

եղբայրը՝ Յովհաննէս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Թովմաս, Մատթէոս, Յակոբոս փոքր, Սիմոն Կանանացի, Քաջէոս և Յուդա Իսկարիովտացի:

Յիսուս կը քարոզէր թէ արքայութեան մտնելու համար պէտք է մկրտուիլ, թէ ինք մարդիկը փրկելու համար աշխարհ եկած է, և թէ պէտք է հաւատալ իր աստուածութեան:

Ամէն կողմէ հիւանդներ կը բերէին Յիսուսի, որ անմիջապէս կը բժշկէր զանոնք: Կը բաւէր որ իրեն հաւատան, և բժշկութիւնը կը կատարուէր:

Հրահանգ. — Յիսուս ի՞նչ ըրաւ ձկնորսներուն.— Ձկնորսները թնչէն հասկցան Յիսուսի սրբութիւնը.— Ի՞նչ կը նշանակէր Յիսուսի անոնց ուղղած խօսքը թէ «զիրենք մարդու որսորդ պիտի ընէ».— Ինչպէ՞ս ընտրուեցան Յիսուսի առաքեալները.— Ի՞նչ բան կը բաւէր՝ Յիսուսի միջոցաւ բժշկութիւն գտնելու համար.— Ի՞նչ կը քաջագէր Յիսուս:


9. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

Օր մը, մինչդեռ մեծ բազմութիւն մը իրեն կը հետեւէր, Յիսուս լերան մը վրայ ելաւ և քարոզեց՝ ըսելով.

«Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, աղէկութիւն ըրէ՛ք անոնց որ ձեզ կ'ատեն, աղօթեցէ՛ք անոնց համար որոնք ձեզի գէշութիւն կ'ընէն»:

«Վարուեցէ՛ք մարդոց հետ այնպէս ինչպէս կ'ուզէք որ վարուին ձեզի հետ. այդ կերպով միայն կրնաք արժանի վաւարակները դառնալ ձեր երկնաւոր Հօրը, որուն արեւ հաւասարապէս կը ծագի չարերուն և բարիներուն վրայ, և անձրև կը բերէ թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն»:

«Մի՛ դատէք ու չպիտի դատուիք: Երեւոյցէ՛ք և ձեզի ալ պիտի ներեն: Տուէ՛ք և ձեզի ալ պիտի տան» Ինչ չափով որ չափէք, այն չափով ալ պիտի չափուիք»



«Միրեցէ՛ք ձեր թշնամիները»

«Ինչո՞ւ կը տեսնէք ձեր եղբոր աչքին մէջ գտնուող յարդի չիւղը, ու չէք տեսներ ձեր աչքին մէջ գտնուող գերանը:


«Աղօթելու գացած ատեննիդ եթէ սրդողած էք ձեր եղբորը հետ, նախ հաշտուեցէք անոր հետ և յետոյ աղօթեցէք:

«Երբ ողորմութիւն տար, մի՛ ծանուցանէք. աջ ձեռքին տուածը պէտք չէ որ ձախ ձեռքը իմանայ:

«Զգու չացէ՛ք սուտ մարդարէներէն, որոնք ոչխարի կերպարանքով գայեր են: Բարի ծառը բարի պտուղ

կու տայ և չար ծառը չար պտուղ. ուրինն զանոնք իրենց պտուղներէն ճանչցէ՛ք:

«Աղօթեցէ՛ք, և ըսէք այսպէս —



Յիսուս կը բժշկէր հեւանդները

«Ո՛վ Մեր Հայրը որ երկինքն ես, բու անունդ սուրբ Ըլլայ, քու թագաւորութիւնդ գայ. թող քու կամքդ Ըլլայ, ինչպէս երկինքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ. մեր ամէն օրուան հացը այսօր, ալ տուր մեզի և մեր պարտքը մեզի շնորհէ. ինչպէս որ մենք կը շնորհնք մեր պարտականներուն. մի՛ ձգեր մեզ փորձութեան մէջ, այլ ազատէ մեզ չարէն, որովհետեւ թագաւորութիւն, զօրութիւն ու փառք քուկդ են, ամէն»:

Յիսուս շարունակ հրաշքներ կը գործէր անկէ ետքը: Բարոտներ և անդամաւորյծներ բժշկուեցան իր շնորհիւ: Անգամ մը, մինչդեռ նաւով կը ճամբորդէր իր աշակերտներուն հետ ու քնադած էր, սաստի՛ղ փոթորիկ ծագե-

ցաւ : Յիսուսի աշակերտները վախցան և գինքը քունէն արթնցուցին : Յիսուս ելաւ և աշակերտներուն թերեհաւատութիւնը յանդիմանալէ վերջ սաստեց ծովը որ խկոյն հանդարտեցաւ : Ուրիշ անգամ մը Գալիլիոյ ծովեզերքին մօտ երկու կոյրեր ելան իր դէմը . Յիսուս ձեռքը անոնց աչքերուն վրայ դրաւ , և անա անոնք սկսան տեսնել :

Հրահանգ. — Բացատրել Յիսուսի խօսքերուն իմաստը :

10. ՍԵՐՄԱՆԱՅԱՆԻՆ ԱՌԱԿԸ

Յիսուս ուրիշ քարոզի մը մէջ ըսաւ .

«Սերմանացան մը ելաւ սերմ ցանելու , և սերմեր ինկան արտէն դուրս , ճամբուն վրայ , ուր թռչուններ կերան զանոնք :

«Ուրիշ սերմեր ինկան ապառաժուտ տեղեր . խորունկ հողին մէջ թաղուած չլլալով՝ չուտով ծլեցան . և արեւը կլլելուն պէս այրեցան : Եւ որովհետեւ արմատ չունէին , խկոյն չորցան :

«Մաս մը սերմեր ալ ինկան փուշերու մէջ , փուշերը մեծցան և զանոնք խեղդեցին :

«Իսկ այն սերմերը , որոնք լաւ հողի վրայ ինկան , պտուղ տուին . մէկ սերմը հարիւր , ուրիշ մը վաթսուն , ուրիշ մը երեսուն պտուղ տուաւ » :

Աշակերտները հարցուցին թէ ինչ կը նշանակէ այդ առակը : Յիսուս պատասխանեց .

«Սերմը Աստուծոյ խօսքն է . կան մարդիկ որ կը լսեն այդ խօսքը , բայց միտք չեն պահեր , և չարը կ'ուգայ անոր սրտին մէջէն ցանուածը կը տանի . ճամբուն

վրայ ինկած և թռչուններէն կերուած սերմն է ասիկա : «Ուրիշներ՝ ուրախութեամբ կը լսեն Աստուծոյ խօսքը , բայց հալիւ վայրկեան մը կը հաւատան անոր , որով



Սերմանացան մը ելաւ սերմ ցանելու

անիկա արմատ չի բռներ իրենց մէջ . ապառաժուտ տեղերու մէջ ինկած սերմն է ասիկա :

«Դարձեալ ուրիշներ՝ կը լսեն Աստուծոյ խօսքը , բայց կեանքի մտահոգութիւններուն և հարստութիւններուն մէջ կը մոռնան զայն . փուշերու մէջ ինկած սերմն է ասիկա :

«Իսկ կան որ կը լսեն Աստուծոյ խօսքը , լաւ մը կ'ըմբռնեն զայն , անոր համաձայն կը վարուին . լաւ հողի վրայ ինկած սերմն է ասիկա . այն որ պտուղ կուտայ , երբեմն հարիւր , երբեմն վաթսուն , երբեմն երեսուն :

Հրահանգ. — Բացատրել սերմանացանին առակը , առօրեայ կեանքէ քաղուած օրինակներով Տեսեւելով Յիսուսի տուած մեկնութեան :

11. ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Մինչդեռ Յիսուս կը շարունակէր հիւանդները բժշկել և հրաշքներ գործել, խուճաք մը կիներ իրենց պղտիկ աղաքը բերին անոր, որպէս զի ձեռքը անոնց վրայ դնէ և օրհնէ:

Աշակերտները երբոր աղաքը տեսան, կարծեցին թէ



կը նեղացնեն Յիսուսը և անոնց մայրերը արգիլեցին, յանդիմանելով որ նեղութիւն կու տան վարդապետին:

Յիսուս տեսաւ ասիկա, սաստեց իր աշակերտները և հրամայեց որ չարգիլեն, ըսելով.

«Թողէք մանուկները որ ինձի մօտենան», որովհետեւ երկինքի արքայութիւնը անոնցն է որոնք մանուկներուն կը նմանին. ով որ Աստուծոյ արքայութիւնը մանուկի մը պէս չի՛ ձանձնար, չի կրնար այնտեղ մտնել»:

Բոլոր մանուկները ուրախ զուարթ խմբուեցան Յիսուսի շուրջը, հրապուրուած անոր անուշ ու բարի դէմքէն: Եւ Յիսուս մէկիկ մէկիկ շոյեց և օրհնեց զանոնք:

Եւ մանուկներուն չափ ուրախ եղան նաև անոնց մայրերը:

Այդ ատենները Հերովդէս բանտարկել տուած էր

Յովհաննէս Մկրտիչը որ զինքը յանդիմանած էր՝ իր եղբորը կնոջը՝ Հերովդիայի հետ ամուսնացած ըլլալուն համար: Հերովդիա վերջէն Հերովդէսի գլխատել տուաւ Յովհաննէս Մկրտիչը:

Հրահանգ.—Աշակերտները ինչո՞ւ մանուկներուն արգիլեցին Յիսուսի մօտենալ.—Յիսուս ինչո՞ւ սաստեց աշակերտները.— Ի՞նչ ըսաւ այդ առթիւ և ի՞նչ կը նշանակէին իր խօսքերը.— Ո՞վ էր Յովհաննէս Մկրտիչ, և ինչե՞ր ըրած էր:

12. ՅԻՍՈՒՍ ՀԱՅՆԵՐԸ ԿԸ ՇԱՏՅՆԷ

Ժողովուրդը վարժուած էր Յիսուսի հետեւելու. ուր որ երթար, անկէ չէր բաժնուեր: Օր մը, մինչդեռ վերջացուցած էր իր քարոզը, աշակերտները՝ տեսնելով որ իրիկուն եղած է, բսին իրեն. «Տէ՛ր, արձակէ ժողոր իրիկուն եղած է, բսին իրեն. «Տէ՛ր, արձակէ ժողոր որ երթայ մերձակայ գիւղերը, հանգստանայ և վուրդը որ երթայ մերձակայ գիւղերը, հանգստանայ և անոնք կերակուր գտնէ. այստեղ անապատի մէջ ենք և անոնք ուտելիք չունին»:

Այն ատեն Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Դուք կերակրեցէք ժողովուրդը»:

Աշակերտները պատասխանեցին թէ իրենք միայն հինգ հաց և երկու ձուկ ունին, և թէ այդքան ուտելիքը չի բաւեր ժողովուրդին:

Ատոր վրայ Յիսուս պատուիրեց աշակերտներուն որ ժողովուրդը, յիսունական հոգի, կարգ կարգ նստեցնեն: Յետոյ հինգ հացերն ու երկու ձուկերը առնելով, աղօթեց, կտրեց ու աշակերտներուն տուաւ որ բաժնեն: Աշակերտները բաժնեցին ու բաժնեցին և վերջը չեկաւ:

Հինգ հազար ժողովուրդ կար այնտեղ, ամէնքն ալ կերան ու կշտացան:



Յիսուս հացերը բազմացուց և բոլոր ժողովուրդը կշտացաւ

Ժողովուրդը երբ այս հրաշքը տեսաւ, սկսաւ աղաղակել:

«Այս է ճշմարիտ մարգարէն որ աշխարհ պիտի գար:»

Յետոյ ուղեց զայն թաղաւոր հոչակել, բայց Յիսուս չուտ մը առաքեալները նաև դրաւ և ինք ալ հեռանալով իբրան մը վրայ ելաւ աղօթելու:

Առաքեալները ծովուն վրայ փոթորիկի բռնուեցան և սկսան ողբալ, վախնալով որ պիտի խեղդուին: Յիսուս իսկոյն ծովուն վրայէն քակելով անոնց մօտեցաւ: Առաքեալները կարծեցին թէ տեսիլք մըն է ատկեալ:

բայց Յիսուս ճանչցուց ինքզինքը: Այն ատեն Պետրոս ըսաւ իրեն. «Նիկէ իրոք դուն ես, հրաման ըրէ որ ջուրերուն վրայէն քակելով քեզի գամ:» Յիսուսի հրամանին վրայ Պետրոս ջուրը մտաւ, սակայն հովը սաստիկ ըլլալուն վախցաւ և սկսաւ աղաչել Յիսուսի որ ազատէ զինքը: Յիսուս րոնեց անոր թեւէն ու նաւը տարաւ, ուր աշակերտները երկրպագեցին իրեն, ըսելով որ իրօք Աստուծոյ Որդին է:

Հրահանգ.—Յիսուս ինչ պարագաներու մէջ և ինչպէս բազմացուց հացերն ու ձուկերը.—Այս հրաշքէն ետք Յիսուս ինչու հեռացաւ ժողովուրդէն. — Ինչ պատահեցաւ ծովուն վրայ:

13. ԱՆՆԻՂԾ ԾԱՌԱՆ

Աշակերտներէն մէկը որ մը հարցուց Յիսուսի:



Ծառան ծունկի եկաւ

«Տէր, քանի՞ անգամ պիտի ներեմ եզրօրս երբ ինձի չարութիւն ընէ. եթէ անգամ կը բաւէ:»

Յիսուս պատասխանեց .

«Ա՛յ թէ եօթ , այլ եօթանասուն անդամ եօթ հեղ պէտք է ներես» :

Յետոյ հետեւեալ առակը պատկեց .

«Թագաւոր մը կ'ուզէր իր ծառաներուն հետ հաշիւ



Չար ծառան ընկերոջը կոտորէր սեղմեց

տեսնել . անոնցմէ մէկը շատ պարտք ունէր և չէր կրնար վճարել , այս պատճառաւ , թագաւորը հրամայեց որ զայն իբր գերի ծախեն : Իայց ծառան ծունկի եկաւ և պաղատեցաւ որ քիչ մըն ալ համբերէ , ու պիտի աշխատի պարտքը վճարելու : Թագաւորն ալ զթաց և շնորհեց անոր պարտքը :

«Նոյն ծառան ընկեր մը ունէր ուրիշ պղտիկ գումար մը կը պահանջէր : Շիտակ անոր գնաց , և կոկորդը տեղմելով ըսաւ որ վճարէ պարտքը : Խեղճ ընկերը իր տոքը ինկաւ և պաղատեցաւ որ քիչ մըն ալ համբերէ , ու պիտի աշխատի պարտքը վճարելու : Միւսը սակայն մտիկ չըրաւ և զայն բանտ նետել տուաւ :

«Թագաւորը երբոր իմացաւ ասիկա , բարկացաւ և անխիղճ ծառան կանչել տալով ըսաւ անոր .

«—Չա՛ր ծառայ , պէտք չէ՞ր որ ընկերոջդ գլխայիւր ինչպէս որ ես քեզի գլխայի :

«Եւ զայն բանտ նետել տուաւ :

«Իմ երկնաւոր Հայրս ալ այդ թագաւորին պէս պիտի վարուի ամէն անոնց հետ որոնք իրենց ընկերոջ սըրտանց չներեն» :

Հրահանգ.—Յիսուս ինչ առթիւ պատմեց անխիղճ ծառային առակը.—Ի՞նչ կը նշտնակէ այդ առակը.—Ի՞նչ կերպով պէտք է վաթուինք մեր ընկերներուն հետ :

14. ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՅԻՆ

Օրէնքի ծանօթ մարդ մը հարցուց Յիսուսի թէ ի՞նչ պէտք է ընէ երկինքի արքայութեան արժանանալու համար :

«Ի՞նչ գրուած է օրէնքին մէջ , հարցուց Յիսուս :»

Մարդը պատասխանեց .

«Պիտի սիրես քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ , բոլոր հոգուովդ և բոլոր մտածումովդ . քու ընկերդ ալ պիտի սիրես քու անձիդ պէս :»


«Էաւ պատասխանեցիր , ըսաւ Յիսուս , այդպէս ըրէ և պիտի արժանանաս երկինքի արքայութեան :»

«Բայց իմ ընկերս ո՞վ է ,» հարցուց նորէն մարդը :

Այն ատեն Յիսուս հետեւեալ առակը պատմեց .

«Մարդ մը երուսաղէմէն երիքով կ'երթար երբ հանդիպեցաւ աւազակներու , որոնք զինքը վիրաւորեցին ,

մերկացուցին ու կիսամեռ վիճակի մէջ ճամբուն վրայ ձգելով փախան գացին :



Բարի Սամարացի

«Քահանայ մը անցաւ այն ճամբէն, տեսաւ վիրաւորը, բայց հեռացաւ առանց անոր օգնելու : Ղևտացի մըն ալ որ անկէ ետքը այդ ճամբէն անցաւ, տեսաւ վիրաւորը, բայց նոյնպէս հեռացաւ առանց անոր օգնելու :

«Աւելի ետքը անցաւ Սամարացի մը, և վիրաւորը տեսնելով խղճաց. ձիւն վար իջաւ, ու մարդուն քով երթալով անոր վերքերը դարմանեց : Յետոյ զայն ձիուն վրայ դնելով պանդոկ մը տարաւ և սկսաւ խնամել :

«Միւս օրը, մեկնած միջոցին, պանդոկապետին դըրամ տուաւ և պատուիրեց որ լաւնայէ վիրաւորին . խոս-

տացաւ նաև որ եթէ իր տուած դրամէն աւելի ծախք ընէ, ինք վերադարձին կր վճարէ» :

Այս առակը պատմելէն վերջ Յիսուս հարցուց իր խօսակցին .

«Հիմայ դուն ըսէ թէ ո՞վ է գողերէն վիրաւորուած մարդուն ընկերը» :

«Այն որ գթաց անոր վրայ», պատասխանեց մարդը :

«Ուրեմն դուն ալ անոր պէս վարուէ», յարեց Յիսուս և զայն ճամբու դրաւ :

Հրահանգ. — Յիսուս ի՞նչ առթիւ պատմեց բարի Սամարացիին առակը և ի՞նչ դաս հանեց անկէ. — Որո՞նք Ղևտացի կը կոչուէին և որո՞նք Սամարացի :

15. ԲԱՐԻ ՀՈՎԻԻԷ

Փարիսեցիներն ու դպիրները կը տրտնջային յաճախ թէ Յիսուս աւելի մեղաւորները կ'ընդունէի և անոնց հետ կը ճաչէ : Իրաւ ալ Յիսուս կը գթար թշուառ ժողովուրդին վրայ, որ առանց հովիւի մնացած հօտի մը կը նմանէր :

Երբ Փարիսեցիներուն ու դպիրներուն տրտունջը իմացաւ, Յիսուս ըսաւ .

«Ես բարի հովիւն եմ. իմ ոչխարներս կը լսեն իմ ձայնս. ես կը ճանչնամ զանոնք, և անոնք ինձի կը հետեւին : Ես անոնց յաւիտենական կեանք կու տամ, ատեւին : Ես անոնց յաւիտենական կեանք կու տամ, ատեւին : Ես անոնց չպիտի կորսուին. ոչ ոք պիտի կրնայ զանոնք ինձմէ խլել, Բարի հովիւը իր կեանքը կու տայ իր հօտին համար : Ո՞վ է ձեր մէջէն ան որ հարիւր ոչխար ունեցած

առենը՝ երբ անոնցմէ մէկը կորսնցնէր . իննսուներ ինը հա-
տը ձգելով մէկ հատին ետեւէն չպիտի երթար զայն գրտ-
նելու համար . և եթէ գտնէր՝ ուրախութեամբ ուսը պի-
տի զարնէր , ու տուն դառնալով բարեկամներն ու դրա-



«Ուրախացէ՛ք ինձի հետ, կորսուած ոչխարս գտայ» :

ցիները պիտի կանչէր և ըսէր . — «Ուրախացէ՛ք ինձի հետ ,
որովհետեւ կորսնցուցած ոչխարս գտայ» : Այսպէս ալ եր-
կիրնքի մէջ ուրախութիւն կ'ըլլայ մէկ ապաշխարող մեղա-
ւորի համար :

«Յետոյ , կա՛յ կին մը որ տասը դրամ ունեցած ա-
տենը երբ մէկը կորսնցնէ , ճրագ չի վառեր , չաւեր , չի
փնտռեր ամէն կողմ՝ մինչև որ գտնէ կորսնցուցածը . և
եթէ գտնէ՝ բարեկամներն ու զրացիները կը կանչէ ու

կ'ըսէ . — «Ուրախացէ՛ք ինձի հետ , որովհետեւ կորսնցու-
ցած դրամս գտայ» : — Աստուծոյ հրեշտակներն ալ այդ-
պէս կ'ուրախանան երկիրնքի մէջ , մեղաւորի մը դարձի
եկած ըլլալը տեսնելով :

Հրահանգ . — Փարիսեցիներն ու դպիրները է՞նչ տրտուջ
ունէին , և Յիսուս է՞նչ կերպով անոնց պատասխանեց . — Ի՞նչ է
Փարիսեցին , է՞նչ է դպիրը . — Ի՞նչ են բարի հովուին պարտակա-
նութիւնները . — Յիսուս է՞նչ ըսել կ'ուզէ՞ր՝ այդ պարտականու-
թիւնները թուելով :

16. ԱՆՍՈՍԱԿ ՈՐԴԻՆ

Դարձեալ Յիսուս հետեւեալ առակը պատմեց .

«Մարդ մը երկու զաւակ ունէր . պզտիկ զաւակը
ըսաւ անոր . — «Հա՛յր , քու հարստութենէդ իմ բաժինս
տուր ինձի» : Մարդն ալ իր ունեցածը սոցոցը բաժնեց :
Պզտիկ զաւակը իր բաժինը առնելով հեռաւոր երկիր մը
գնաց և այնտեղ անառակութեամբ վատնեց զայն :

«Մինչդեռ ամէն բան լմնցուցած էր , սով ծագեցաւ
այն երկրին մէջ , որով ինք ալ անօթի մնաց , և աղարա-
կի մը մէջ սկսաւ խող արածել : Այնքան խեղճ էր որ
խողբրուն կերած եղջիւրները (իե՛յի պոչլնուզը) ուտել
կ'ուզէր , բայց չէին տար իրեն :

«Այն ատեն մտածեց թէ իր հօրը տունը շատ մը
ծառաներ կան՝ որոնք հաց կ'ուտեն , մինչդեռ ինք այն-
տեղ անօթի մեռնելու վրայ է , և որոշեց հօրը քով դառ-
նալով անոր ոտքը խնայ ու խնդրել որ զինքը իբր ծա-
ռայ ընդունի տան մէջ :

«Այնպէս ալ ըրաւ : Երբ հայրը իր զաւակը տեսաւ

հեռուէն, վազեց գրկեց զայն և համբուրեց: Տղան ըսաւ. «Հայր, ես մեղք գործեցի քեզի և Աստուծոյ դէմ. ասկէ վերջը արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Բայց



Անառակ որդիին դարձը

հայրը իսկոյն կանչեց ծառաները և հրամայեց անոնց. «Հանեցէք ասոր հին հագուստները և նոր հագուստներ հագցուցէք. կօշիկներ տուէք որ հագնի, մատանի մըն ալ անցուցէք մատին. յետոյ մորթեցէք պարարտ եզը, ուտենք և ուրախանանք»:

Մեծ եղբայրը այդ միջոցին արան էր. երբ տուն դարձաւ և եղածը հասկցաւ, բարկանալով ըսաւ. «Հայր, այսքան տարի է քեզի կը ծառայեմ, միշտ յարգելով քու պատուէրներդ, բայց դեռ ինձի ու մը անգամ չդոհեցիր. մինչդեռ պզտիկ եղբորս համար որ քու ստացուածքը անառակութեամբ կերաւ, պարարտ եզը մորթել կու տաս»: Հայրը պատասխանեց. — «Չաւակտ, դուն ամէն ատեն քովս ես, և ինչ որ ունիմ՝ քու կը է.

բայց պէտք է ուրախանալ ու խնդալ պզտիկ եղբորդ համար, որովհետեւ անիկա մեռած էր ու կենդանացաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:

Հրահանգ. — Ի՞նչ կը նշանակէ այս առակը. — Ի՞նչ պէտք է հասկնալ անառակ որդիին համար հօրը ըսած այն խօսքէն թէ «Մեռած էր ու կենդանացաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:

17. ՓԱՐԻՍԵՅԻՆ ՈՒ ՄԱՔՍՍԻՈՐԸ

Օր մը Յիսուս՝ իր հետեւորդներուն ճանչցնելու համար այն կեղծաւոր մարդիկը որոնք ինքզինքնին արդար կը դաւանին և այդ պատճառաւ ուրիշները կ'արհամարհեն, հեանեալ առակը պատմեց.

«Երկու հոգի Տաճար մտան Աստուծոյ աղօթելու. անոնցմէ մէկը Փարիսեցի մըն էր, իսկ միւսը մաքսաւոր մը:

«Փարիսեցին ոտքի վրայ կանգնած կ'աղօթէր ըսելով.

«— Ենորհակալ եմ Տէ՛ր որ ուրիշ մարդոց չեմ նմանիր. ուրիշներու ստացուածքը չեմ յափշտակեր սա մաքսաւորին պէս, անիրաւութիւն չեմ ըներ, չաբաթը երկու անգամ ծով կը պահեմ և բոլոր ստացուածքներու վրայ տասանորդ կուտամ»:

«Մաքսաւորը անկէ հեռու կեցած էր, բայց չէր համարձակեր աչուրները վեր բարձրացնել. կատարեալ խոնարհութեամբ ու ջերմեռանդութեամբ կ'աղօթէր:

«— Տէ՛ր, կ'ըսէր, գթա՛ իմ վրաս, որովհետեւ մեծ մեղաւոր մըն եմ ես»:

«Այս խոնարհ մաքսաւորը միւս գոռոզ Փարիսեցիէն

աւելի արդարացած տուն դարձաւ, որովհետեւ այն որ
ինքզինքը բարձրացնելու կ'աշխատի՝ խոնարհ պիտի



Փարիսեցիքն և Մաքսուսը

մնայ, և այն որ ինքզինքը կը խոնարհեցնէ, պիտի բար-
ձրանայ :»

Հրահանգ. — Ի՞նչ է Մաքսուսը. — Յիսուս ինչո՞ւ պատմեց
այս առակը. — Ո՞ր տեսակ բարձրութենէն զլուշացուց Յիսուս. —
Ի՞նչ է տասանորդը :

18. ՂԱԶՍՐՈՍԻ ՅՍՐՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը Յիսուս հիւրընկալութեցաւ Մարթա և
Մարիամ անուն երկու քոյրերու կողմէ : Յիսուս քարոզ-
ներ կը խօսէր անոնց, բայց միայն Մարիամ ուշադրու-

թեամբ մտիկ կ'ընէր, իսկ Մարթա զբաղած էր տնական
գործերով :

Այն ատեն Յիսուս ըսաւ անոր .

«Մարթա, շատ բաներու համար չոգ կ'ընես ու կ'աշ-
խատիս. բայց գիտցիր որ մէկ բան միայն պէտք է. նախ
պէտք է Աստուծոյ թագաւորութիւնն ու արդարութիւ-
նը փնտռել, միւսերը ինքիրենին կո գան» :



«Նախ պէտք է Աստուծոյ թագաւորութիւնը փնտռել»

Այս երկու քոյրերը Ղազարոս անունով եղբայր մը
ունէին զոր Յիսուս շատ կը սիրէր :

Օր մը, Ղազարոս հիւանդացաւ և քոյրերը Յիսուսի
ըտը տուին որպէսզի դայ ու բժշկէ : Բայց երբ Յիսուս
եկաւ՝ Ղազարոս մեռած և չորս օրէ ի վեր գերեզման
դրուած էր արդէն :

Մարթա ըսաւ Յիսուսի .

«Տէ՛ր, եթէ դուն այստեղ ըլլայիր, եղբայրս չէ՛ր մեռնէր, բայց ես գիտեմ թէ՛ հիմայ ինչ որ Աստուծո՛վ խնդրես, կուտայ քեզի» :

Յիսուս ըսաւ անոր որ եղբայրը յարութիւն պիտի առնէ : Յետոյ Ղազարոսի գերեզմանին քով երթալով, վերցնել տուաւ {գերեզմանաքարը, որ բարձր ձայնով կոչեց .

«Ղազարո՛ս, դուրս եկուր» :

Մեռեալը, իրօք ողջնցաւ :

«Քակեցէ՛ք կապերը», հրամայեց Յիսուս :

Եւ երբ կապերը քակեցին, Ղազարոս ոտքի ելաւ ողջ առողջ :

Շատ Հրեաներ որոնք Յիսուսի չէին հաւատար, այս հրաշքը տեսնելով ծունկի եկան անոր առջեւ և սկսան հաւատալ թէ իրօք Աստուծոյ Որդի է :

Հրահանգ. — Ի՞նչ կը նշանակէ Յիսուսի այն խօսքը թէ «Նախ պէտք է Աստուծոյ թագաւորութիւնը և արդարութիւնը փնտռել, միւսները ինքիտեանին կու գան» . — Ո՞վ էր Ղազարոս և ինչպէ՞ս յարութիւն առաւ :

19. ԵՐԱԽՏԱԳԷՏ ԲՈՐՈՏԸ

Ամէն տարի, Յիսուս երուսաղէմ կ'երթար Չատիկի անոնընկու : Քարոզութեանը երրորդ տարին՝ երբ Չատիկը մօտեցաւ, նորէն ճամբայ ելաւ Երուսաղէմ երթալու համար :

Սովորականին պէս, ամէն կողմէ հիւանդներ կը

բերուէին իրեն և խօկոյն կը բժշկէր զանոնք : Ժողովուրդը, այդ հրաշքները տեսնելով, միշտ աւելի խորապէս կը հաւատար անոր աստուածութեան ու զայն կը սիրէր :

Երբ երրորդ Չատիկը տօնելու համար Յիսուս Երուսաղէմ կ'երթար, իր դէմը ելան նաեւ թասը խեղճ բորոտներ, որոնք կ'աղաղակէին .

«Յիսուս, ողորմէ՛ մեզի» :

Յիսուս մօտեցաւ անոնց և ըսաւ .

«Մացէ՛ք ձեր քահանային ցոյց տուէ՛ք ինքզինքնիդ» :

Բորոտները գործադրեցին իր պատուէրը : Ծամբան ամէնքն ալ բժշկուեցան, և ուրախ զլւարթ ելան գացին :


Իրենցմէ մէկը միայն որ Սամարացի մըն էր, վերադարձաւ Յիսուսի մօտ, ծունկի եկաւ անոր առջեւ, և սկսաւ շնորհակալութիւն յայտնել :

Յիսուս տեսաւ որ միւսները չկան, և հարցուց .

«Տասը հոգի չբժշկուեցան» :

«Այո՛, Տէ՛ր», պատասխանեց բորոտը :

«Ուրեմն ո՞ւր են միւսները որոնք չեկան Աստուծոյ փառք տալու իրենց բժշկութեան համար, մէկ այս այլազգին է որ անա գոհութիւն կու տայ Աստուծոյ» :



Երախտագէտ բորոտը

Յետոյ օրհնեց բորոտը, յարելով .

«Ելի՛ր գնա . դուն հաւատացիր և հաւատքդ քեզ փրկեց» :

Հրահանգ.—Յիսուս ի՞նչ առթիւ տասը բորոտներուն հանդիպեցաւ.—Յիսուս առաջին անգամ ե՞րբ գնաց Երուսաղէմի տաճարը, և ի՞նչ պատահեցաւ այն միջոցին.—Սամարացի բորոտը ինչո՞ւ Յիսուսի օրհնութեան արժանացաւ բժշկուելէն վերջ :


20. ԶԱՔԷՆՍ

Անկէ ետքը Յիսուս Երիքով գնաց :

Այն քաղաքին մէջ Զաքէոս անունով հարուստ մարդ

մը կար որ մաքսաւորներու մեծն էր : Զաքէոս՝ Յիսուսի համբաւը լսած ըլլալով՝ ուզեց զայն տեսնել, բայց մեծ բազմութիւն կար փողոցներուն մէջ, և իր հասակն ալ շատ կարճ էր . այդ պատճառաւ, ծառի մը վրայ բարձրացաւ : Յիսուս տեսաւ զինքը և ըսաւ .

«Զաքէ՛ոս, վար իջի՛ր ծառէն, որով-



հետեւ այսօր քու տունդ պիտի գամ իջեւանիմ» :



Յիսուսի մուտքը Երուսաղէմ

Չաքէոս փութաց վար իջնել և ուրախութեամբ ընդունեց Յիսուսը:

Փողովուրդը, ասիկա տեսնելով, սկսաւ մրմռայ, որովհետեւ մաքսաւորները որոնք Հռոմայեցւոց համար տուրք կը հաւաքէին, չէին սիրուեր:

Այն ատեն Չաքէոս ըսաւ.

«Տէ՛ր, հարստութեանս կէսը կուտամ աղքատներուն և եթէ մէկը զրկած եմ, պատրաստ եմ չորս անգամը հատուցանելու»:

Յիսուս ալ պատասխանեց.

«Այսօր փրկուեցաւ քու տունդ, որովհետեւ դուն ալ Աքրահամի զաւակ մըն ես, ու ես եկած եմ փնտռելու և փրկելու անոնք որ կորսուած էին»:

Յիսուս կը քարոզէր նաեւ.

«Վերջին դատաստանին օրը Աստուած պիտի ըսէ արդարներուն. «Եկէ՛ք ինձի, ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը որ աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած է. որովհետեւ անօթեցայ և զիս կերակրեցիք. ծարաւցայ և ինձի ջուր տուիք»: Արդարները պիտի հարցնեն. «Տէ՛ր, մենք քեզ ե՞րբ անօթի տեսանք ու կերակրեցինք, ե՞րբ ծարաւ տեսանք ու ծարաւդ անցուցինք»: Եւ Աստուած պիտի պատասխանէ. «Այն օր պզտիկի մը ըրած է այդ բաները, ինձի ըրած կ'ըլլայ»:

Հրահանգ.—Երեքով քաղքին մէջ ինչե՞ր եղած էին առաջ. — Չաքէոսի դարձը ինչո՞ւ ուրախութիւն պատճառեց Յիսուսի. — Ինչպէ՞ս կրնանք Աստուած կերակրել և Աստուծոյ ծարաւը անցնել:

21. ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷջ

Երիքովէն՝ Յիսուս անցաւ Երուսաղէմ: Երբ Ձի-
թենեաց իրան մօտեցաւ, հեծաւ իշու մը վրայ և անանկ
մտաւ Երուսաղէմ: Ժողովուրդէն շատեր՝ իրենց հա-
գուստները կը փռէին գետինը, որպէսզի Յիսուս անոնց



Յիսուսի մուտքը Երուսաղէմ

վրայէն անցնի. ուրիշներ՝ ձիթենիի ոստեր կը կտրէին ու
կը սփռէին անոր անցած ճամբուն վրայ: Իսկ աշակերտ-
ները Աստուած կը փառաբանէին ըսելով, «Փա՛ռք Դա-
ւիթի զաւկին. օրհնեա՛լ ըլլայ Աստուծոյ անունով եկող
Թագաւորը. խաղաղութի՛նն երկինքը և փա՛ռք բար-
ձունքներուն մէջ»:

Բազմութեան մէջէն քանի մը Փարիսեցիներ եկան
ըսին Յիսուսի.

«Վարդապետ, յանդիմանէ՛ աշակերտներդ որ լռեն»:
Որովհետեւ չէին ուզեր Աստուծոյ որդի ճանչնալ Յիսուսը:
Այն ատեն Յիսուս պատասխանեց.

«Եթէ ասոնք լռեն՝ քարերը պիտի աղաղակեն»:
Յիսուսի Երուսաղէմ մտնելուն վրայ բոլոր ժողո-
վուրդը ոտքի ելաւ: Ա.մէն մարդ կը հարցնէր թէ ո՞վ է:
«Նազովրեցի Յիսուս մարգարէն է», կը պատասխա-
նէին շատեր:

Յիսուս յետոյ Երուսաղէմի նայեցաւ, լացաւ անոր
վրայ և մարգարէացաւ.

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, քանի՛ անգամ ուզեցի
հաւաքել քու զաւակներդ, ինչպէս հաւը իր վառեակները
կը հաւաքէ թևերուն տակ, և չհաճեցար: Բայց պիտի
զան օրեր՝ ուր թշնամիներդ չորս կողմդ պատնէշով
պիտի պատեն, պիտի պաշարեն ու պիտի նեղեն քեզ,
հիմնայատակ պիտի կործանեն քեզ, զաւակներդ ալ
հետդ, և քար քարի վրայ չպիտի ձգեն, որովհետեւ քեզի
բարիք կ'ուզէի ընել և դուն չհասկցար»:

Հրահանգ. — Յիսուս ի՞նչ կերպով Երուսաղէմ մտաւ. —
Ե՞րբ և ինչպէ՞ս կը տօնենք այդ օրուան յիշատակը. — Ի՞նչ կ'ը-
սէին աշակերտները, և փարիսեցիները ինչո՞ւ կը պահանջէին
Յիսուսէն որ լռեցնէ գոնոնք. — Յիսուս ի՞նչ մարգարէացաւ և
ինչո՞ւ:

22. ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Երբ Յիսուս Տաճարը մտաւ, տեսաւ որ շատ մը առեւտուր ընողներ և լուծապափոխներ, խռնուած են անոր մէջ: Այն ատեն խարաղան մը առաւ. բոլորն ալ դուրս վաճառեց, և անոնց սեղանները կործանեց ըսելով.



Յիսուս կը վաճառե վաճառականները

«Դուք աւաղակներու որջ դարձուցեր էք իմ տունս, որ աղօթքի տուն պիտի ըլլայ»:

Տաճարին մէջ շատ մը հիւանդներ կային, որոնք իսկոյն չըջապատեցին զինքը, և Յիսուս անոնց ամէնքն ալ բժշկեց:

Փարիսեցիները, այս հրաշքները տեսնելով, կը կատաղէին. անոնք աւելի բարկացան, երբ Տաճարին մէջ գտնուող մանուկները սկսան երգել.

«Օրհնեալ ըլլայ Դաւիթի սրբին»:
Փարիսեցիները դիտողութիւն ըրին Յիսուսի որ ըսաւ.
«Դուք չէ՞ք կարդացեր թէ մանուկներուն և կա-



Արի կինը երկու լումայ ձգեց գանձանակը

թընկերներուն բերնով պիտի տրուի օրհնութիւնը»:

Մինչդեռ տաճարը կը գտնուէր, Յիսուս տեսաւ հարուստներ որոնք առատ դրամ կը ձգէին գանձանակին մէջ: Այրի կին մըն ալ եկաւ անոնցմէ ետքը, և իր ամբողջ ունեցածը, մինակ երկու լումայ ձգեց:
Այն ատեն Յիսուս իր աշակերտներուն ցոյց տուաւ այդ կինը և ըսաւ.

«Փիտցած եղէք որ այս թշուառ կինը միւսներէն աւելի բան ձգեց գանձանակին մէջ. որովհետեւ միւսները իրենց աւելորդէն տուին, իսկ ասիկա, իր աղքատութեան մէջ, ամբողջ ունեցածը տուաւ»:

Յիսուս ամէն ցերեկ Տաճարին մէջ կը քարոզէր ժողովուրդին, որ սիրով մտիկ կ'ընէր զինքը, իսկ գիշերները կ'երթար կը հանգչէր Չիթենեաց լեռը:

Հրահանգ.—Յիսուս ինչո՞ւ Տաճարէն վաճառեց առեւտուք ընողները և լուսայափողները։—Ի՞նչ կ'երգէին մանուկները, և Յիսուս ի՞նչ ըսաւ անոնց համար։—Ինչո՞ւ այրի կնոջ երկու լուսան Աստուծոյ աւելի հաճելի է քան հարուստներու մեծ նուէրները։

23. ՅՈՒԴԱ ՄԱՏՆԻՉ

Փարիսեցիները և դպիրները, տեսնելով որ ժողովուրդը Յիսուսը կը սիրէ և անոր խօսքերուն կը հետևի, սկսան նախանձիլ ու կը մտածէին անոր դիտուն փորձանք բերել։

Այդ մտքով՝ կու գային անոր մօտ և հարցումներ կ'ուղղէին, զայն ծուղակը ձգելու համար։ Անգամ մը, եկան հարցուցին թէ պէ՞տք է հարկ վճարել Հոռոմայեցւոց։ Եթէ այո՞ ըսէր՝ ժողովուրդը որ չէր սիրեր հարկ վճարել, իրմէ պիտի հեռանար. իսկ եթէ պէտք չէ վճարել ըսէր, այն ատեն Կայսեր պաշտօնեաները զինքը պիտի ձերբակալէին։

Յիսուս, իսկոյն դրամ մը առաւ և Փարիսեցիներուն ցոյց տալով հարցուց թէ որո՞ւն պատկերն ու գիրը կը գտնուին անոր վրայ։ «Կայսեր», պատասխանեցին Փարիսեցիները։ «Լաւ ուրեմն, ըսաւ Յիսուս, ինչ որ կայսեր կը պատկանի՝ կայսեր տուէք, և Աստուծոյ պատկանածն ալ Աստուծոյ»։ Միւսները ապշեցան այս պատասխանը լսելով, և չհամարձակեցան բան մը ըսել։

Անկէ ետքը Յիսուս շատ անգամներ Փարիսեցիներուն և դպիրներուն երեսին տուաւ իրենց կեղծաւորութիւնն ու չարութիւնը։ Միւսոյն ատեն՝ ժողովուրդը կը զգուշացնէր անոնցմէ, ըսելով որ անոնք դրսանց արդար կ'երևան։

քայց ներքնապէս չար են և Աստուծոյ անհաճոյ։ Օձեր, խժի՛ր զաւակներ, կը կոչէր զանոնք։

Ժողովուրդը կը շարունակէր ամէն օր Տաճար դիմել՝ Յիսուսի խօսքերը մտիկ ընելու համար։ Քահանայապետը, դպիրները և ժողովուրդին ծերերը հաւաքուեցան Կայսրի քահանայապետին տունը և որոշեցին Յիսուսը մեռցնել։ Միայն թէ, Չատկուան այդ օրերուն չէին ուզեր մեռցնել, որովհետեւ ամէն կողմերէ շատ ժողովուրդ եկած էր Երուսաղէմ և Յիսուսի սպանութիւնը կրնար խռովութեան պատճառ դառնալ։

Այն ատեն՝ Յիսուսի տասերկու աշակերտներէն մէկը՝ Յուդա Իսկարիօտացին՝ որ շատ արծաթասէր էր, եկաւ գտաւ զանոնք և դրամի փոխարէն խոստացաւ իրենց ձեռքը մատնել Յիսուսը։

Քահանայապետն ու միւսները սիրով ընդունեցին Յուդայի առաջարկը։ Եւ Յուդա, անկէ վերջ, առիթ մը կը փնտռէր Յիսուսը մատնելու համար։

Հրահանգ.— Փարիսեցիներն ու դպիրները ինչո՞ւ կը նախանձէին Յիսուսէն. — Ի՞նչ տեսակ ծուղակներ կը արէին. — Ինչո՞ւ չէին ուզեր Չատկի տօնին մեռցնել Յիսուսը. — Ի՞նչ վատութիւն ըրաւ Յիսուսի աշակերտներէն մէկը, և ինչո՞ւ։

24. ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

Չատկի տօնը հասած ըլլալով, Յիսուսի աշակերտները հարցուցին թէ ո՞ւր պիտի ընէ զատկուան ընթրիքը։ Յիսուս քաղքին մէջ տուն մը ցոյց տուաւ, պատուիրելով որ երթան իմաց տան։

Իրիկունը Յիսուս իր տասերկու առաքեալներուն հետ այնտեղ գնաց ու սեղան նստաւ: Բայց ընթրիքի միջոցին ոտքի ելաւ, ղենջակ մը աննելով մէջքին կապեց, ու կոնքին մէջ ջուր դնելով սկսաւ լուալ իր աշակերտներուն ոտքը:



Յիսուս իր աշակերտներուն ոտքը կը լուայ

Պետրոս չուզեց հնազանդիլ, ըսելով.

«Տէր, դ՞ո՞ւն պիտի լուաս իմ ոտքերս»:

Յիսուս սակայն պնդեց, յայտնելով որ վերջը պիտի բացատրէ իր ըրածին նշանակութիւնը: Պետրոս նորէն չուզեց հնազանդիլ, բայց երբ Յիսուս ըսաւ որ եթէ թոյլ չտայ՝ իրեն հետ սեղանակից չպիտի ըլլայ, Պետրոս թողուց որ իր ալ ոտքերը լուայ:

Այսպէս բոլոր աշակերտներուն ոտուրները լուայէ վերջ, Յիսուս խօսեցաւ անոնց, և հետեւեալ կերպով բացատրեց ստնյուայի արարողութիւնը.

«Դուք զիս վարդապետ և Տէր կը կոչէք, ինչ որ մէջդ է: Երբ ես՝ վարդապետ ու տէր ըլլալով ձեր ոտուրները լուացի, պէտք է որ դուք ալ իրարու ոտքերը լուաք: Ես ասիկա ըրի որպէս զի ձեզի օյինակ ըլլայ, և դուք ալ ինձի պէս ընէք ձեզմէ խոնարհներուն: Ձեր մէջէն ամէնէն մեծը թող ամէնէն պղտիկին պէս ըլլայ, և հրամայողն ալ ծառայողին պէս»:

Հրահանգ. — Յիսուս խոնարհութեան Ի՞նչ դաս տուաւ իր աշակերտներուն և ե՞րբ. — Ի՞նչ կերպով բացատրեց այդ դասը. — Պետրոս առաքեալ ինչո՞ւ չէր ուզեր ոտքերը լուալ տալ. — Ե՞րբ և Ի՞նչ կերպով կը տօնենք այդ օրուան յիշատակը:

25. ԸՆԹՐԻԻՔԸ

Ոտնյուայէն վերջը ընթրիքը շարունակուեցաւ: Բայց Յիսուս տխուր էր, երբ աշակերտները ուզեցին հասկնալ իր տխրութեան պատճառը, Յիսուս ըսաւ.

«Դիտեցէք որ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»:

Բոլոր աշակերտները, բացի Յուդայէն, խռովեցան, իրարու երես կը նայէին՝ հասկնալու համար թէ արդեօք Յիսուս որո՞ւն ակնարկեց այդ խօսքով:

Յիսուս դանձո՞ք հանդարտեցոյց և յայտնեց թէ զինքը պիտի մատնէ այն՝ որուն իր պատառը պիտի տայ թրջելով: Յետոյ յարեց.

«Վայ այն մարդուն որուն ձեռքով պիտի մատնուիմ. աւելի լաւ էր որ անիկա բնաւ ծնած չըլլար»:

Այս խօսքերուն վրայ՝ Յուդա Յիսուսի մօտեցաւ և հարցուց.

«Տէ՛ր, արդեօք ե՞ս եմ»:

«Ի՞նչ ըսիր», պատասխանեց Յիսուս և պատառք թրջելով անոր տուաւ: Յուդա անօրհնապէս մեկնեցաւ անկէ:

Այն ատեն՝ Յիսուս առաւ հացը, օրհնեց, կտրեց, աչակերտներուն տուաւ և ըսաւ. «Առէ՛ք, կերէք ասիկա»



Յիսուս կը յայտնէ թէ Յուդա պիտի մատնէ զինքը

իմ մարմինս է»: Յետոյ առաւ բաժակը և նոյնպէս աչակերտներուն տալով ըսաւ. «Ամէնքէ ալ խմեցէք ասկէ, ասիկա իմ արիւնս է որ ձեր ու շատերու մեղքերուն թողութեան համար կը թափի»:

Նոյն իրիկունը, Յիսուս բաւ դարձեալ իր աչակերտներուն. «Ձեզի պատուէր մը պիտի տամ, սիրեցէ՛ք

իբրար, ինչպէս որ ես սիրեցի ձեզ, իրարու մասին ձեր ունենալիք սէրէն յայտնի պիտի ըլլայ թէ իմ աչակերտներս էք»:

Եւ օրհնեց զանոնք, խնդրելով Աստուծմէ որ զանոնք հանգիստ և շարէն ազատ պահէ:

Հրահանգ.—Ի՞նչ պատահեցաւ ընթրիքին շարունակութեան միջոցին.—Յիսուս ի՞նչ կերպով յայտնեց թէ Յուդա պիտի մատնէ զինք.—Ինչպէ՞ս բաժնեց հացն ու բաժակը. մեր եկեղեցին ի՞նչ էտրհուրդ ունի և յիշատակ այդ բաժանումն:

26. ՅԻՍՈՒՍԻ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻԻՒՆԸ

Ընթրիքէն վերջ Յիսուս և իր աչակերտները բարձրացան Չիթենեաց լեռը: Այնտեղ Յիսուս ըսաւ իր աչակերտներուն թէ նոյն գիշերը ամէնքն ալ պիտի հեռանան իրմէ: «Արովհետեւ, յարեց, երբ հովիւը զարնուի, ոչխարները պիտի ցրուին»:

Պետրոս առաքեալը սակայն բողոքեց այս խօսքին դէմ: Այն ատեն Յիսուս ըսաւ իրեն.

«Պետրո՛ս, հաւատա՛ որ այս գիշեր, դեռ աքաղաղը չխօսած, երեք անգամ պիտի ուրանաս զիս»:

«Եթէ մեռնիմ, նորէն չեմ ուրանար», պնդեց

Պետրոս:

Միւս աչակերտներն ալ կը բողոքէին ու կը վստահեցնէին Յիսուսը թէ բնաւ չպիտի բաժնուին իրմէ:

Չիթենեաց լեռնէն ելլելով, Յիսուս և իր աչակերտները հասան Գեթսեմանի անունը կրող պարտէզը: Յիսուս պահ մը առանձնացաւ Պետրոս, Յակոբոս և Յով-

հաննէս առաքեալներուն հետ, աղօթելու համար: Մինչ-
դեռ ինք կ'աղօթէր, երեք առաքեալները քնացած էին: Յիսուս արթնցուց զանոնք և ըստ թէ մեղաւորներու



Յիսուս կ'աղօթէ Գեթսեմանիէ մէջ

ձեռք պիտի մատնուի, որովհետև մատնիչը զալու վրայ է:
Տակաւին խօսքը չէր աւարտած, երբ քահանայապետին ու փարիսեցիներուն ծառաներէն բազկացած խումբ մը, որուն գլուխը անցած էր մատնիչ Յուդան, եկաւ զինքը շրջապատեց:

Յուդա իսկոյն Քրիստոսի մօտեցաւ և զայն համբու-
րեց, որովհետև իր հետեւորդներուն ըսած էր թէ համ-
բուրելիք մարդն է Յիսուսը:

«Յուդա՛, համբուրելի՞վ կը մատնես մարդու Որ-
դին», ըսաւ Յիսուս:

Այդ միջոցին Պետրոս առաքեալ սուրը քաշեց և
քահանայապետին Մաղգոս անուն ծառային աչանջը

կտրեց: Յիսուս սակայն հրամայեց որ սուրը պատեանը
դնէ, և ըսաւ. «Այն որ սուր կը վերցնէ, սուրով կը
պատժուի»: Յետոյ թողուց որ զինքը ձերբակալեն:



Յիսուսի ձերբակալութիւնը

Մինչդեռ Յիսուսը կը կապէին՝ տանելու համար,
աշակերտները վախերնէն թողուցին փախան, ճիշդ ինչպէս
որ Յիսուս գուշակած էր պահ մը սուսջ:

Հրահանգ. — Ի՞նչ պատահեցաւ ընթրիքէն վերջ և Յիսուս
ինչ գուշակեց. — Յուդա ի՞նչ կերպով գործարեց իր մատնու-
թիւնը. — Ի՞նչ կը նշանակէ սուր վերցնող սուրով պիտի պատ-
ժուի խօսքը. — Առաքեալները ի՞նչ ըրին Յիսուսի ձերբակալու-
թեան միջոցին և ինչո՞ւ:

27. ՄԱՏՆԻՉԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Հրեաները նախ Աննա քահանայապետին տունը տարին Յիսուսը: Աննա մէկ քանի հարցումներ ուղղեց անոր քարոզութեանց մասին, և Յիսուս ալ ըսաւ որ ինք ծածուկ բան մը խօսած չէ և թէ կրնայ լսողներուն հարցնել: Այդ միջոցին՝ քահանայապետին ծառաներէն մէկը ապտակեց Յիսուսը:

Աննա կապել տուաւ Յիսուսը և զրկեց կայիափա քահանայապետին: Այնտեղ շատ մը սուտ վկաներ խօսեցան Յիսուսի դէմ: Քահանայապետը հարցուց թէ ինք իրօք Աստուծոյ Որդին է: Յիսուս պատասխանեց թէ դուն ինքք ըսիր: Այն ատեն, քահանայապետը ըսաւ իր շուրջը գտնուողներուն.

«Այս մարդը հայնոյեց և դուք լսեցիք իր հայնոյութիւնը. ինչ պէտք է ընել զինքը»:

«Մահուան արժանի է, մահուան արժանի է», կը պոռային հոն գտնուողները, որոնք Յիսուսի վրայ յարձակեցան, երեսը թուքին, ծնծեցին ու ապտակեցին:

Այդ միջոցին Պետրոս դուրսի սրահը նստած էր. կի՞ն մը մօտեցաւ իրեն և ըսաւ թէ Յիսուսի հետեւորդներէն է. Պետրոս ուրացաւ: Յետոյ, նոյն տեղը, դեռ երկու անգամ ալ ուրացաւ Յիսուսի աչակերտ ըլլար: Յիսուս, դուրս ելած ատենը, անոր նայեցաւ, յիշեցնելով իր մարգարէութիւնը թէ առտու չեղած երեք անգամ պիտի ուրանայ զինքը: Աքաղաղը կը խօսէր այդ միջոցին: Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը, զղջաց և սկսաւ դառնապէս լալ:

Մատնիչ Յուդան ալ երբ լսեց որ Յիսուսը մահուան դատապարտեցին, զղջաց, զնաց քահանայապետներուն,

ևս տուաւ մատնութեան համար ստացած դրամը, և յուսահատութենէն անձնասպան եղաւ ինքզինքը կախելով:

Հրահանգ.— Յիսուս ինչպէս մահուան դատապարտուեցաւ.— Ինչ գուշակած էր Յիսուս Պետրոսի մասին և ինչ կերպով կատարուեցաւ այդ գուշակութիւնը.— Մատնիչ Յուդա ինչ կերպով մեռաւ.— Ե՞րբ մատնած էր Յիսուսը և ինչ պարագաներու մէջ:


28. ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌՁԵՒ

Յաջորդ օրը, առտուն կանուխ, Հրեաները Յիսուսը առաջնորդեցին Պոնտացի Պիղատոսին տոջեւ որ Հռոմայեցոց կողմէ երկրին կուսակալ կարգուած էր: Պիղատոս մէկ քանի հարցումներ ուղղեց Յիսուսի, տեսաւ որ մահու արժանի յանցանք մը չէ գործած և ուղեց ազատել զայն: Բայց Հրեաները բողոքեցին, ըսելով որ փողովուրդը կը մոլորեցնէ, կայսեր հարկ տալը կ'արգիւլէ և ինքզինքը թագաւոր կ'անուանէ:

Պիղատոս նորէն չէր ուզեր մահուան դատապարտել Յիսուսը: Երբ Հրեաներէն իմացաւ որ անիկա Գալիլիա ծնած է, իսկոյն զրկեց Հերովդէսի որ այդ միջոցին Երուսաղէմ կը գտնուէր, և որուն իշխանութեան սահմաններուն մէջ էր Գալիլիան: Հերովդէս վաղուց լսած էր Յիսուսի անունը և շատ ուրախացաւ զայն տեսնելով: Երբ Յիսուսի անունը և շատ ուրախացաւ զայն տեսնելով, որ սակայն չուզէր պատասխանել:

Այնտեղ էին նաև Յիսուսի թշնամիները, որոնք կը

Այդ ամէնը տեսնելով, Պիղատոս մեղքացաւ ու Յիսուսը նորէն իր առջև բերել տարով հարցափորձեց, և անգամ մըն ալ համոզուեցաւ որ անիկա մահուան արժանի յանցանք մը չէ գործած:



Յիսուս Գողգոթա կը տարուի

Սակայն Հրեաները դարձեալ կ'աղաղակէին թէ յանցաւոր է, ու կ'ըսէին. «Անիկա ինքզինքը թագաւոր կ'անուանէ, և ով որ թագաւոր եմ կ'ըսէ, կայսեր հակառակած կ'ըլլայ. իսկ զայն ազատողն ալ կայսեր թըշնամի»:

Պիղատոս հասկցաւ որ չպիտի կրնայ զանոնք համազօրել և թողուց որ տանին խաչին: Զինուորները՝ մահապարտներու յատուկ խաչափայտը Յիսուսի ուսը տուին:

և փողոցներէն անցընելով հանեցին Գողգոթա լեռը որուն վրայ խաչը պիտի հանուէր: Յիսուսի հետ այնտեղ կը տանէին նաև ուրիշ երկու մահապարտներ:

Սիմոն Կիւրենացի անուն մարդ մը դաշտը աշխատելէ վերջ ետ կը դառնար: Հրեաները տեսնելով թէ Յիսուս չի կրնար խաչը տանի, ստիպեցին Սիմոնը որ անոր յոգնած ատենը ինք կրէ խաչը:

Մեծ բազմութիւն մը ամբողջ ճամբուն վրայ հետեւեցաւ Յիսուսի. շատ կիներ սուգ մտած էին ու կ'ազօթէին: Յիսուս ըսաւ անոնց.

«Երուսաղէմի աղջիկներ, մի՛ լաք իմ վրաս, այլ լացէք ձեր և ձեր զաւակնե ուն վրայ»:

Եւ ճամբուն ընթացքին շատեր կը նախատէին Յիսուսը: Ուրախ էին մանաւանդ իր թշնամիները, տեսնելով որ պիտի խաչուի:


Հրահանգ. — Հրեաները ինչ չարչարանքներ տուին Յիսուսի և Յիսուս ինչ կերպով տարաւ զանոնք. — Պիղատոս ինչ ըրաւ Յիսուսը ազատելու համար — Յիսուս ինչպէ՞ս Գողգոթա տարուեցաւ. — Ո՞վ էր Սիմոն Կիւրենացի և Հրեաները ինչ ըրին անոր. — Յիսուս ինչ ըսաւ լացող կիներուն և ինչ հասկցնել ուզեց:

30. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Գողգոթայի գագաթը՝ ուզեցին լեղիի խառնուած քացախ խմցնել Յիսուսի: Յիսուս քիչ մը ճաշակեց, բայց չխմեց: Յետոյ խաչեցին զայն և իր աջ ու ձախ կողմերն ալ խաչուեցան միւս երկու մահապարտները: Պիղատոս խաչին վրայ դնել տուաւ հետեւեալ բառերը պարունակող արձանագրութիւն մը. «Յիսուս Նագովրեցի՝ Քազաւոր Հրեաներու»:

Ժողովուրդը միշտ կը ծաղրէր Յիսուսը, որ Աստուծոյ կը խնդրէր ներել զինքը չարչարողներուն, ըսելով որ չեն գիտեր ըրածնին:

Զինուորները վիճակով իրենց մէջ բաժնեցին Յիսուսի հագուստները: Խաչուած չարագործներէն մէկը կը հայնոյէր Յիսուսի ըսելով որ եթէ իրօք Քրիստոսն է թող փրկէ թէ՛ ինքզինքը և թէ՛ զիրենք: Միւսը զոջաց և Յիսուս անոր ըսաւ որ նոյն օրը իրեն հետ արքայութիւն պիտի մտնէ:



Յիսուսի խաչելութիւնը

Թէ իր մայրը Մարիամ Աստուածածինն է:

Խաչուելէն երեք ժամ վերջ՝ չորս դին խաւար տրեց, ամբողջ երեք ժամ արեւը ծածկուեցաւ: Յիսուս ազաղակեց. «Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր»: Յետոյ յայտնեց թէ ծարաւ է: Զինուորներէն մէկը սպունգ մը թաթխեց քացախի մէջ և տէգին ծայրը անցընելով քսեց Յիսուսի չրթունքին:

Վերջին չարչարանքն էր ատիկա որ Յիսուսի տրեւեցաւ: Քիչ ետքը՝ «Հայր, հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ» գոչեց և զլուխը խոնարհեցնելով հոգին աւանդեց:

Այդ միջոցին Երուսաղէմի Տաճարին վարագոյրը ինքնիրենով երկու կտոր եղաւ, զարհուրելի երկրաշարժ մը տեղի ունեցաւ, զերեզմաններ բացուեցան և արդարներ յարութիւն առին: Այնտեղ գտնուող հարիւրապետը՝ եղածները սեսնելով գոչեց թէ իրօք Աստուծոյ Ոյգի էր խաչեցեալը: Ժողովօրոյն ալ զարհուրած էր և մարդիկ, անարեւկ, կուրծքերնին ծեծելով ետ կը դառնային:

Հրահանգ. — Ինչպէ՞ս խաչուեցաւ Յիսուս. — Պիղատոս ի՞նչ արձանագրութիւն դնել տուաւ խաչին վրայ և ի՞նչ կը նշանակէր այդ արձանագրութիւնը. — Խաչը ինչի՞ կը ծառայէր Յիսուսի խաչուած ատենը և ի՞նչ դարձաւ. — Ի՞նչ պատահեցաւ Յիսուսի մեռնելէն վերջ:

31. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Յիսուսի մեռած օրը ուրբաթ էր: Հրեաները չուզեցին որ մինչև չարաթ Յիսուսի և աւազակներուն մարմինը խաչին վրայ մնայ, ու Պիղատոսէն հրաման առին զանոնք վար իջեցնելու:

Երկու աւազակները տակաւին չէին մեռած, զինուորները անոնց սրունքները կտորտեցին, մինչև որ մեռան: Իսկ Յիսուսի մարմինն չլպտան, տեսնելով որ մեռել է արդէն: Միայն զինուորներէն մէկը նիզակը անոր

կողը խոթեց, մեռած ըլլալը հասկնալու համար. և արիւն
աւ ջուր հոսեցաւ բացած վերքէն:

Յովսէփ Արիմաթացի անունով հարուստ մարդ մը
Պիղատոսի դիմելով հրաման խնդրեց Յիսուսի մարմինը



Յիսուսի թաղումը

Թաղելու: Պիղատոս՝ Յիսուսի մեռած ըլլալը ստուգելէ
վերջ՝ հրամանը տուաւ և Յովսէփի Նիկողիմոս անուն
ուրիշ մարդու մը օգնութեամբ, Յիսուսի մարմինը խա-
չէն վար առնելով խնկեց, պատանքի մէջ դրաւ և մօտը
գանձուող պարտէզ մը տարաւ: Այնտեղ՝ դեռ նոր շին-
ուած մարմարէ գերեզմանի մը մէջ թաղուեցաւ Յիսուս:
Յովսէփ և Նիկողիմոս քարէ ծանր կափարիչ մը դրին
գերեզմանին վրայ և հեռացան զացին:

Յիսուսի հետեւորդ կիները անոնց մօտն էին թաղ-
ման միջոցին: Երբ տուն դարձան, խունկ ու իւղ պատ-
րաստեցին՝ անոր մարմինը օծելու համար, բայց սպասե-
ցին որ նուիրական շարաթ օրը անցնի:

Շարաթ առտու, քահանայապետները և դպիրները
գացին Պիղատոսի և ըսին.

«Այն խարերան երբ ողջ էր, կ'ըսէր թէ մեռնելէն
երեք օր վերջ յարութիւն պիտի առնէ. հրաման րդէ որ
երեք օր պահպանեն անոր գերեզմանը, որովհետեւ կրնայ
ըլլալ որ առաքեալները գողնան մարմինը և լուր տարա-
ծեն թէ իրօք յարութիւն առաւ»:

Պիղատոս ալ ըսաւ որ ուզածնուն չափ զինուոր
առնեն և պահպանել տան գերեզմանը:

Քահանայապետները գացին կնքեցին Յիսուսի գե-
րեզմանը և զայն պահպաններու հսկողութեան յանձ-
նելով դարձան քաղաք:

Հրահանգ. — Ի՞նչ պայմաններու մէջ թաղուեցաւ Յիսուս. —
Ո՞վ թաղեց զինքը. — Քահանայապետներն ու դպիրները ի՞նչ
քանէ կը վախնային և ի՞նչ ըրին. — Ո՞ւր թաղուեցաւ Յիսուս և
այսօր ո՞ւր կը գտնուի անոր գերեզմանը:

32. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի մահուան վաղայաջորդ օրը, լուսնայու մօտ,
երկրաչարժ եղաւ նորէն, երկինքէն հրեշտակ իջաւ գե-
րեզմանին վրայ, կափարիչը մէկդի առաւ և նստաւ:
Քահանայաները, ատիկա տեսնելով, թողուցին փախան և
Յիսուս փառքով յարութիւն առաւ:

Յիսուսի հետեւորդ կիները նոյն առտուն խունկ ու
իւղ առնելով ճամբայ ելան դէպի Յիսուսի գերեզմանը:
Ճամբան կը հարցնէին իրարու թէ ինչպէ՞ս պիտի վերցնեն
ծանր կափարիչը: Բայց երբ գերեզմանին քով եկան,
զարմացմամբ տեսան որ կափարիչը գլորեր է:

Այդ միջոցին հրեշտակ մը իրենց իմացուց թէ Յիսուս յարութիւն առած է, և պատուիրեց .

«Գացէ՛ք ըսէ՛ք անոր աշակերտներուն թէ ինք իրենցմէ առաջ կը հասնի Գալիլիա ու հոն կը տեսնեն զայն» :

Կիները շուտով գերեզմանէն ելան, փութացին աշակերտներուն մօտ և Յիսուսի յարութիւնը ծանուցին ըսելով .

«Տէրը գերեզմանէն վերցուցեր են և չենք գիտեր թէ ուր է» :

Առաքեալները չուզեցին հաւատալ, Պետրոս ու Յովհաննէս վագեցին գերեզման, տեսան որ իրաւ է և եկան ըսին միւս առաքեալներուն թէ Յիսուս իրօք յարութիւն առած է :

Այդ կիներուն մէջ կը գտնուէր նաև Մարիամ Մագթաղենացին : Յիսուս անոր երեւցաւ և ինքզինքը յայտնեց : Երեւցաւ նաև միւս կիներուն : Եւ անոնք ալ եկան պատմեցին առաքեալներուն թէ իրենք անձամբ տեսան Յիսուսը, որով այլևս տարակոչս չմնաց թէ յարութիւն առած է :

Գերեզմանին քով պահապան դրուած զինուորները, քաղաք դառնալուն պէս պատմեցին Յիսուսի յարութիւն առած ըլլալը : Քահանայապետները՝ ծերերուն հետ խորհուրդ ըրին և մեծ քանակութեամբ դրամ տուին զինուորներուն, ըսելով .

«Լուր տարածեցէ՛ք թէ ձեր քնացած ատենը Յիսուսի աշակերտները եկան գողցան մարմինը» :

Այդ պէս ալ եղաւ և Հրեաները խաբուեցան :

Հրահանգ. — Յիսուս ինչպէ՞ս յարութիւն առաւ. — Ե՞րբ և ինչպէ՞ս կը տօնենք առ օրուան յիշատակը. — Յիսուս որո՞նց երեւցաւ. — Հրեաները ինչո՞ւ չեն հաւատար Յիսուսի յարութեան :

33. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Յարութիւն առնելէն վերջ՝ Յիսուս մէկ քանի անգամ երեւցաւ իր աշակերտներուն, նախ Էմմաուսի, յետոյ Երուսաղէմի և Գալիլիոյ մէջ : Թովմաս առաքեալ որ թերահաւատ էր, չէր ուզեր հաւատալ՝ երբ միւս աշակերտները կու գային իրեն կը պատմէին Յիսուսը տեսած ըլլալնին, ու կ'ըսէր թէ մինչև որ ինք անձամբ չտեսնէ, չպիտի հաւատայ :

Յիսուս ալ երևաց իրեն, ու թովմաս ծունկի եկաւ անոր առջև, գոչելով .

«Տէ՛րս և Աստուածս» :

Այն ատեն՝ Յիսուս ըսաւ .

«Թովմաս, դուն զիս տեսնելէ վերջ հաւատացիր . բայց երանի՛ անոնց որոնք չեն տեսներ ու կը հաւատան» : Վերջին անգամ Յիսուս Երուսաղէմի մէջ երեւցաւ իր աշակերտներուն և պատուիրեց թէ Երուսաղէմէն չելին՝ մինչև որ խոստացուած Հոգին Սուրբը չընդունին : Յետոյ զանոնք տարաւ Զիթենեաց լիւռը, օրհնեց և ըսաւ .

«Ինչպէս որ Հայրը զրկեց զիս, ես ալ ձեզ կը զրկեմ : Գացէ՛ք բոլոր ազգերուն մօտ, սորվեցուցէ՛ք անոնց ու մկրտեցէ՛ք զանոնք Աստուծոյ, Որդիին և Սուրբ Հոգիին անունով» :

Հաղիւ այս խօսքերը արտասանած էր, Յիսուս բարձրացուց ձեռքերը, վերջին անգամ մըն ալ օրհնեց իր աշակերտները, և անոնց աչուընդուն առջև սկսաւ կամաց կամաց երկինք համբառնալ :

Աշակերտները՝ զարմացած կը դիտէին անոր համբարձումը, երբ ամպ մը բոլորովին ծածկեց զայն և հրեշտակ մը երեւալով յայտնեց անոնց թէ Յիսուս օր մը նորէն փառքով աշխարհ պիտի գայ :

Ատոր վրայ, բոլորն այ երկրպագեցին և ուրախութեամբ լեցուած դարձան Երուսաղէմ:

Այն օրերը՝ առաքեալները մատնիչ Յուդա Իսկա-



«Գացէ՛ք, սովեցուցէ՛ք բոլոր ազգերուն»

րիովտացիին տեղ Յիսուսի եօթանասուն սչակերտներէն Մատթիւան առաքեալ ընտրեցին և լրացուցին իրենց թիւը:

Հրահանգ. — Ի՞նչ կը նշանակէ Յիսուսի կողմէ թովմաս առաքեալի ըսուած խօսքը թէ «երանի՛ անոնց որ չեն տեսներ ու կը հաւատան».— Զիթենեաց լերան վրայ ինչե՞ր պատահած էին.— Որո՞նք էին Յիսուսի առաքեալները և որո՞նք աշակերտները.— Քանի՞ հոգի էին առաքեալները և ի՞նչ էր իրենց անունը:



34. ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

Քրիստոսի համբարձումէն տասր օր ետքը, տասերկու առաքեալները, քանի մը բարեպաշտ կիներ, ինչպէս նաև Աստուածամայրը վերնատան մը մէջ ազօթք կ'ընէին, երբ յանկարծ քամիի նմանող ուժեղ ձայն մը լրսուեցաւ, վերնատունը լոյսով լեցուեցաւ և հրեղէն լեզուի ձեւով բոցեր երևեցան առաքեալներուն գլխուն վերեւ: Այդ միջոցին անոնք Սուրբ Հոգին ընդունեցին և սկսան զանազան լեզուներ խօսիլ:

Ժողովուրդը որ ձայնը լսելով հոն փութացած էր, անոնց խառն ի խառն լեզուով խօսիլը տեսնելով կարծեց թէ գինովցեր են: Բայց կալիս նաև օտարականներ, որոնք զարմացած էին տեսնելով որ առաքեալները իրենց լեզուով կը խօսին:

Այն ատեն, Պետրոս ելաւ ու քարոզեց, ըսելով որ Խաչին վրայ չարչարուելով մեռնողը Քրիստոս էր. յետոյ հրաւիրեց զանոնք որ ապաշխարեն ու մկրտուին: Նոյն օրը 3000 հոգի հաւատացին ու մկրտուեցան, վերջէն՝ շարունակ բազմացաւ անոնց թիւը:

Բոլոր անոնք որ դարձի կուգային, բարեպաշտութեամբ լեցուած, իրենց ստացուածքները կը բաժնէին շունչեղոյններուն: Անոնք ֆրիսոնեայ կոչուեցան ի յիշատակ Յիսուս Քրիստոսի:

Առաքեալները, անկէ վերջ Քրիստոսի անունով հրաչքներ կը գործէին: Երուսաղէմի տաճարին դրան մօտ ի մէջ կազ մը կար որ օր մը Պետրոս և Յովհաննէս ա-

աաքեալներէն ողորմութիւն խնդրեց. անոնք ալ ըսին թէ արժաթ և ոսկի չունին որ տան, միայն իրենց ունեցածը կրնան տալ: Յետոյ իրամայեցին անոր.

«Յիսուսի անունով, ել՛ր և գնա՛»:

Ու կազը ոտքի ելաւ և սկսաւ քայլել:



Առաջին Քրիստոնեաները իրենց ստացուածքը չունեցողներուն կուտային

Ամէն հաւատացեալ իր ունեցածը կը ծախէր և կը բերէր առաքեալներուն: Անանիա անունով հաւատացեալ մը և իր Սափիրա կինը որոնք իրենց ազարակը ծախելով դրամին կէսը պահած էին, մեռան վայրկենապէս և այդ կերպով գոտն իրենց խարդախութեան պատիժը:

Սկիզբները, առաքեալները կը հողային հաւատացեալներուն պէս ք եղած ուսեսան ու միւս առարկաները:

Վերջէն՝ երբ հաւատացեալներուն թիւը բազմացաւ, առաքեալները ընտրեցին եօթը հոգի որոնք սարխաւազ կոչուեցան, և անոնց յանձնեցին այդ գործը:

Հրահանգ. — Առաքեալները ինչպէս ընդունեցին Սուրբ Հոգին. — Ե՛րբ կը տօնենք այդ օրուան յիշատակը. — Ի՛նչպէս նշարէին առաջին Քրիստոնեաները. — Որոն՞ք կոչուեցան սարխաւազ և ինչո՞ւ հանար ընտրուեցան. — Ինչո՞ւ պատժուեցան Անանիա և իր կինը՝ Սափիրա:

35. ՀՍԼԱԾՍՆՔՆԵՐ

Քահանայապետները՝ առաքեալներու կատարած գործերը և յաղթարկին կազմէ անոնց նկատմամբ ցոյց տրուած սէրը անոնց լրարկացան, և արգիլեցին որ չը



«Պէտք է Աստուծոյ հնազանդել քան մարդոց»

քարոզեն Յիսուսի անունով: Անոնք սակայն կարեւորութիւն չտուին այդ արգելքին:

Ատոր վրայ, քահանայապետները բանտարկեցին առաքեալները, բայց հրեշտակ մը բանտին դուռը բանալով արձակեց զանոնք: Հազիւ բանտէն ազատած, առաքեալները վերադարձան Ճաճար և նորէն սկսան քարոզել:

Քահանայապետները կանչեցին զիրենք և յանդիմանեցին ըսելով.

«Մենք ձեզի չարգիլեցինք որ Յիսուսի անունով չքարոզէք»:



Փիլիպոս և Եթովպացի պաշտօնատարը

Առաքեալները սակայն պատասխանեցին թէ պէտք է Աստուծոյ հնազանդի քան մարդոց: Ատոր վրայ զիրենք քանակոծեցին ու տանջեցին:

Հրեաները չարունակեցին հալածել առաքեալները և քարկոծելով մեղացիք Ստեփաննոսը որ եօթր սորկաւազներէն մէկն էր, և որ հրեաց ժողովուրդը կը յանդիմանէր իր անհաւատութեան համար: Ստեփաննոս՝ մեռած ատենը կ'աղօթէր ըսելով.

«Տէր Յիսուս, քանոնց ըրածը մուք մի՛ համարեր և ընդունէ իմ հոգիս»:

Ստեփաննոս կոչուեցաւ Անթանոս, որովհետեւ «լիզակայ» նահատակ կը Նշանակէ, և Ստեփաննոս ալ Յիսուս

սի հաւատացողներուն մէջ առաջին նահատակը եղաւ:

Այն ատենները՝ Երուսաղէմ եկաւ Եթովպացի մեծ պաշտօնատար մը: Օր մը, մինչդեռ կառքին մէջ նստած մարդարէններու գիրքը կը կարդար, իրեն մօտ եկաւ Փիլիպոս սարկաւագ: Պաշտօնատարը զայն իր կառքը հրաշիրեց և սկսաւ խօսիլ Աստուծոյ վրայ: Փիլիպոս ալ անոր քարոզեց Յիսուսի վարդապետութիւնը:

Եթովպացին հաւատաց, ապաշխարեց, ու մկրտուելով ուրախ զուարթ իր հայնիքը վերադարձաւ:

Հրահանգ.— Առաքեալները ինչո՞ւ հալածուեցան. — Ի՞նչ պատասխանեցին քահանայապետներուն. — Ո՞վ էր Ստեփաննոս և ինչո՞ւ նախավկայ կոչուեցաւ. — Եթովպացի պաշտօնատարը ինչպէ՞ս հաւատաց Յիսուսի:

36. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Թէ՛ առաքեալները հալածողներուն և թէ՛ Ստեփաննոսը քարկոծողներուն մէջ կը գտնուէր Սօղոս անունով երիտասարդ մը: Անգամ մը, մինչդեռ Դամասկոս կ'երթար, Բրիտանոնները նեղելու, յանկարծ ձամբուն վրայ չլացողի լոյս մը փայլատակեց: Սօղոս սարսափած գետին ինկաւ, մինչդեռ ձայն մը կ'ըսէր.

«Սօղո՛ս, Սօղո՛ս, ինչո՞ւ կը հալածես զիս, ես եմ Նազովրեցի Յիսուսը»:

Այն ատեն Սօղոս հարցուց.
«Տէ՛ր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»:
Յիսուս ալ պատուիրեց որ ելլէ քաղաք երթայ, ուր իրեն պիտի յայտնուէր ինչ ընելիքը:
Սօղոս ոտքի ելաւ, բայց աչուրնները, բաց ըլլալով

հանդերձ, չէին տեսներ: Քովինները ձեռքէն բռնելով առաջնորդեցին Դամասկոս, ուր Յիսուսի Անանիա աշակերտը եկաւ գտաւ զինքը, և ձեռուընները քսեց աչքերուն, որով Սողոս սկսաւ տեսնել:

Անանիա մկրտեց Սողոսը, և անունը դրաւ Պողոս: Ժամանակ մը Պողոս Դամասկոսի Քրիստոնեաներուն մէջ մնաց, յետոյ անցաւ Երուսաղէմ ուր մեծ զարմանք պատճառեց իր Քրիստոսի հետեւիլը: Հրեաները շատ բարկացան տեսնելով որ Քրիստոնեաներու հալածիչը Քրիստոնեայ դարձեր է, և որոշեցին Պողոսը սպաննել, բայց անիկա յաջողեցաւ փախչիլ ու գնաց իր ծննդավայրը, Տարսոն:

Յետոյ շատ տեղեր շրջեցաւ, ամէն կողմ քարոզելով Քրիստոսի վարդապետութիւնները: Շատ լաւ խօսող մը ըլլալով, մեծ ազդեցութիւն կը գործէր, և շատեր հաւատացին ու մկրտուեցան իր քարոզութեանց շնորհիւ:

Երկար ժամանակ այդպէս շրջելէ և քարոզելէ վերջ, Պողոս առաքեալ բռնուելով տարուեցաւ Հռոմ. ներկայացաւ Ներոն կայսեր և յաջողեցաւ ինքզինքը արդարացնել: Բայց վերջէն՝ երկրորդ անգամ մըն ալ բռնուելով մահուան դատապարտուեցաւ, և միւսնոյն Ներոն կայսեր հրամանով գլխատուեցաւ Հռոմի մէջ:

Հրահանգ. — Ո՞րք էր Պողոս առաքեալ և ի՞նչ կերպով դարձեալ եկաւ. — Պողոս առաքեալ ի՞նչ օգուտ ունեցաւ Քրիստոնէութեան. — Հրեաները ինչո՞ւ բարկացան Պողոսի դարձը տեսնելով. — Ո՞րք մեռաւ Պողոս առաքեալ և ի՞նչ կերպով:

37. ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Առաքեալները, Յիսուսի պատուէրին համաձայն այս ու այն կողմ երթալով քարոզեցին միշտ և հետզհետէ քաղմացուցին Քրիստոնեաներու թիւը: Թաղէս ու Բարթողիմէոս առաքեալներն ալ Հայաստան եկան, և Հայթիւթիւթիւմէոս առաքեալներն ալ Հայաստան եկան:

Ամէն կողմ ուր կ'երթային, առաքեալները հալածանքի առարկայ կը դառնային: Իրենց քարոզած սիրոյ, եղբայրութեան, արդարութեան վարդապետութիւնները ժողովուրդին շատ հաճոյ կ'երեւային թէեւ, բայց բռնակալ թագաւորներ և անոնց արքանեակները այդ վարդապետութեանց հակառակ կեանք մը վարեցնուն, կ'աշտտութեանց հակառակ կեանք մը վարեցնուն, կ'աշտտութեանց հակառակ կեանք մը վարեցնուն: Այս պատճառաւ խտտեցին անոնց ծաւալումը արգիլել: Այս պատճառաւ Քրիստոնէութիւնը երկար ժամանակ ոճիր մը նկատուեցաւ, Քրիստոնեաները գաղանային չարչարանքներու ենթարկուեցան, վտարուեցան և սպաննուեցան:

Առաքեալները, որոնք այդ վարդապետութեանց քարոզիչներն էին, բնականաբար աւելի ատելի դարձան բռնակալներուն: Բոլորն ալ, բացի Յովհաննէսէն, մէջ բռնակալներուն: Բոլորն ալ, բացի Յովհաննէսէն, մէջ բռնակալներուն: Բոլորն ալ, բացի Յովհաննէսէն, մէջ բռնակալներուն:

Անոնցմէ չորսը՝ Մատթէոս, Մարկոս, Դուկաս, և Յովհաննէս, Յիսուսի գործերն ու վարդապետութիւնները գրեցին՝ իրենց անունով յիշուող Աւետարաններով:

Հռոմայեցւոց իշխանութեան օրով տասը մեծ հալածանքներու առարկայ դարձան Քրիստոնեաները, որոնց-

մէ շատեր սպաննուեցան ու խոշտանգուեցան այդ հա-
լածանքներու միջոցին : Վերջապէս՝ փրկչական թուական-
նին ՅԵՂԵՂ տարին՝ Մեծն Կոստանդիանոս կայսրը Բրիս-
տոնէութիւնը ընդունեց և հալածանքները դադարեցան :

Հրահանգ.—Ինչպէ՞ս մեռան Յիսուսի առաքեալները.—Ինչո՞ւ
կը հալածէին զանոնք. — Ի՞նչ բախտ վիճակեցաւ առաջին Բրիս-
տոնեաներուն. — Պետրոս առաքեալ ինչո՞ւ չըզկեց Յիսուսի պէ-
տաչուիլ.—Ո՞ր առաքեալները Հայաստանի մէջ տարածեցին Բրիս-
տոնէութիւնը.—Ի՞նչ է փրկչական թուականը :

38. ԵՐՈՒՍՏՂԷՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Բրիստոսի թուականին 70րդ տարին՝ Հրեաները ա-
պրտամբեցան Հռոմայեցւոց դէմ, որոնց յուժը չէին ու-
զեր տանիլ : Այդ ըմբոստութիւնը իրենց կործանման պատ-
ճառ պիտի դառնար : Մաս մը իմաստուն Հրեաներ ա-
սիկա հասկնալով թողուցին քաղաքը և հեռացան : Բրիս-
տոնեաներն ալ մեկնեցան ու գացին Սուրիա հաստատու-
եցան, որովհետև գիտէին թէ Յիսուս մարգարէացած էր
Երուսաղէմի կործանումը :

Հռոմայեցիք նախ ձախողեցան, բայց վերջէն՝ Վես-
բասիանոս կայսեր որդին՝ Տիտոս՝ չարունակեց Երուսա-
ղէմի պաշարումը, քաղաքին բոլոր ճամբաներն ու անց-
քերը գոցելով : Զատկի տօնին ատենը ըլլալով, ահազին
թուով Հրեաներ կը գտնուէին քաղաքին մէջ ուր չուտով
սով ծագեցաւ, և պաշարուած ժողովուրդը դարհուրելի-
թշուառութեան ու չարչարանքներու մատնուեցաւ : Շա-
տեր՝ մեռնողներու դիակները կ'ուտէին. մայր մը իր
գաւակը մեռցուց ու կերաւ :


Տիտոս մէկիկ մէկիկ գրաւեց ու քանդեց քաղաքին
պարիսպներն ու ամբարտակները, և ի վերջոյ հասաւ մինչև
միջնաբերդը որուն մէջ կը գտնուէր Տաճարը : Շուտով
քաղաքը ինկաւ իր ձեռքը, թէև մեծ մասամբ այրեցաւ
ու կործանեցաւ : Հռոմայեցի զինուոր մը բռնկցուց նաև
Տաճարը և Տիտոս ի զուր աշխատեցաւ հոյակապ շէնքը
աղատել : Հակառակ իր ջանքերուն, ամբողջովին այ-
րեցաւ, և այսպէսով իրականացաւ Յիսուսի մարգարէ-
ութիւնը :

Երուսաղէմի պաշարումը տևեց եօթ ամիս : Հռո-
մայեցիք՝ մէկ միլիոն հարիւր հազար Հրեայ սպաննեցին
այս պաշարման միջոցին և 79,000 Հրեայ ալ գերի տարին :

Հրահանգ — Ի՞նչ կը նշանակէ լուծը տանիլ.—Երուսաղէմ ե՞րբ
կործանեցաւ և ինչո՞ւ.—Բրիստոնեաները ինչէ՞ն հասկցան թէ պի-
տի կործանի ու հեռացան անկէ.—Ո՞վ կործանեց Երուսաղէմը և
Հրեաները ի՞նչ կորուստ տուին այդ առթիւ :



Յ Ա Ն Կ



Շ առ ա զ ար ա ն

էջ
Ե

Ս. Մ Ա Ս. — Հ Ի Ն Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Ս. Ա Շ Ե Ա Ր Հ Ի Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Մ Է Ն Մ Ի Ն Չ Ե Ի
Բ Ա Բ Ն Լ Ո Ն Ի Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ա Շ Ի Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

1. Ստեղծագործութիւնը	7
2. Դրախտէն արտաքսումը	9
3. Կայէն և Աբէլ	12
4. Զրհնեղեղը	13
5. Բաբելոնի աշտարակը	16

Բ. Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ն Ե Ր Ը

6. Աբրահամի կոչումը	18
7. Աստուծոյ խոստումը	19
8. Սողոմ Գոմարի կործանումը	21
9. Իսահակ	23
10. Իսահակի ամուսնութիւնը	25
11. Իսահակի զաւակները	27
12. Յակոբ Լաբանի մօտ	29
13. Յովսէփ	31
14. Յովսէփ Եգիպտոսի մէջ	34
15. Յովսէփ և իր եղբայրները	37
16. Յակոբի և Յովսէփի մահը	39

Գ. Ի Ս Ր Ա Շ Ն Լ Ա Ց Ի Ո Ց Ե Գ Ի Պ Տ Ո Ս Է Ն Ն Լ Ի Բ Ը

17. Մովսէս	41
18. Աստուած կը խօսի Մովսէսի	43

19. Իսրայելացւոց ազատումը	45
20. Կարմիր ծովէն անցքը	46
21. Անապատին մէջ	48
22. Տամարաւանեայ պատուիրանքը	50
23. Իսրայելացւոց պատիժները	52
24. Մովսէսի մահը	55
25. Աւետեաց երկիրը	56

Գ. Գ Ա Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ը

26. Գէդէոն	59
27. Իսրայելացիք նորէն զերի	61
28. Սամիսոն Փղշտացւոց դէմ	62
29. Հուր	64
30. Հեղի քահանայապետը	66
31. Սամուէլ	68

Ե. Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ը

32. Սաւուղ	71
33. Դաւիթ	72
34. Գողիաթի մահը	74
35. Սաւուղի մահը	76
36. Դաւիթ թագաւոր կ'ընտրուի	78
37. Դաւիթի մահը	81
38. Սողոմոն	83
39. Թագաւորութեան բաժանում	85
40. Յերոբոամ և իր յաջորդները	87
41. Եղիսէ մարգարէն	89
42. Իսրայելի կործանումը	91
43. Յուդայի թագաւորութիւնը	93
44. Եզեկիա	94
45. Եզեկիայի յաջորդները	96
46. Բաբելոնի զերուլթիւնը	97

Զ. ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՋ

	Էջ
47. Նաբուգոդոնոսորի երազը	100
48. Բաղդասարի խնջոյքը	102
49. Դանիէլ և առիւծները	103
50. Գերութենէ դարձ	105
51. Երուսաղէմի վերականգնումը	106
52. Եսթէր	109
53. Եսթէրի յաղթանակը	110
54. Մակաբայեցիք	113
55. Հերովդէս	115

Բ. ՄԱՍ. — ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

**Ա. ԳՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԳԷՆ ՄԻՆՉՅՈՒ
ԳԱՐՈՋՈՒԹԻՒՆԸ**

1. Յովհաննէս Մկրտչի ծնունդը	117
2. Աստուածածնայ աւետումը	118
3. Յիսուսի ծնունդը	119
4. Մոգերը	121
5. Յիսուսի ընծայումը	123
6. Յիսուս տաճարին մէջ	126
7. Յիսուսի Մկրտութիւնը	127

Բ. ԳԱՐՈՋՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

8. Յիսուսի առաքեալները	130
9. Տէրունական աղօթքը	131
10. Սերմանացանին առակը	134
11. Յիսուս և մանուկները	136
12. Յիսուս հացերը կը շատցնէ	137
13. Անխիղճ ծառան	139
14. Բարի Սամարացին	141
15. Բարի հովիւը	143

	Էջ
16. Անտուսի որդին	145
17. Փարիսեցին ու մարգաւորը	147
18. Հաղարոսի յարութիւնը	148
19. Երախտագէտ բորոսը	150
20. Զաքէոս	152
21. Յիսուս Երուսաղէմի մէջ	154
22. Յիսուս Տաճարին մէջ	156
23. Յուդա մասնիչ	158
24. Խոնարհութեան դասը	159
25. Ընթրիքը	161
26. Յիսուսի ձերբակալութիւնը	163
27. Մատնիչին վախճանը	166
28. Յիսուս Պիղատոսի առջեւ	167
29. Յիսուսի չարչարանքները	169
30. Յիսուսի խաչելութիւնը	171
31. Յիսուսի Թաղումը	173
32. Յիսուսի յարութիւնը	175
33. Յիսուսի համբարձումը	177

Գ. ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

34. Առաջին Գրիստոնեաները	179
35. Հալածանքներ	181
36. Պօղոս առաքեալ	183
37. Առաքեալներուն վախճանը	185
38. Երուսաղէմի կործանումը	186



« Ազգային գրադարան »

NL0145988

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԸԸՃԵԱՆ

ԳՐԱՎԱՅԱՌ-ՇՐԱՏԱՐԱԿԻԶ

Թիւ 25, Չափնաֆճրդար, Կ. Պոլիս

	Ղրջ.
Նոր Ծաղկեփունջ, Ընթ. Մանկ. Ա. Մաս Մ. Սեպուհ	1.25
» » » » Բ. » » »	2.50
Դայրայչիկ, Մանկապարտէզ Ա. Մաս Ա. Անտոնեան	—
» » » » Բ. » » »	4.—
Գանձարան Ընթերցարան, Տարրական Ա. Անտոնեան	5.—
» » Միջին » »	8.—
» » Բարձրագոյն » »	12.50
Բարոյագիտութիւն, Միջին, Արշակունհի Թէօդիկ	8.—
Քաղաքական Տնտեսագիտութիւն, Մ. Յովհաննէսեան	5.—
Սրբազան Պատմութիւն Հին եւ Նոր Ուխտի, պատկ.	5.—
Հին Ուխտի, պատկերազարդ	5.—
Նոր Ուխտի, պատկերազարդ	5.—
Քրիստոնեական Բարոյականք, Մուշեղ Եպիսկոպոս	5.—
» Վարդապետիք. » »	5.—
Ֆրանսերէն Քերական Մ. Յովհաննէսեան	1.50
Երկինք երկիր, Լորտ Պայրըն Սրբազան Ողբերգութիւն	2.—
Դրախտի ընտանիք, Խրիստեան Հայրիկ	7.—
Ժիրայրի կենսագրութիւնը, Գ. Վրդ. Ասլանեան	6.50
Այրած ֆնար Բիսկեանի մոխիրներուն Լ. Էսաճանեան	2.50
Ազատութիւն, Հ. Արամեանց	1.50
Բռնակալիկ մահը » »	3.—
Հերոսունիկներ, » »	3.—
Փայտասականք, » »	2.—
Այ չեւ կրեար ղեզ (Մահուան Պատիժ կախաղաններու)	
Լ. Թոյսթոյի Թրգմ. Ն. Թոթվեան	1.50